Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ԱՐՇԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԱՊՐԻԼ 24

ԹԵՀՐԱՆ, ՏՊԱՐԱՆ «ՄՈԴԵՐՆ»
1965

Այս հատորը լոյս է տեսնում թեհրանահայ ազնւասիրտ ազգային պրն. ԹՈՎՄԱՍ ԹՈՎՄԱՍԵԱՆԻ նիւթական աջակցութեամբ, ի յիշատակ իր ծնողների՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ եւ ՅԱՍՄԻԿ ԹՈՎՄԱՍԵԱՆՆԵՐԻ,

Այս առթիւ յայտնում ենք մեր ջերմ շնորհակալութիւնները յարգելի նուիրատուին։

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

1965 թւականը երկու կաթողիկոսների սրբատառ կոնդակներով յայտարարուեց Բիւրաւոր Նահատակների յիսնամեակի տարի։ Երկու կաթողիկոսներն էլ պատեան ձեւով բնութագրեցին մեր մէկ միլիոն նահատակների ոգեկոչումը եւ համայն հայութեան կոչ ուղղեցին վայելուչ կերպով սգահանդէսներ կազմակերպելու եւ հրապարակային դասախօսութիւններով, ինչպէս նաեւ Եղեռնը իմաստաւորող հրատարակութիւններով անմոռանալի կապ ստեղծելու նահատակների յիշատակի հետ, ինչպէս նաեւ ողջ հայութիւնը արթուն պահելու ազգային իրաւունքների ստացման եւ պատեան ձեւով հետապնդման նանապարհի վրայ։

Արդարեւ, յիսնամեակի տօնակատարութիւնը լաւագոյն հանգրուանն է յիսուն տարիների ընթացքին ձեռք բերուած մեր նրաւանումների փառատօնը կատարելու եւ ազգային դատի լաւագոյն ձեւաւորման, բանաձեւումի եւ հետապնդումի համար։ Հակառակ այն իրողութեան, որ յիսնամեակի ոգեկոչումը եւ հայկական դատը միմեանց հետ սերտ կապ ունենալով հանդերձ անջատ հարցեր են, նկատի ունենալով որ յիսուն տարիներ առաջ արդէն իսկ գոյութիւն ունէր հայկական խնդիրը, սակայն եւ այնպէս սքանչելի առիթ է հաւատական ուխտատեղով, իմաստուն ղեկավարութեամբ, օտար երջանկներում վերյիշումներ կատարելու այն դառն իրողութիւնների մասին, որոնց ենթարկուեց ողջ հայութիւնը, եւ այդ կերպով միջազգային կացութեան մէջ

արքուն վիճակի մէջ պահելու մեր արդար իրաւունքները։

1965 թուականի տօնակատարութիւնների համար արդէն իսկ բոլոր հայաբաս քաղաքներում յանձնախմբեր կեանքի կոչուեցին, պատրաստ եւ վայելուչ ձեւով սգահանդէսներ կազմակերպելու համար։ Ամէն կողմ դասախօսութիւնների եւ հրատարակութիւնների միջոցով տենդագին գործի լծուեցին ձեռնհաս անձինք՝ Հայկական Դատն ու Եղեռնի պատմութիւնը ծանօթացրնելու համար մատաղ սերնդին։ Նոյն նպատակով մենք եւս մեր համեստ բաժինն ենք բերում, ժողովրդական խաւերին ծանօթացնելու համար Մեծ Եղեռնը իր ընդհանուր գծերի մէջ։ Մենք ափսոսել ենք առաւելաբար նահատակների ոգեկոչումը կատարել եւ նրանց յիշատակը միշտ վառ պահել՝ մեր հոգու եւ նրանց միջեւ կենդանի կապ ստեղծելու համար։ Անշուշտ, այլ հրատարակութիւններ աւելի վաւերական կը լինեն եւ ըստ էութեան հարցը կը բացատրեն ժողովրդական լայն զանգուածներին եւ պատշաճ առաջարկութիւններ կանեն։ Մենք նման յաւակնութիւններ չունենք։ Մեր արածը խորհի մէջ ժողովրդական ձեռնարկ է, վերյիշումներ կատարելու այդ բոլոր դառն իրողութիւնների եւ մեր բազմաթիւ կորուստների մասին։

Անշուշտ, հնարաւորական պիտի լինէր, եթէ երբեմն հնարաւոր լինէր պատկերել, թէ անցնող յիսուն տարիների ընթացքում ի՞նչ նւաճումներ կատարեց Սփիւռքում ցրուած հայ ժողովուրդը եւ այդ ճշմարտապէս պիտի յատկանշէր հայ ժողովրդի փառաբանը։ Աւելի հնարաւորական պիտի լինէր, եթէ երբեմն հայոց մամուլի սիւնակներում «Ազգային կեանքը» եւ «Թուրք մամուլ» տարազի ներքոյ երեւացող արձագանգի համեմատական հրատարակութիւնը կատարուէր անցնող այս վերջին յիսուն տարիների ընթացքում։

Այս կերպով, համեմատական ցուցակներով ի յայտ կը գային երկու ազգերի հոգեկան, մտային եւ բարոյական արժանիքները, ինչպէս նաեւ մեր կատարած նւաճումները։ Վերոյիշեալ ափսոսանքը հնարաւորեմբ կարելի է կատարել, թերթելով արտասահմանեան մամուլի հաւաքածոները։

Յուսով ենք, որ մեր այս ափսոսանքով մեր համեստ բաժինը բերած կը լինենք մեր թեմում կատարուող յիսնամեակի ոգեկոչումի ափսոսանքին եւ ժողովրդին ծանօթացրած կը լինենք յիսուն տարիներ առաջ կատարուած դառն իրողութիւններին։

Լացի, ողբի երգեր չենք հիւսում այլեւս. փառաւորելու եւ հպարտանալու սքանչելի իրողութիւններ եւ երեւոյթներ մեծապէս ամրապնդում են մեզ հայրենիքից մինչեւ հեռաւոր գաղութները, սգասօնը փառատօնի վերածելու համար։

Ապագայի վառ յոյսերով, սքանչելի արշալոյսների հեռանկարով ոգեկոչում ենք յիսնամեակը։

Անպայմանօրէն, մի օր, մենք էլ Արարատին կը նայենք ոչ թէ «նայելու եւ անցնելու» համար, այլ այնտեղ մնալու, մեր պապենական հողերի ամբողջութիւնը հրեւագին ըմբոխնելու եւ հայկազեան դրօշը պարզելու համար։

Նոր Արարատ, նոր տապան, մէկ միլիոն հայերի արեամբ թաթաւուն։

ԱՊՐԻԼԵԱՆ ՔՆԱՐ

Զարկին ներքեւ ուռնակներուն՝
Ցիտողութեան կը վերբերուի
Անցեալը մութ մեր պատմութեան,
Հարուածիս տակ կը պատռտին
Սուգերն ամբողջ մեր անցեալին,
Որոնց վրայ ժամանակին
Թանձր փոշին ի զուր կ'իյնայ
Ու կը բաժնէ իմ աչքերէս,
Հարուածիս տակ մարմին կ'առնեն
Արիւնահոս էջերը մեր,
Որոնց վրայ աչքն արցունքոտ
Կը տարածուի մեր Արարչին
Ծածկոց մ'ինչպէս սրկիհին շուրջ,
Նայուածքիս տակ կը բլրանան
Գանկերն անթիւ մեռելներուն,
Որոնց վրայ կը ծածանի
Դրօշ մ'ինչպէս պատառը վեհ
Հազար-հազար վրէժներուն,
Նայուածքիս տակ արդ կը ցցուին,
Արիւնոտած սիրտերը մեր

Դիւցազներուն, որոնց շուրթին
Դեռ կը հնչէր երգը հնչեղ,
Կանչը արի ազատութեան,
Զարկերուն հետ ուռնակներու
Կ'ըլլամ մօտիկ մեր անցեալին,
Որուն մէջէն համերգ մ'ինչպէս
Կու գայ ինծի կեանքը տրխուր,
Կամքը պողպատ մեր պապերուն,
Կարծէք ըլլար անցեալը մեր՝
Քրնար մը մեծ, լարերն որուն
Կը հեղեղեն ճիչերն անհուն
Մեր հին՝ու նոր մեռելներուն,
Ու հարուածիս տակ կ'արթննան
Հազար վրէժ, հազար՝ իղձ,
Որ դարերով եղան զայրոյթ
Ու սփոփանք մեր պատմութեան.

Ականջ դրէք,
Արդարութեան, խաղաղութեան,
Դրօշներուն՝ նայող մարդեր,
Գարուն էր, հարսը շեղ
Բընութեան, երբ կը ծաղկէին
Արտերը՝ ձեր, լի արեւով,
Ու սիրտերէն կ'անցնէր կեանքի
Դողը կախարդ նման հողին,
Որու կողին կը հասուննար
Ոսկին հացին.
Ծառերն ամբողջ կը կախէին
Պտուղն իրենց երակներուն.
Երդիքներէն երգը դիւթեղ
Կը բարձրանար երկինքներու,
Մարդեր զբաղած կը քաղէին

Ցանուած ոսկին երջանկութեան.
Սեղանին շուրջ բաժակ-բաժակ
Կը պարպուէր դիւթեղ գինին,
Ու կը բերէր հնչեցանքն անոյշ
Վրան բոլոր մեղկ սիրտերուն,
Ու երփներանգ բընութեան մէջ
Սէրով, խինդով կեանքը կ'անցէր.

Անդին սակայն, Տիեզերքի
Մէկ անկիւնին,
Ազգ մը ամբողջ կը ջարդուէր
Ձիրանին տակ մարդ-գազանին.
Գազանացած բազմութիւններ
Խիղճը իրենց յանձնած սուրին,
Բլուր-բլուր կուտակեցին
Գանկերն անթաղ մեռելներուն.
Ճիչերն աղի լքեալներուն
Սուրին՝ տակէն, հուրին մէջէն
Բարձրացան՝ վեր աղերսելու
Եհովային՝ աջը զօրեղ.
Դուռն էր սակայն, փակ երկինքին,
Որու ետին՝ դեռ կը՝ նիրհէր
Գութը ոսկի մեր Արարչին.
Մանուկ ուչ՝ ծեր երկու սեռէ
Եղան նոխազ. յանցա՞նքն իրենց.
—Հայ են ծընած.

Խրլեակներու կարաւաններ
Անապատի կրակին մէջ,
Ու սուրին տակ բռնաւորին
Կը տանջուէին իբրեւ դալար
Ճիւղեր ծառի կրակին դէմ.

Երկիր մ'ամբողջ կը խեղդուէր
Լիճերուն մէջ արիւններու։
Երկիր մ'ամբողջ կ'ամայանար,
Գազաններուն իսկ անյարմար
Աւերակներ կուսակելով։
Նորէն սակայն կը փերուէր
Սուրն արիւնոտ թշնամիին,
Ապրիլին մէջ, կամքին առջեւ
Մեր պապերուն, որոնք հազար
Մահերէ եսք գիտցան ապրիլ։
Այսօր անոնք սուգէն անդին
Ուսած քնարը Ապրիլի
Դարձեալ կ'երգեն անմահութեան
Տաղը կախարդ, վաղուան անոյշ
Դափնիներով բերկրապատար։

Զայնին վրայ սա քնարին
Ցաւն է ինկած մեր զոհերուն,
Երիտասարդ իջած հողին,
Հոգին է ողջ մեռելներուն...,
Որուն վրայ կը յամենայ
Վճիռը սուրբ արդարութեան։

* * *

Հընչէ՛ քնար...
Թող թելերուդ մէջ թանձրանայ
Վրէժն ամբողջ մեր դարերուն.
Հնչիւններէդ մարմին առնեն
Հողին ինկած ոսկերոտին
Մեր հայրերուն, նման հունտին
Վերընձիւղող հողերուն մէջ։

Հնչէ՛ քնար...
Զայներուդ հետ թող փարատին
Սուգն ու մոայլ մեր սիրտերուն։
Սափոր-սափոր բաժնես մեզի
Արիւնն ազատ մեր պապերուն,
Որոնք սուրին, քաղցին դիմաց,
Կնճիռին դէմ բռնաւորին,
Խոյացան միտ՝ ազատութեան
Դափնիներով պսակելու
Էջը վսեմ մեր պատմութեան։

Հնչէ՛ քնար...
Բազմահնար թելերդ ճկուն
Ամուլ հողին, մեր սիրտերուն
Պիտի բերեն սուրբ մայրութիւն։
Ժայռերն ամբողջ պիտի դառնան
Շէն ու աւան եւ մրգաստան,
Սիրտերը մութ սափոր ոսկի,
Մոխիրներէն վերածնելու
Անծայրածիր լեռնադաշտեր
Կենդանութեան ու բարիքի։
Ու բազուկներ պողպատացած,
Պիտի յանկարծ անտառանան
Ընդդէմ անոնց, որ կը դաւեն
Իր վերելքին հազարամեայ։

Հնչէ՛ քնար...
Առջիդ ահա կը բարձրանայ
Վաստակն արդար Հայրենիքին.
Դաշտեր անբեր ոյժին դիմաց
Մրջակներուն, կ'ըլլան յղի
Ծով բարիքներ հեղեղելու

Ծարաւացած հոգիներու,
Սփիւռքի մէջ կը խմբուին
Քարէն, թուղթէն յառաջ եկող
Շուրջը ոսկի Մրջակոյթին։

Հնչէ՛ քնար... հնչէ՛ ուժգին...
Թող հոգիները հրնուին
Սեւեր հագած հազարներու,
Ըլլան պատրաստ ըմբոխնելու
Այգն անաղօս մայիսներու,
Որուն համար հեղեղի պէս
Մեր պապերուն երակներէն
Արիւնը սուրբ հոսեցաւ միտ։

Հնչէ՛ քնար...
Աղերսելու խաղաղութիւն
Ու բարութիւն վրան բոլոր
Այրիացած երկիրներուն։
Թող քու կանչէդ մութ սիրտերուն
Իջնէ պսակ, կրտոր մը գութ,
Կախարդելու մարդերն ամբողջ
Բերկրանքներու սեղանին շուրջ։
Մարդեր ըլլան իրար եղբայր,
Որուն համար եկաւ աշխարհ
Տիեզերքի Աստուածորդին։
Հնչէ՛ քնար, հնչէ՛ ուժգին
Տիեզերքն ողջ քու կանչերէդ
Պիտի դառնայ համանուագ...։

ԱՐՏԱԿ ԱԲԵՂԱՑ

1953

ՈՒՐԻԱԳԾԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

«Յուր լիցին քեզ աւուրքն յաւիտենից, իմացարուք զամսն ազգաց յազգս. հարց ցիարսն քո եւ պատմեսցեն քեզ, եւ ցծերս քո, եւ ասացեն քեզ»։

(Բ. ՕՐԻՆԱՑ, ԼԲ 7)

ՈՒՐԻԱԳԾԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ *)

ԺԱ դարի սկիզբը սելջուկեան Թուրքերը զանգուածային գաղթով արշաւանքի սկսեցին։ 1040 Թուին, Մերվի ճակատամարտից յետոյ, գրաւեցին Պարսկաստանը։ Բազրատունեաց Թագաւորութիւնը նրանց բազմաթիւ յարձակումները ետ մղեց։ Բիւզանդիոնի սխալ քաղաքականութեան հետևանքով Հայաստանը Թուլացաւ և 1064 Թուին սելջուկեան Թուրքերը ներխուժեցին Հայաստան և գրաւեցին Անին։ Այնուհետև, Մանազկերտի ճակատամարտից յետոյ, յունական Փոքր Ասիան անցաւ Թուրքերի տիրապետութեան տակ։

ԺԳ դարին մոնղոլական արշաւանքի հետևանքով սկսեցին հայկական զանգուածային արտագաղթերը։ Արծրունի իշխանը ԺԱ դարի սկզբնաւորութեան վասպուրականը յանձնեց Բիւզանդիոնին և փոխարէնը ստացաւ Սեբաստիան։ Իսկ հայ բնակչութեան մեծ մասը, ըմբոստացած օտար տիրապետութեան դէմ, իր իշխանների ղեկավարութեամբ, ուղղեց Կիլիկիայի լեռները և այնտեղ ստեղծեց հայկական մի նոր պետութիւն։ Հայերը գաղթեցին նաև Ղրիմ ու Մոլդաւիա։ Երբ Թաթարները գրա-

*) Ներկայացնում ենք քաղուածաբար։

ուեցին Ղրիմը, հայերի մէկ մասն անցաւ Լեհաստան, ուր և դարերի ընթացքին ձուլուեց։

Օսմանեան Թուրքերը (տաճիկներ) իրենց նուաճումներով, ամենից նշանաւորը հանդիսացան Թուրանական ժողովուրդների մէջ և երկու դարի ընթացքին ստեղծեցին մեծ կայսրութիւն։ 1453 Թուին արդէն տէրն էին Բիւզանդիոնի հսկայ կայսրութեան։

ԺԶ. դարին տաճիկները գրաւեցին Հայաստանը։ Նրանց հսկայական կայսրութիւնը տարածուեց Վիեննայի դռներից մինչև Թաւրիզի մերձակայքը։ ԺԷ. դարին Օսմանեան կայսրութիւնն արդէն տկարութեան նշաններ ցոյց տուեց և նուաճուած երկրները փորձեր կատարեցին ազատագրուելու համար նրանց տիրապետութիւնից։

Ռուսաստանի զօրացումը, Մեծն Պետրոսի և Կատարինէ Բ. ի գործունէութիւնը գլխաւոր պատճառը հանդիսացաւ տաճիկների աստիճանական տկարացման։ Ֆրանսիական յեղափոխութիւնը Ռուսիոյ և Աւստրիոյ ուժերը շեղեցին իրենց նպատակից և Օսմանեան կայսրութիւնը փրկուեց անդամահատումից։ Այս անգամ անգլիացիք նեցուկ կանգնեցին Օսմանեան կայսրութեան և ամբողջ մի դար ապահովեցին նրա գոյութիւնը։

Ռուսիան ամէն գնով ուզում էր Պոլիս թափանցել, նախ որպէս Բիւզանդիայի կայսրութեան ժառանգորդ և յետոյ նեղուցների մէջ հաստատուելուց յետոյ պիտի կարողանար Բալկանեան թերակղզու, Փոքր Ասիայի և մինչև իսկ արևելեան Միջերկրականի վրայ ազդեցութիւն ունենալ։ ԺԹ. դարում Ռուսիան իր այս ծրագրի դէմ գտաւ Անգլիոյ և Աւստրօ-Հունգարիոյ դիւանագիտութիւնը և ոյժը։ ԺԹ. դարում Ֆրանսիայի իշխանութիւնը փոխեց իր քաղաքականութիւնը, օժանդակեց յոյներին անկախութիւն ձեռք բերելու համար, ընդդէմ տաճիկների, օժանդակեց Եգիպտոսին և 1862 Թուին Նապոլէոն Գ. միջամտեց ի նպաստ Զէյթունի հայ լեռնականների, որպէսզի նրանք պահեն իրենց կիսանկախ համայնքի վիճակը։

Այսպէս, Օսմանեան կայսրութեան անդամահատման քաղաքականութեան հետևանքով և միւս կողմից կայսրութեան տկարացման պատճառով հրապարակ եկաւ Արևելեան Հարցը։

Օսմանեան լուծի տակ գտնուող քրիստոնեայ ժողովուրդներն ստրկական վիճակի էին մատնուած, զրկուած էին ամէն տեսակի իրաւունքներից, շատանում էին կեղեքումները և չկար կեանքի ապահովութիւն։ Այս վիճակին էին մատնուած գլխաւորաբար բուլգարները, յոյները և հայերը, չնայած որ կայսրութեան ամենից աշխատասէր զանգուածն էին ներկայացնում։

Օսմանեան կայսրութիւնն իրեն ենթակայ ժողովուրդներին գոհացնելու համար յոացաւ բարեկարգութիւնների մի ծրագիր, բոլորին ներքին ազատութիւն խոստանալով, բայց բոլոր խոստումներն էլ ապարդիւն մնացին։

ԺԹ. դարում տեղի ունեցաւ Բալկանեան քրիստոնեայ ժողովուրդների ազատագրումը Օսմանեան լուծից։ Հերոսական պայքարներ, անձնազոհութիւններ, մեծ պետութեանց, մանաւանդ Ռուսիոյ միջամտութեամբ։ Առաջին իսկ առիթով սերբերն էին, որ 1804—1812 Թուականների շարունակական ապստամբութիւններով ձեռք բերեցին իրենց ազատութիւնը։ 1827 Թուին յոյները, ի գին մեծ զոհողութիւնների, վերագտան իրենց անկախութիւնը։ 1856 Թուին ռումանական իշխանութիւններն օգտուելով առիթից, ձեռք բերեցին իրենց անկախութիւնը։

Այդ ժամանակաշրջանում հայերն ևս ձգտեցին անկախութեան և վերոյիշեալ ազգերի նման փորձեցին ձեռք բերել ինքնավար իշխանութիւն։

Բայց հայկական անկախ մի պետութեան ստեղծումն անկարելի էր։ Նախ ցարական կառավարութիւնը նեցուկ պիտի չկանգնէր, և երկրորդ, պայմանները ձեռընտու չէին այլ օժանդակութիւններ ակնկալելու։ Այս իսկ պատճառով հայերը բարենորոգումներ պահանջեցին օսմանեան կայսրութիւնից։ Ներկայացուած բոլոր պաշտօնական պահանջները բարենորոգումների հարց էին արծարծում։ Դեռևս ինքնավար և անկախ Հայաստանի խօսք չկար։

1877—1878 թւի ռուս-տաճկական պատերազմի նախօրեակին Տաճկահայաստանի հայերի վիճակը շատ անմխիթար էր։ 1862-ին տեղի ունեցան Տաւրոսի շրջանների ջարդերը։ Խրիմեան Հայրիկի պատրիարքութեան շրջանում բարենորոգումների հարցն է՛լ աւելի արծարծուեց։ Բայց ստիպումների պատճառով Խրիմեանը հրաժարուեց պատրիարքութիւնից։

Տաճկահայաստանում բռնութիւնն ու կողոպուտը շարունակւում էին։ Քիւրդերը շարունակ կեղեքում էին հայերին։ 1875-ին տաճիկ խուժանը կրակի տուաւ Վանի հայկական թաղամասը։ Իսկ ռուս-տաճկական պատերազմի ընթացքին Բայազէդի, Ալաշկերտի, Կարսի, Բասէնի և Վանի շրջանների հայերը ծանրածանր կորուստներ և մարդկային զոհեր ունեցան։

Երբ Տաճկաստանը բանակցութեան մէջ մտաւ Ռուսիոյ հետ, Նիկոլա դուքսը, Ալէքսանդր Բ. ցարի հաճութեամբ ընդունեց Տաճկահայաստանի բարեկարգումների հարցը և մինչև իսկ համաձայնուեց վարչական ինքնավարութիւն տալ Էրզրումի, Վանի և Մուշի վիլայէթներին, ուր հայերը բնակչութեան մեծամասնութիւնն էին կազմում։ Օսմանեան կառավարութիւնն իր պարտութեան պատճառով յօժարուեց, մինչդեռ իր ամբողջ մտահոգութիւնն այն էր, որ ռուսները չհաստատուեն Տաճկահայաստանում։

1878 թւին ստորագրուեց Սան Ստեֆանոյի դաշնագիրը։ Ասիական Տաճկաստանի համար կնքուում էր հետեւեալ դաշինքը.—

Ռուսիան ստանում էր Բաթումի, Արդահանի, Կարսի, Բայազէդի և Ալաշկերտի շրջանները։ Յանձն էր առնում պարպելու Էրզրումի նահանգը, որը գրաւուած էր ռուսների կողմից։ Հայերի պնդումների վրայ Ռուսիան չանաց ապահովել այդ շրջանների բարենորոգումները։

Սան Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ յօդուածը նախատեսում էր. «Քանի որ ռուս զօրամասերի կողմից պարպումը այն հողամասերի, որոնք գտնուում են Հայաստանում և որոնք պիտի վերադարձուեն օսմանեան կառավարութեան, կարող է յառաջ բերել բարդութիւններ ու խռովութիւններ, վնասելով երկու երկրների բարեկամական յարաբերութիւններին, Բարձրագոյն Դուռը յանձն է առնում անյապաղ իրագործել հայկական նահանգների տեղական կարիքներից բխող վարչական ինքնավարութիւնը և երաշխաւորել նրանց ապահովութիւնն ընդդէմ չերքեզների և քիւրդերի»։

Օսմանեան պատուիրակութիւնը քաջալերուած Անգլիայի կողմից, Դուքս Նիկոլային փոխել տուեց, և «վարչական ինքնավարութիւն» բացատրութեան տեղ դրուեցին «բարելաւումներ և բարենորոգումներ» բառերը։

Ռուսական բանակները քաշուելուց առաջ բարենորոգումները պիտի գործադրուէին։ Անգլիան հետապնդում էր յօդուածի գործադրումից առաջ Թուրքիան պարպել տալ ռուսական զօրքերից, որպէսզի Տաճկահայաստանում ռուսները որևիցէ յենակ չունենային։ Սան Ստեֆանոյի դաշնագիրը երբեք չգործադրուեց. Սոգլան կարողացաւ պարտադրել, որ Ռուսիան հրաժարուի այդ

դաշնագրից և ընդունի Բերլինում գումարելիք նոր վեհաժողովի հրաւիրումը, որպէսզի մի նոր դաշնագիր կնքւի։ Անգլիան իր ծրագրի մէջ յաջողեց և փոխարէնը Օսմանեան կայսրութիւնից ստացաւ Կիպրոս կղզին։

1878 թւին Բերլինի վեհաժողովին հայերը պատւիրակութիւն ուղարկեցին Արիմեան Հայրիկի գլխաւորութեամբ։ Հայ պատւիրակները բախւեցին Բիսմարկի և Դիզրայէլիի հակառակութեան։ Հայ պատւիրակութիւնը պահանջում էր էրզրումի, Մուշի և Վանի շրջանների հայոց կեանքի ապահովութիւնն ու բարելաւումը։

Բերլինի վեհաժողովը Սան Ստեֆանոյի 16-րդ յօդւածը վերածեց 61-րդ յօդւածի, հետեւեալ ձևով. «Բարձրագոյն Դուռը յանձն է առնում անյապաղ իրագործել այն բարենորոգումներն ու բարելաւումները, որոնց կարիքը ունեն հայերից բաղկացած նահանգները և երաշխաւորել նրանց ապահովութիւնը չերքեզների և քիւրդերի դէմ։ Բարձրագոյն Դուռը պարբերաբար տեղեկութիւններ պիտի տայ այս ուղղութեամբ իր ձեռք առած միջոցների մասին այն պետութեանց, որոնք պիտի հսկեն դրա գործադրութեանը»։

Բերլինի դաշնագրից յետոյ, 1880 թւին, Գլատըստոնն անցաւ Դիզրայէլիի տեղը։ Նա Թրքական վարչակարգի տակ ճնշւած ժողովուրդների նկատմամբ համակրանք ունէր, բայց հակառակ կատարւող աշխատանքներին և բանակցութիւններին, Բերլինի դաշնագրով նախատեսւած բարենորոգումներն իրագործելու համար եղած բոլոր փորձերն ապարդիւն մնացին։ Հայերի կրած չարչարանքները մեծ պետութիւնների համար շահաստանի էին վերածւել, նրանք բողոքելով, ի շահ իրենց էին քաղաքականութիւն վարում։ Թրքական քաղաքականութիւնը շատ յստակ էր. քանդել հայութեան ապագայ ինքնավարութեան հիմքերը, բնաջնջելով փոքրացնել հայութեան թիւը և իրենց հայրենի հողի վրայ փոքրամասնութեան վերածել։ Ահա, այս ճնշումները, կեղեքումները և չարաշահութիւնները հայերին ապստամբութեան մղեցին։

Սասունի հայերը տառապում էին քիւրդերի չարագործութիւններից։ 1893-ին մերժեցին ենթարկւել հարստահարութեանց և ապօրէն տուրքերը քիւրդերին չվճարեցին, բայց Թուրք պետութեան նկատմամբ շարունակեցին իրենց պարտականութիւնը կատարել։

Քիւրդերը յարձակւեցին Սասնոյ հայութեան վրայ, բայց ետ մղւեցին խիզախ ու արի լեռնականների կողմից. տաճիկները դիմեցին օսմանեան իշխանութեան և կանոնաւոր բանակներ եկան Սասուն։ Սասունը գրաււեց և 1894-ին սկսւեց կոտորածը։ Անգլիական կառավարութեան նախաձեռնութեամբ, հակառակ ռուս կառավարութեան խափանարար փորձերին, տեղի ունեցաւ քննութիւն և անարժէք համարւեցին տաճիկ կառավարութեան տւած բացատրութիւնները, թէ հայերն ապստամբել էին օսմանեան իշխանութեան դէմ. օսմանեան զօրքը Սասուն հասնելուց յետոյ, միանալով քիւրդերին, շարունակել էին միասնաբար ջարդել։

Այնուհետև Սուլթան Աբդիւլ Համիդը մշակեց սիստեմատիկ ձևով ջարդի մի ծրագիր։ Խիստ գրաքննութիւն հաստատւեց, ճանապարհները խիստ հսկողութեան տակ առնւեցին։ Մասնաւոր մարդիկ ուղարկւեցին հայաշատ կենտրոնները, և տեղի տաճիկներին ու քիւրդերին հայերի դէմ գրգռեցին։ Զէնք բաժանեցին և 1895 թ. Սեպտեմբերին մեծ թւով հայեր ջարդեցին։ 1894—97-ի շրջանին տաճիկ կառավարութիւնը կարողացաւ 400,000 հոգի պակսեցնել հայկական նահանգների բնակչութիւնից։

Եւրոպական պետութեանց ուշադրութիւնը գրա-

ելու համար և նրանց միջամտությունն ստիպելու համար, 1895-ին հայկական կուսակցությունները յանդուգն միջոցների դիմեցին։ 1896-ին գրաւեցին Բանք Օթոմանը, և 14 ժամ գրաւեալ վիճակի մէջ պահեցին։ Շէնքի պարպումը յաջողեցին միայն հայ յեղափոխականներին միջամտութիւն խոստանալով։ Բայց առաջին հակազդեցութիւնն այն եղաւ, որ տաճիկները Պոլսում 700 հայեր ջարդեցին։

1908-ին «Երիտասարդ Թուրքեր»ի կուսակցութիւնը Մակեդոնիոյ օսմանեան բանակի օգնութեամբ տապալեց Սուլթան Համիդի վարչաձևը և սահմանադրական միապետութիւն հաստատեց։ Օսմանեան կայսրութեան քրիստոնեայ տարրերին, մասնաւորաբար հայերին, որոնք մեծ յոյսեր էին կապել Երիտասարդ Թուրքերի կուսակցութեան, Բրքացման քաղաքականութիւն որդեգրեց։ Այսպէս, չնայած որ հայերը պատրաստակամութիւն ցոյց տուին նոր Թուրքիոյ հետ գործակցելու, բայց փոխարէնը Բշնամանք գտան։

Այս կացութեան մէջ, 1913 — 14 թւականներին, հայկական բարենորոգումների ծրագիրը դարձեալ շարունակուեց, այս անգամ Պօղոս Նուպար փաշայի գործակցութեամբ, Եւրոպայում։ 1914 Փետրուար 8-ին ստորագրուեց բարենորոգումների ծրագիրը, ուր նախատեսւում էր հայկական նահանգների համար ընդհանուր քննիչների նշանակումը, չէզոք փոքր երկրների ներկայացուցիչներից ընտրուած, տեղի վարչական գործերին հսկելու համար։

Բայց հազիւ 1914 թ. Յուլիսին, նախքան հոլլանդացի և նորուեգիացի քննիչների հասնելը, պայթեց համաշխարհային առաջին պատերազմը։

1915 թւականին Թալէաթը, Էնուերը և Քեմալը կազմակերպեցին Տաճկահայաստանի բնակչութեան բնաջնջումը և մէկ միլիոն հայ սպանելուց յետոյ մնացեալներին էլ ցրեցին աշխարհի չոլս ճանգերը։

Ռուսաստանում ծագող յեղափոխութիւնից յետոյ, 1918 թ. Մայիս 28-ին, Հայաստանն անկախ հռչակուեց և նոյն տարուայ Յունիսի 4-ին, Բաթումի դաշնագրով, օսմանեան կառավարութիւնը ճանաչեց հայկական նորաստեղծ պետութիւնը։

1919 թ. Մայիսին Հայաստանի խորհրդարանի և տաճկահայոց համագումարի որոշման համաձայն, Հայաստանի Հանրապետութիւնը Տաճկահայաստանի միութիւնը հռչակեց։

1920 թ. Յունուարին դաշնակիցները փաստօրէն ճանաչեցին Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը։ Իսկ նոյն տարուայ Օգոստոսին, Թուրքիոյ և դաշնակիցների միջև Սևրում կնքուած հաշտութեան դաշնագիրն ստորագրեց Ա. Ահարոնեանը, Հայաստանի անունով, և այսպէս, իրաւականօրէն ևս ճանաչուեց Հայաստանի Հանրապետութիւնը։

Սևրի դաշնագրի Հայաստանին վերաբերող երկու գլխաւոր կէտերն էին.

Յօդուած 88 — Թուրքիան յայտարարում է, թէ Հայաստանը ճանաչում է որպէս ազատ և անկախ պետութիւն, ինչպէս արդէն ճանաչում են դաշնակից պետութիւնները։

Յօդ. 89 — Թուրքիան և Հայաստանը, ինչպէս նաև դաշնակից միւս ազգերը, ընդունում են Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահի իրաւաւութեանն յանձնել Թուրքիոյ և Հայաստանի սահմանների ճշտորոշումը, Էրզրումի, Տիգրանակերտի, Վանի և Բիթլիսի վիլայէթներում, ընդունել նրա որոշումը, ինչպէս նաև ամէն կարգադրութիւն, որ նա պիտի կարողանայ անել Հայաստանին դէպի ծով ելք տալու և օսմանեան երկրի բոլոր

սահմանակից հողամասերի ճշտորոշման վերաբերեալ։

Մի քանի ամիս յետոյ Միացեալ Նահանգների նախագահ Ուիլսընը տալիս է իր իրաւարարի վճիռը, որով Հայկական պետութեան պիտի յանձնուէր Վանի, Էրզրումի և Բիթլիսի վիլայէթների մեծ մասը, Տրապիզոնի վիլայէթի մէկ մասը, և այսպէս, հայկական նոր պետութեան համար ապահովում է ծովի վրայ մի ելք։

Բայց Լոզանի խորհրդաժողովում Թուրքիան և դաշնակիցները հաշտուեցին և Թուրքիան դարձեալ յաղթական դուրս եկաւ։

Սևրի դաշնագրի ստորագրումից յետոյ Թուրքերը յարձակողականի անցան Հայաստանի Հանրապետութեան դէմ։ Այդ շրջանին Թուրքիոյ և Խորհրդային Միութեան միջև սերտ կապեր էին ստեղծուել։ 1920 թ. Ապրիլին կարմիր բանակը գրաւեց Բաքուն, Ադրբէջանի հանրապետութիւնը և այնտեղի խորհրդային նոր իշխանութիւնն իրեն վերապահեց Ղարաբաղի և Զանգեզուրի հայկական շրջանները։ Սեպտեմբեր և Հոկտեմբեր ամիսներին հայկական զօրագունդը կարողացաւ կասեցնել Թուրքերի առաջխաղացքը 1920 թ. հայ և Թուրք պատերազմի շրջանում։

Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչներն ստիպուեցին ընդունել տաճիկ կառավարութեան պարտադրած հաշտութեան ծանր պայմանները, Թուրքիան իրեն էր վերապահում Տաճկահայաստանի ամբողջութիւնը և գրաւում էր Կարսի ու Արդահանի շրջանները, Հայաստանն ինչել էր 30,000 քառ. քիլ. տարածութեան, և միշտ գտնուում էր տաճկական վտանգի ներքոյ։ Նոյն օրը, Դեկտ. 2-ին, Հայաստանը դառնում է խորհրդային պետութիւն և նոր շրջան է սկսուում հայ ժողովրդի համար։

ԱՊՐԻԼ 24

Ցաւխարհական ի ճակատամարտին,
յաւխարհական ի ճակատամարտին եւ
ի մեծ պատերազմին ընդդիմամարտեալ
լիներ անօրինացն պատերազմ։ Իսկ ե-
ռանելի նահատակին զմոլուրիւն անօ-
րինացն խափանեցին եւ յաղթող գտան։

ԺԱՄԱԳԻՐՔ

ԱՊՐԻԼ 24

Ապրիլ 24...

Ինքնիրմով ամբողջական և հասկանալի մի թուական, առանց բացատրութեան և առանց մեկնութեան։ Համակ սուգ, տրտմութիւն և կենդանի զգացում, եկած մօտաւոր անցեալի արիւնոտ էջերից։ Այլազան պետութիւնների մէջ ցրուած արեւմտահայութիւնն այդ անպատմելի տառապանքի, չարչարանքի և սպանդի կենդանի վկան է։ Մէկ միլիոն նահատակ, նիւթական և բարոյական կորուստներից զատ։ Մտաւորական, հոգեւորական և ազգային ղեկավարների աքսոր և սպանութիւն։ Ինչքի և ըստացուածքի, ինչպէս նաև մշակութային գանձերի կորուստ։ Հակառակ այն իրողութեան, որ մի քանի տասնամեակներ են անցել արդէն, սակայն, վէրքը չի սպիացել տակաւին։

Իւրաքանչիւր տարի, երբ մի ամբողջ օր կրօնական և ազգային արարողութիւնների և սգահանդէսների միջոցով մտածում ենք մէկ միլիոն նահատակների և ազգային կորուստների մասին, մեր մտածումները շարունակում են հեղեղի պէս հոսել և մնում ենք շւար, թէ որտեղի՞ց սկսենք և ի՞նչ ձեւով համապրենք և վերջաց-

նենք մեր գաղափարները։ Հաղորդման և ստեղծման զգացումից աւելի մեր կորուստներն են, որ մեզ պահում են շատ վիճակում։ Ապրիլեան Եղեռնի պարկ յիշատակումն իսկ սարսուռ է առաջացնում մեր հոգիներում։ Անպատմելի, անասելի մի զգացում հեռանկարներ է բացում մեր հոգիներում։ Երազ, տեսիլք, վրէժ և յոյսեր իրար են հրմշտկում։ Այս պայմաններում դժուար է ներկայացնել ամբողջութիւնը՝ ինչպէս որ պատահեց։

Ցիշել և չյուզուել և վրէժի զգացումով չլեցուել, անքնական երևոյթներ պիտի թուան։ Մէկ միլիոն նահատակներ ջարդի ենթարկուած, բարբարոս ցեղի կողմից, գազանային միջոցներով։ Նահատակներ ամէն խաւի պատկանող.—մտաւորական մեծ ուսվիրաներ, հանճարներ, տաղանդներ, որոնք ոչնչացուեցին իրենց փթթումի մէջ։ Եկեղեցու պաշտօնեաները հազիւ նոր ոգի տուած եկեղեցու պայծառութեան, ենթարկուեցին առաջին դարերի քրիստոնեաների նահատակութիւնից աւելի անմարդկային բարբարոսութեան և մահը դիմաւորեցին։ Կրթական մշակներ, մամուլի ներկայացուցիչներ, արուեստագէտներ, ազգային ու հասարակական գործիչներ, պետական պաշտօնեաներ, աքսորի ճամբաների վրայ խոշտանգուեցին։ Իրենց առօրեայ հացը արդար քրտինքով շահող արհեստաւորներ, բանուորներ, գիւղացիներ տեղահան եղան հայրենի տներից, շատերն անապատի աւազի տակ ողջ-ողջ թաղուեցին, ուրիշներ կենդանի վիճակով Եփրատ գետի հոսանքին յանձնուեցին։ Այսպէս, բազմաթիւ քաղաքներ, գիւղեր պարպուեցին և նահատակների թիւը հասաւ մէկ միլիոնի։

Արիւն և աւեր։ Բռնի գաղթ և աքսոր։ Հարկ կ՞այ շեշտելու, թէ այդ բոլորի հեղինակը հայ ժողովրդի դաբաւոր ոսոխն էր, որի անունը ցեղային քնորոշումից աւելի համայն մարդկութեան համար արդէն իսկ դարձել է հոմանիշ վայրագ և բարբարոս ցեղի։ Ֆրանսացի մեծ վիպագիր Վ. Հիւգոն մէկ տողի մէջ տուել է արդէն այդ ցեղի ամբողջական պատկերը. «Ամէն ինչ աւեր, ամէն կողմ սուգ, թուրքն է անցել»։ Վ. Հիւգոյի որակումը միայն հայն է, որ հասկանում է իր ամբողջութեան մէջ, աւելի ճիշտ պիտի լինէր ասել՝ միայն հա՛յն է որ գիտէ թէ վիպագիրն ի՛նչ է ուզում հասկացնել։

Ապրիլ 24-ը, Եղեռնի յիշատակի հետ, բացայայտում է նաև երկու յղացքներ՝ հայը և իրեն հալածող ցեղը։ Առաջինը շինարար, ստեղծագործ արուեստների և մշակոյթի գործերի հետամուտ, միշտ նորանոր նուաճումներ արձանագրող. վկայ իր անցեալի և ներկայի մշակութային հարստութիւնը, իսկ երկրորդը՝ աւերող, թալանող, քանդող և միշտ էլ յայտնի իր բարբարոսութեամբ. վկայ իր պատմութիւնը։

Անապատի ու որբանոցների մէջ հասակ նետած սերունդը դարձել է արդէն Ապրիլեան Եղեռնի դէպքերի շրջուն պատմութիւն։ Իր մորթի վրայ Եղեռնի սպին ունեցող, իր հոգու ծալքերի մէջ տխուր յիշատակները պահող իւրաքանչիւր հայ եթէ միայն իր ականատեսի յուշերը պատմի, արդէն բաւ է գաղափար կազմելու համար մեր նահատակների և ողջ մնացողների չարչարանքների մասին։

Արտասահմանում աստիճանաբար նուազում են ականատեսները, բայց իրենց մանկութիւնն աւազի վրայ անցկացրած և տարտամ գաղափարներ ունեցողներ դեռևս շատ կան։ Իսկ այն սերունդը, որ մեծացաւ նրանց անմիջական շնչի տակ, մանուկ հասակից իր մէջ աճեցրեց կենդանի զգացումը, որ խորքի մէջ նուազ չէ գաղթ և աւեր ճաշակողներից։

Ո՞ր մէկ երիտասարդը կամ պատանին ժամերով չի լսել իր ծնողների Գողգոթայի ճանապարհի նկարագրը-

թութիւնը. ո՞ր մէկ հայը իր երակների մէջ չի ունեցել արեան արագ մի ընթացք, կարդալով և լսելով սպանդի մասին։ Ո՞ր մէկ հայը սգաւոր չի եղել Ապրիլի 24-ին և չի յիշել իր մեռելներին։ Ընտանիք կա՞յ, որ մեռել չի ունեցել, տուն կա՞յ, որ չի քանդուել։ Բոլորն էլ տրտմութեան և սուգի թելերով կապուել են Բիւրաւոր Նահատակների յիշատակի օրեան։ Մեր և նահատակների միջև դարերի երկար կամուրջ չկայ, մօտաւո՛ր անցեալ է այն, և դեռևս չգրուած պատմութիւն, որը թերևս երբեք էլ չգրուի և մնայ յաւիտեանս կենդանի և ապրող զգացում։ Ո՞վ պիտի կարողանայ գրել այնքան աւերների, բարբարոսութիւնների, խոշտանգումների և նահատակութիւնների պատմութիւնը։ Ականատեսը իր յուզումնալի մտածումները պիտի գրի. լսողը և պատմական վաւերաթղթերի վրայ հիմնուած գրողը տարտամ, աղօտ և չոր իրողութիւններ պիտի փոխանցի թղթին։ Պիտի տայ փառաւոր դէմքերի անունները, պիտի հիւսի չարքաշ և գործունեայ ժողովրդի պատմութիւնը, պիտի թուի աւերումներն ու զանգուածային ջարդերը, պիտի գրի նաև արի կեցուածքի և դիւցազնական մարտերի մասին։ Եւ այս բոլորը որպէս արիւնոտ մէկ էջը հայոց պատմութեան։

Բայց մենք տակաւին Եղեռնի անմիջական տպաւորութեան տակ, եկեղեցական և ազգային հանդէսների ընթացքին, վերյիշումն է որ կատարում ենք մեր նիւթական և բարոյական կորուստների։ Գիտակցում ենք, թէ անցեալի վերյիշումներն ու ցաւերի կրկնուած պատմութիւնները լուսեղէն ճամբայ չեն մեր հետապնդած իրաւունքների տէրը լինելու համար։ Վիշտն ու ցաւը չէ, որ յաւերժացնում ենք, այլ ի խնդիր արդարութեան, մեր ձայնն է որ բարձրացնում ենք երկինք, մեր իղձն է որ յանձնում ենք տարտղնուած և ցրուած հայորդիներին, և ի վերջոյ, ապագայի համար հիւսուած տեսիլն է, որ պատմում ենք բոլորին։ Բնականօրէն, չենք անտեսում նաև ներկայի իրականութիւնը, որ աւա՜ղ, միշտ էլ մխիթարական չէ։

Կրօնական տեսակէտից վրէժխնդրութիւնն աստուածային պատուիրանների դէմ գնալ է։ Բայց մենք, ամէն անգամ, երբ ոգեկոչում ենք Ապրիլեան Եղեռնի յիշատակը, ծանրանում ենք աւելի մեր ազգի կրած տառապանքի և մեր անելիքների վրայ։ Մեր իրաւունքն է, որ պաշտպանում ենք և հայկական ոգին է, որ ներշնչում ենք բոլորին։ Այս զգացումը յաւերժացնելու համար արտասահմանի հայութեան սրտի վրայ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կենտրոնատեղի Անթիլիասի մայրավանքում, Մայր Տաճարի և Դպրեվանքի միջև բարձրացրել ենք Ապրիլեան Յուշարձանը, նրա մէջ զե-



Բիւրաւոր նահատակների յուշարձանը Անթիլիասում.

տեղելով նաև նշխարները մեր նիւթական նահատակնե-
րի, մեր յոյսերի ծաղկումը Յուշարձանից թելադրող և
տպաւորող խորհրդի մէջ խտացնելով։

Երբ մտածում ենք անցած այդ տասնամեակների
մասին, մեր ստացուածքի և մշակութային գանձերի կո-
րուստներից բացի, խորհրդածում ենք նաև անցնող այդ
տասնամեակները լեցնող իրողութիւնների վրայ։ Բնա-
կանօրէն, նիւթական կորուստները չվերադարձան, բազ-
մաթիւ հարստութիւններ անհետ կորան և փլատակների
վերածուեցին, երբեք մեր ոտքերի տակ չզգացինք մեր
հայրերի սեփականութիւնը եղող պատմական վայրերի,
քաղաքների և գիւղերի հողը։

Բայց, դրանց փոխարէն, անապատի կրակի միջից
անցնող հայորդին, դրամագլուխ ունենալով միայն իր
բազկի ոյժը, գործելու և նորը շինելու կամքը, օտար հո-
րիզոնների տակ լծուեց աշխատանքի, և շնորհիւ իր ան-
ընկճելի կարողութեան, այսօր հասել է նախանձելի վի-
ճակի։ Արտասահմանում, գրեթէ ամէն տեղ, հայ ժողո-
վուրդը կազմակերպուած գաղութ է այլևս, և իր կատա-
րած նուաճումներով բոլորին զարմանք է պատճառում։
Այսքան արագ սթափում, այսքան արագ յառաջադիմու-
թիւն, այսքան կորով իրապէս զարմանահրաշ երևոյթ է։

Բնականօրէն, անցնող տասնամեակների ընթաց-
քում չփարատուեց նաև մարդկային կորուստը. մէկ մի-
լոն նահատակների փոխարէն մէկ միլիոն հայութիւն չե-
կաւ, և սակայն, աճող գաղութներում, ինչպէս նաև մայր
հայրենիքում, հրապարակ եկան այնպիսի դէմքեր, որոնք
միջազգային շրջանակներում ևս զարձան մեծանուն դէմ-
քեր՝ գիտութիւնների, արուեստների և մշակութային տար-
բեր ասպարէզներում։ Նրանք հիւսեցին հայ ժողովրդի
փառքը, նրանց հայ ազգի զաւակ լինելու հանգամանքո-
վը յիշեցրին հայ ժողովրդի պատմութիւնը և մանաւանդ

տարածեցին հայ ազգի անունը և բոլորի ուշադրութեան
առարկայ դարձրին հայ կոչումը։ Այսօր հպարտութեամբ
ենք լեցուում, երբ հնչում են նրանց անունները մեզ
հիւրընկալող ժողովուրդների բերնի մէջ։

Նոյնը կատարուեց նաև մշակոյթի տարբեր մար-
գերում։ Աւերուած խորանների փոխարէն ամենուրեք
կառուցուեցին նոր տաճարներ, նոր գմբէթներ սլացան
դէպի երկինք և հայ եկեղեցու գանգերն աւետեցին վե-
րածնուող հայորդիների նուաճումները։ Դպրոցներ, մշա-
կութային հաստատութիւններ, միութենական կազմակեր-
պութիւններ ու թերթեր Մեսրոպեան գիրն ու մշակոյթը
նոր հիմքերի վրայ դրած՝ եռանդ և ոգևորութիւն տին
բեկուած հոգիներին։ Դպրոցներում հայոց լեզուն նոր թա-
փով ուսուցուեց։ Տպարաններում, մամուլի ճոինչի տակ,
Մեսրոպեան գիրը հայութեան բաշխեց ազգային մշա-
կոյթի գանձերը։ Այսպէս, գիտական, մարզական և այլ
մարզերում բերկրանքի առիթներ ստեղծուեցին, և հիմա
աշխատում ենք ուծացման դէմ թումբ կանգնեցնել, մեր
ազգային դիմագիծը Սփիւռքում պահելու համար։

Անցնող տասնամեակների ընթացքում ստիճանա-
բար կանոնաւորուեցին նաև Ամենայն Հայոց Հայրապե-
տութեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Ե-
րուսաղէմի և Կ. Պոլսոյ պատրիարքութեանց դպրեվան-
քերը և եկեղեցականների նոր հոյլեր պայծառացրին ե-
կեղեցին։ Բոլոր մարզերում իրագործուող այս նուաճում-
ները զարմանք պատճառող երևոյթներ են և այս բոլո-
ր գալիս են հաստատելու հայ ժողովրդի աննկուն կամ-
քը և ստեղծագործ ոգին. ահա թէ ինչու Ապրիլեան սը-
գահանդէսների ընթացքում լացն ու ողբը մէկ կողմ դը-
րած, հիւսում ենք նաև հայ ժողովրդի փառքը։

Յարդ աշխատում էինք մենք մեզ կազմակերպել
որպէս գաղութ, ոյժմ առաւել և նւազ չափով, այլա-

պան երկրներում, ունենք վարչականօրէն կազմակերպուած գաղութներ, և միահամուռ ճիգերով տքնում ենք ազգային, եկեղեցական և մշակութային գործերի մէջ մեր ունեցածը պահպանել և աւելին ձեռք բերել։

Զենք անդրադառնում, թէ ի՛նչ արեց Ջարդարարը այս տասնամեակների ընթացքում, բայց պարզ իրողութիւն է, որ ցարդ հայաբնակ բոլոր վայրերը մնում են աւերակ և քար ու քանդ վիճակում. ամայի այդ վայրերում պատահական անցորդներին լուռ բողոքարկու են դարձել աւերուած եկեղեցիներն ու ամէն տեսակի կառուցումների մնացորդները։ Իսկ մենք տակաւին համբերութեամբ և յոյսով սպասում ենք արդարութեան։

Եթէ երբե՛ք մէկ միլիոն նահատակների ցիր ու ցան ոսկորները կարելի չեղաւ ամփոփել մի գերեզմանոցում, և մինչև իսկ նրանք մնացին անթաղ, բայց իրենց յիշատակը և մասնաւորաբար այն ոգին և հաւատքը, որ իրենցը եղաւ, մեզ համար հանդիսանում է ոյժ՝ մեր յոյսերի և իրաւունքների պսակումի մէջ։

Երանի թէ ընդհանրական սուգի այս օրը դառնար համազգային ոյժերի միասնաբար գործունէութեան լաւագոյն առիթը, որովհետև միայն ա՛յս կերպով կարելի կը լինի հաւաքական աշխատանք տանել և մեր պահանջների իրագործման ճանապարհի վրայ առաւել արդիւնքներ ձեռք բերել։

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։

ՎԱՍՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ ԵՒ ՎԱՍՆ ԿՐՕՆԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

«Սա — Հայկ — խրոխտացեալ ամբարձ զձեռն ընդդէմ բռնաւորութեանն Բելայ»։

... «Իսկ բլուրն, ուր fաշամարsofն անկաւ Բէլ, անուանեաց Հայկ Գերեզմանս»։

Մ. ԽՈՐԵՆԱՑԻ

ՎԱՍՆ ՀԱՅՐԵՆԵՍՑ ԵՒ ՎԱՍՆ ԿՐՕՆԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Մեր պատմահայրը՝ Մովսէս Խորենացին, Հայկ Նահապետի ապստամբութիւնը նկարագրելիս ասում է. «Հայկը վայելչակազմ էր, թիկնաւէտ, գեղազանգուր մազերով, վառվռուն աչքերով, հաստ բազուկներով։ Նա քաջ և երևելի հանդիսացաւ հսկաների մէջ, գիմազրող այն բոլորին, որոնք ձեռք էին բարձրացնում իշխելու բոլոր հսկաների և դիւցազունների վրայ։ Նա խրոխտանալով ձեռք բարձրացրեց Բէլի բռնաւորութեան դէմ, այն ժամանակ, երբ մարդկային ազգը սփռուում, տարածւում էր ամբողջ երկրի լայնութեամբ, բազմամբոխ հսկաների, անչափ կատաղիների և ուժեղների մէջ. որովհետև այն ժամանակ ամէն մի մարդ կատաղած, սուրն ընկերոջ կողն էր կոխում, մէկը միւսին ձգտում էր իշխել։ Բէլին պատահմամբ յաջողուեց բռնանալ և ամբողջ երկիրը գերուել։ Հայկը չկամենալով նրան ենթարկուել ու հնազանդուել, Բաբելոնում իր Արմենակ որդին ծնելուց յետոյ, չուեց, գնաց Արարատի երկիրը»։

Իսկ Հայկի և Բէլի պատերազմի վախճանին ա-

սում է. «Իսկ այն բլուրը որտեղ Բէլն ընկաւ քաջ զօրավարների հետ, Հայկը կոչեց Գերեզմանք, որ այժմ կոչւում է Գերեզմանակ»։

Հայ ժողովրդի ամբողջ պատմութիւնը խտացել է վերևը մէջբերուած երկու պարբերութիւնից անջատուող երկու բառերի, աւելի ճիշտը՝ երկու գաղափարների մէջ. «Հայկն ըմբոստացաւ Բէլի բռնաւորութեան դէմ», այսինքն ուզեց ազատ ապրել, անկախ լինել և իր կամքի համաձայն իր կեանքը վարել։ Իսկ երկրորդը՝ «Բէլի ընկած տեղը կոչուեց Գերեզման»։

Ուրեմն, հայոց առաջին նահապետի մտքի մէջ կաղապարուող առաջին գաղափարներն եղել են ազատութեան, անկախութեան, բռնաւորութեան դէմ ձեռք բարձրացնելու և գերեզմանի յղացումները։ Հայ ժողովրդի ծագումը բնորոշող աւանդական պատմութեան Հայկ նահապետի առաջին մտածումները և արտասանած առաջին բառերը եղել են ուրեմն՝ ազատութիւն և գերեզման։

Եթէ երբեք քննենք ամբողջ հայոց պատմութիւնը, պիտի նկատենք, որ բոլոր անցուդարձերը համարեա թէ հիւսւել են ազատութեան և գերեզմանի շուրջ։ Հայ ազգը երբե՛ք չի բռնացել ուրիշի վրայ, դրացի ազգերի և պետութիւնների վրայ յարձակում չի կատարել, բայց չի հանդուրժել նաև երբ ուրիշները բռնացել են իր վրայ։ Իր ազատութիւնը պաշտպանել է ի գին ամէն տեսակ զոհողութիւնների, տառապանքների, ցաւերի և եաթաղանների։ Իր արիւնը առանց սակարկութեան տուել է հայրենիքի ազատութեան և անկախութեան համար։ Իր անձը, ընտանիքը, գերդաստանը զոհել է և չի հանդուրժել օտար և խորթ բռնապետութեան։

Այն բոլոր պատերազմները, որոնք կազմում են հայոց պատմութեան արիւնագիր էջերը, խօսում են հայոց ինքնապաշտպանութեան և ազատասիրութեան գաղա-

փարների մասին։ Վասն հայրենեաց և վասն կրօնի, հայոց պատմութեան բոլոր դարաշրջաններում. ա՛յս է եղել հայ ժողովրդի ղեկավարների և ռազմիկների գլխաւոր գաղափարախօսականը։ Հայրենիքը և Կրօնը հանդիսացել են ընդհանուրին միացնող ոգին, և այնտեղ շաղախւել և իրար են միացել հայ ժողովուրդը բաղկացնող բոլոր տարրերը։ Բոլորը մէկ մտածումի մէջ առնուած, բոլորը նոյն կրակից բռնկուած, բոլորը նոյն շրջանակի մէջ առնուած, շատերին զարմանք պատճառելու աստիճան հրաշքի համազօր գործեր են կատարել ճգնաժամային օրերին։

Միւս կողմից, հայ ժողովուրդը բացառիկ յարգանքի և պաշտամունքի հասնող վերաբերմունք է ունեցել մեռելների և գերեզմանի նկատմամբ։ Զմոռանանք դարձեալ, որ Հայկ նահապետի արտասանած առաջին բառերից է նաև գերեզմանը։ Գերեզմանը, աւելի ճիշտ մեռելները, միշտ ոգեկան ներկայութիւն է ունեցել հայ ժողովրդի համար, միշտ էլ նա հանդիսացել է անցեալի հետ ամենախորունկ կապը ստեղծող իրողութիւն և ներշնչումի աղբիւր։ Գերեզմանի հանդէպ եղած յարգանքը բացառիկ երևոյթ է մեզ մօտ։ Մեռելների յիշատակումը և նրանց ոգեկոչումը դարերի ընթացքին և մանաւանդ այս օրերին, արտակարգ ձևով ոգևորութիւն է առաջացրել հայ ժողովրդի մէջ և դրա համար երբե՛ք չպիտի զարմանալ, որ ամէն տեսակի հոսանքների համար, ղեկավարների թաղումը գաղափարների բռնկումի առիթ է ստեղծում։ Վարդանանց յաւերժացումը լաւագոյն օրինակն է վերոյիշեալ միտքը բարացուցելու համար։

Պատմութիւնն ասում է, թէ Արտաշէս թագաւորի թաղման միջոցին բազմաթիւ անձեր ինքնասպան էին լինում, և իր որդին՝ Արտաւազդը յուսահատ և դժգոհ այդ վիճակից, մեռելին դառնալով, ասում է. «Դու գնացիր, և քեզ

հետ տարար ամբողջ ժողովուրդը, ես ո՞ւմ վրայ թագաւորեմ»։ Ժողովուրդը կարծում էր, թէ Արտաշէսի մահով ամէն ինչ վերջ կը գտնի այլևս. իշխանութիւն, թագաւորութիւն, թերևս նաև հայրենի ազատութիւն և ազգութիւն նրա հետ միասին կը թաղուեն. հետևաբար աւելորդ է նաև իրենց կեանքը։ Այս էլ մի այլ երևոյթ է հայ ժողովրդի նկարագրի մէջ՝ մեծ մեռելի յիշատակին գնացող և նրա թաղումով իր յոյսերի կորուստը խսպառ չքացող։ Անշուշտ, կարելի է բազմաթիւ օրինակներ մէջբերել՝ յայտնաբերելու համար այլազան ժամանակաշրջաններում պատահած դէպքերը, ուր ուժեղ կերպովդրսեւորւում է մեռելների և գերեզմանների նկատմամբ պաշտամունքի հասնող յարգանքը։

Ազատութիւն և Գերեզման, երկու բառեր, երկու գաղափարներ, երկու յոյցքներ հայ ժողովրդի նկարագիրը և խառնուածքը լաւագոյնս արտայայտող։ Առաջինը բռնութեան դէմ անհանդուրժող կեցուածքի արտայայտութիւն, երկրորդը՝ այդ ճանապարհին ընկնող մարդկանց յիշատակի յաւերժացում։ Երկուսն էլ որպէս գաղափար, զգացում և ապրում, սրտակից են եղել հայ ժողովրդի բոլոր զաւակներին։ Երբե՛ք չպիտի զարմանալ, որ երկուսն էլ ծնունդ են առել հայ ժողովրդի ծաղման առաջին իսկ օրերին և եղել են Հայկ Նահապետի անդրանիկ մտայղացումները։

Երբ վերոյիշեալ մտայղացումների ներքոյ քննենք նաև Մեծ Եղեռնի ժամանակաշրջանը և տակաւին յիսուն տարիներ յետոյ նրանց յիշատակի հանդէպ հայ ժողովրդի ունեցած յարգանքը, պիտի նկատենք, որ դարձեալ ազատութիւն և գերեզման իրենց հարազատ բովանդակութեամբ պիտի ցոլան կենդանի մարդկանց և մեռելների միջև։ Մեր ամբողջ ազատագրութեան պատմութիւնը իր համար որպէս մղիչ ոյժ ունի բռնապետութեան դէմ դուրս գալու և օտարի կեղեքումներից ու ճնշումներից ազատագրուած անկաշկանդ, խաղաղ և անդորր կեանք վարելու և իր հայրենի հողը շէնացնելու գաղափարը. և այս առաւել ևս ենթահող գտաւ, երբ կեղեքումները, ճնշումները, ձերբակալութիւնները և ջարդերը սկսեցին և այդ իսկ պատճառով անմարդկային վերաբերմունքի և բռնադատութիւնների դէմ ինքնապաշտպանութեան դիմեց հայ ժողովուրդը։ Անձեռնտու պայմանների ներքոյ, միջազգային կեանքում հայ ժողովրդի անունը բաւական հոլովւեց և ի վերջոյ լռութեան դատապարտւեց։

Եկեղեցի և ազգային իշխանութիւն, քաղաքական կազմակերպութիւններ, ազգայիններ և հայ ժողովուրդը ներկայացնող ամէն տեսակի խաւեր մի անգամ ևս, և այս անգամ աւելի ուժեղ կերպով, մտածեցին և տենչացին ազատութեան։ Ազատութիւն՝ կեանքի ապահովութեան համար. ազատութիւն՝ ունեցուածքի պահպանութեան համար, ազատութիւն՝ առօրեայ աշխատանքի համար, ազատութիւն՝ մտածումների և գաղափարների արտայայտութեան համար, ազատութիւն՝ ամէն տեսակ մարզերում, որպէսզի մարդավայել կեանք ապրեն և զարկ տան ազգային մշակոյթի ուռճացման։

Այդ շրջանի քաղաքական գոյավիճակի մասին պատմութեան գրքերում արդէն իսկ լայնօրէն վերլուծումներ կատարւել են, իբրաքանչիւր հայ առաւել և նւազ չափով տեղեակ է անց ու դարձերին, և այսօր, յիսուն տարիներ յետոյ, աւելի խաղաղ ձևով կարող է գընահատանքի և վերլուծումի ենթարկել կատարւած զոհողութիւնները, և տակաւին, եթէ երբեք վաւերաթղթերը ամբողջութեամբ բոլորի սեփականութիւն դառնան, աւելի ևս լայնօրէն և պարզ ձևով կարելի է մտածել պատասխանատուների և կատարւածի մասին։

Բայց ի՞նչ էլ լինեն պայմանները և մասնաւորապէս երբ նկատի ունենանք Եղեռնի նախորդ շրջանները, մանաւանդ ԺԹ դարի վերջաւորութեան կատարուած ջարդերը, պիտի նկատենք, որ ամէն տեսակի շարժումները և այդ շրջաններին սկիզբ առնող կազմակերպութիւնները գլխաւորաբար մտածում էին ազատութեան իրականացման և այդ նպատակի համար պատրաստ էին ամէն ինչ զոհելու։ Տակաւին այդ ժամանակաշրջանը մեզ համար թարմ պատմութիւն է, թերևս չգրուած պատմութիւն։ Ականատեսները շատ են, շատերի սեփականութիւնն են դարձել արդէն անձնական վկայութիւններն ու յուշագրութիւնները։ Մեր քննութիւններն ինչքան էլ խորացնենք ու մանրամասնութիւնների մէջ մտնենք, այնտեղ պիտի նկատենք հայ ժողովրդի դերագոյն ճիգը, բռնութիւնից և ճնշումներից դուրս գալու և ազատ պայմանների տակ ապահով վիճակում ապրելու տենչը, և այս՝ միշտ էլ հայ ժողովրդի ճիգն է եղել դարերի ընթացքում։ Եղածն էլ մի արդար պահանջ է, որին ձգտում են բոլոր ազգերը, և մենք, այս յիսուն տարիների ընթացքում, ականատես ենք եղել աշխարհագրութեան քարտէզի բազմիցս փոփոխութեան և նորազատ պետութիւնների հրուչակման։

Սահմանադրութիւն, բարենորոգում, կնքուած դաշնագրեր, պաշտօնական խօսակցութիւններ միշտ էլ իրենց ենթահողն ունեն՝ ազատութեան ձգտումն ու հայ ժողովրդի իղձերի իրականացումը։ Վաւերաթղթերը, և մանաւանդ մօտաւոր պատմութիւնը, վկայ են կատարուած բոլոր աշխատանքներին և այդ գաղափարի գործադրման ճիգին, թափուղ արիւններին և քաջամարտիկ ռազմիկների նահատակութեան, և դրանցից յետոյ սկսուող արեւաշող արշալոյսներին։

Եթէ երբե՛ք մէկ միլիոնից աւելի նահատակներ ռազմադաշտում չզոհուեցին, որովհետև պատմութեան ծանօթ ճակատամարտներից չէր կատարուածը։ Եթէ երբե՛ք հաւասարէ հաւասար մղուող կռիւ դաշտում զոհուողներ չնկատուեցին նրանք, որովհետև մեզ ծանօթ պատերազմը, իր լայն առումով, տեղի չունեցաւ երկու ազգերի միջև։ Եթէ երբե՛ք համաշխարհային պատերազմի ընթացքին այլ ազգերի նման ճակատից ճակատ բախումներ տեղի չունեցան և միայն մասնակի ինքնապաշտպանութեան դէպքեր պատահեցին, և պիտի ասել, որ եղածն էլ մեզ համար պատուաբեր նահատակներ արձանագրեց, սակայն և այնպէս մեր նահատակները համարուեցին վասն հայրենեաց և վասն կրօնի ազատութեան համար ընկնող պանծալի նահատակներ և իրենց տօնակատարութեան առանձին օրն ունեցան օրացոյցի մէջ։

Ճիշտ է, որ նրանք գերեզման էլ չունեցան և տարտղնուեցին աւազների մէջ, սակայն ունեցան յուշարձաններ և մանաւանդ՝ Ապրիլ 24-ի յիշատակի յաւերժացման մնայուն թւական և մեզ համար հայոց նահապետի լեզուից առաջին իսկ առիթով դուրս եկած բառը՝ գերեզման, իր ամենալայն բովանդակութեամբ իմաստ ստացաւ։

Մեռելներ, թէև անշիրիմ, նահատակներ թէև անգերեզման, մէկ միլիոն և աւելի զանկեր թէև առանց դագաղի, թաղումներ բիւր-բիւրերով, թէև առանց կրօնական պաշտամունքի և մօտաւոր սիրելիների ներկայութեան, սակայն և այնպէս իւրաքանչիւր տարին գէթ միայն մէկ օր խորագրած և համատարած սուգի կատարումով միշտ ներկայ մեր մտածումների և զգացումների մէջ։ Գերեզմանի յարգանքը և պաշտամունքը միացած մեր զգացումներին, յաւիտենական կամար է կազմել ողջերի և մեռելների միջև։ Եւ ճիշտ այս պատճառով է, որ այդ օրը մենք աւելի զգում ենք, քան թէ

խօսում». մտածում ենք, քան թէ գրում. ապրում ենք, քան թէ գործում և իրենցով պաշտպանւում, քան թէ նրանց պաշտպանում. մենք յարգում ենք, սիրում և մնում նրանց շնչի տակ և այս կենդանի և առողջ կապը գոգում, միացնում է ողջերը մեռելներին և եռանդ է տալիս մեր իրաւունքների պաշտպանութեան ճանապարհի վրայ կատարւող ամէն տեսակի ճիգերին։ Բնական է, որ լաւագոյն պայմանների մէջ մեր պահանջների իրաւատէրը դառնալու համար մեզանից տարիներ և տարիներ պիտի պահանջւի։ Բայց ի՞նչ կարող ենք անել, երբ պայմաններն անձեռնտու են։ Սակայն, այս երբեք չի նշանակում թէ նրանք կը մոռացւեն որպէս նահատակներ և մանաւանդ որպէս մեր իղձերի ու տենչերի մարմընացումը համարւող կենդանի շողեր, ապրող գաղափարներ և վասն հայրենեաց և վասն կրօնի քաջամարտիկ նահատակներ։

Ազատութիւն և գերեզման, որպէս բիւրեղանման մտածում, որպէս անդրանիկ ժառանգութիւն Հայկ Նահապետի կողմից կտակւած, որպէս հայ ժողովրդի խառնըւածքի լաւագոյն արտայայտութիւն, որպէս մեր տենչերի և իղձերի կենդանի յուշարձան, որպէս հայ ժողովրդի նկարագրի ամենացայտուն իրողութիւնը, որպէս բուն ինքը՝ հայ ժողովուրդը, եկել, խտացել և մարմնաւորւել են մէկ թւականի մէջ՝ ԱՊՐԻԼ 24։

Ապրիլ 24-ն այս օրերին դարձել է մեր հոգևոր արժէքների գնահատման, մեր նաւաճումների ուժեղացման, մեր հաւաքական ուժերի և կարողութեան զօրացման, մեր իղձերի ու տենչերի իրագործման, մեր ճիգերի ամրապնդման և մանաւանդ մեր պահանջների հետապնդման և կորսւած իրաւունքների իրաւատէրը լինելու համար կատարւելիք միահամուռ աշխատանքի հանգրւան։

Եւ այս՝ վասն հայրենեաց և վասն կրօնի։

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՈՐՈՒՍՏԸ ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻՆ

Ասացէք ցթագաւորն եւ ցքոնայուրսն, թէ կորացարուք եւ նսարուք, զի անկաւ ի գլխոց ձերոց պսակ փառաց ձերոց։

ԵՐԵՄԻԱ, ԺԳ. 18

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՈՐՈՒՍՏԸ ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻՆ

Հիմա, երբ արտասահմանի այլազան քաղաքներում ցրված առաւել կամ նուազ չափով հանգստաւէտ պայմաններում, մտածում ենք յիսուն տարիներ առաջ կատարուած Եղեռնի մասին, բնականօրէն ամենից առաջ մեր մտքին պատկերանում է մէկ միլիոնից աւելի կորուստը և առաջին իսկ առիթով յայտարարում ենք, թէ արհաւիրքի այդ օրերին, երբ որոշւել էր հայ ժողովրդի բնաջնջումը, մէկ միլիոնից աւելի անմեղ և անզէն ժողովուրդ նահատակւեց և փոքրաթիւ հայ ժողովուրդը իր ընդհանուր թւի համարեա մէկ երրորդը կորցրեց։ Առաջին կորուստը, ուրեմն, նահատակների թիւն է, որ ծանրօրէն ճնշում է մեզ վրայ։

Բայց, եթէ երբեք մի քիչ ընդարձակենք մեր մտածումը և հարցնենք թէ ի՞նչ էր ներկայացնում հայ ժողովուրդը իր երբեմնի օջախում, այն ժամանակ կատարուած հաշւեկշիռը շատ աւելի ծանր պիտի կշռի եղած կորուստների վրայ։ Անմիջապէս յայտնենք, որ թւաբանական ճշգրիտ հաշիւներ, և ոչ էլ վաւերական թւահամարներ չէ որ պիտի փորձենք տալ, այլ ընդհա-

նուր ձևով, ակնարկային հպումներով, հնարաւորութեան սահմաններում, կատարած կորուստների յիշատակումն է որ պիտի կատարենք։

Ուրեմն, փորձենք ուրուագծային պատկերը տալ հայ ժողովրդի՝ Կիլիկիայում կամ օսմանեան կայսրութեան այլ շրջաններում։

Բոլորին յայտնի է, որ բիւզանդական կայսրութեան անկումից և Պոլսոյ գրաւումից յետոյ երկրի սահմաններում մնացած քրիստոնեայ բնիկ տարրերին կրօնական համայնքներ կազմելու առանձնաշնորհումներ տրուեցին, բացառիկ իրաւունքներով։ Այդ իրաւունքներից օգտուեց նաև հայ ժողովուրդը։

Պոլիսը դարերի ընթացքին մեզ համար հայկական բովանդակութիւն ստացաւ և որպէս թիւ ու որակ բացառիկ հանգամանք գրաւեց. հայերն ընդհանրապէս սեփականատէրեր էին և ժառանգաբար իրենց պապենական օջախն ունէին։

Կիլիկիայում և այլ շրջաններում, ուր բազմամարդ թւով հայեր էին ապրում, մի պահ եթէ նկատի չունենանք կատարած ճնշումներն ու կեղեքումները, իւրաքանչիւր ընտանիք իր պապենական հողի վրայ էր, ունէր տուն և ստացուածք, և ո՞վ գիտէ, քանի՛ սերունդներ նոյն տան մէջ անց էին կացրել իրենց կեանքը, և որդուց որդի փոխանցում կատարել։

Առաւելաբար ժողովրդի մեծագոյն տոկոսն իր սեփականութիւնն ունէր, և տան մէջ կային թանկարժէք իրեղէններ, և տակաւին այլազան տեսակի հարստութիւններ, իսկ գիւղերում ու գիւղաքաղաքներում հողն ամբողջապէս հայերի սեփականութիւնն էր, և շատ քիչ վայրերում գիւղատիրոջ ճորտերն էին։

Ուրեմն, մարդկային զոհերից բացի, երբ բոլոր շրջանները պարպուեցին, այն բոլոր կալուածներն ու տները,

այն բոլոր հողերն ու ապրանքները, որոնք հայ ժողովրդի սեփականութիւնն էին, ամբողջութեամբ գրաւուեցին և տան իրեղէններն էլ կողոպտուեցին։ Հաւանաբար, եաթաղանի այն օրերին, ահ ու սարսափի մէջ, գտնուեցին պաղարիւն անձեր, որոնք հանդարտութեամբ մտածեցին նաեւ իրենց հետ առնելիք իրեղէնների մասին և առաջին իսկ առիթով տան կալուածագիրը վերցրին, և թերեւս մինչեւ այսօր ապահով պահուած կալուածագրեր և այլ վաւերական թղթեր կարելի է գտնել բազմաթիւ մարդկանց մօտ։ Եթէ երբեք փորձենք դրամական արժէքի վերածել այն բոլոր հողերն ու ստացուածքները, որոնք հայ ժողովրդի սեփականութիւնն էին եղել, չգիտենք թէ ինչ ահռելի հաշիւների պիտի յանգենք։ Այս եւս կազմում է մեծագոյն կորուստը հայ ժողովրդի համար։

Երբ փորձում ենք թուել կատարուած կորուստները, մեր մտքի առաջ գալիս է նաեւ իւրաքանչիւր հայի սեփական գործը։ Հայերը յայտնի էին որպէս վաճառականներ, արհեստաւորներ և գործարանատէրեր։ Գործի մարդ էին և շնորհիւ իրենց աշխատունակ խառնուածքին, ամէն տեղ հասել էին նախանձելի դիրքերի։ Առեւտրական մարզում, շուկայում, արհեստների ասպարէզում, չէինք սխալուի, եթէ ասէինք թէ հայերն առաջին կարգի վրայ էին գտնուում։ Ամէն տեղ ստեղծել էին իրենց գործը, սեփական խանութ և սեփական գործ ունէին, պակաս չէր թիւը նաեւ այն անձանց, որոնք շնորհիւ իրենց ձեռնարէցութեան՝ տէրն էին արդէն հսկայական գործերի ու գործարանների։ Նրանք՝ իրենց դրամագլուխը դրել էին գործի մէջ և իրենց աշխատանքով աւելացնում էին ե՛ւ գործը ե՛ւ շահը։ Եթէ երբե՛ք կարողանանք դրամական արժէքի վերածել արհեստների, առեւտրի եւ տնտեսական այլ մարզերում հայերին պատկանող գործերը, պիտի նկատենք, թէ ինչպիսի՛ հսկայական գործեր, ինչպիսի՛

դրամագլուխներ եւ ինչպիսի՛ ապրանքներ փչացուեցին եւ դրամական ի՛նչ կորուստ արժեց հայերի համար։

Գիտենք նաեւ, թէ հին-հին շրջաններից, վանքեր, եկեղեցիներ և բարեսիրական այլ հաստատութիւններ, իրենց սեփականութիւններն ունէին և նրանք վաղ անուան տակ ազգային սեփական կալուածներ էին։ Նման սեփականութիւններ շատ ունէին ազգային Առաջնորդարանները։ Տակաւին գիտենք նաեւ, թէ վանքերն ունէին իրենց գիւղերը և այնտեղ աշխատում էին բազմաթիւ գիւղացիներ, և այսպէս, հասութաբեր գիւղեր ու կալուածներ ազգի սեփականութիւն էին։ Նոյն ձեւով գրաւեցին նաեւ ազգային կալուածները, և այն եւս, որպէս կորուստ, կարելի է աւելացնել ժողովրդի ունեցած կորուստների վրայ։

Ազգային հաստատութիւնների շարքում կարելի է թուել եկեղեցիներն ու դպրոցները և այլ ազգապատկան հաստատութիւնները, որոնք կառուցել էին բարերարութեամբ և կամ ժողովրդի լումաներով։ Վերջին շրջաններում հրատարակուող հայրենակցական միութիւնների պատմութիւններում և կամ այլ յուշագրութիւնների մէջ շատ ենք հանդիպում յիշատակութիւնների ազգային սեփականութիւն համարուող եկեղեցիների, դպրոցների եւ այլ հաստատութիւնների ու ոյակապ շէնքերի մասին, որոնք չգիտենք այսօր կանգո՞ւն են, թէ աւերակ, բայց միայն գիտենք, որ մեզ համար այլեւս կորուստ են, եւ վստահաբար, աւերուած վիճակում, եւ թերեւս շատերի հետքն իսկ անհնար է գտնել։ Այս եւս կորուստ է մեզ համար եւ ցաւով ենք յիշում, թէ ինչպի՞սի սքանչելի շէնքեր քանդուեցին եւ ոչնչացուեցին, եւ նրանց դրամական արժեւորումը ո՞վ գիտէ ինչքա՛ն է։

Մեր սեփական հողերի վրայ կային նաեւ պատմական կոթողներ, ճարտարապետական գլուխ գործոց վանքեր ու եկեղեցիներ, որոնք մինչև այսօր իրենց սքանչելի կառուցուածքով բոլոր այցելուներին հիացում և զարմանք են պատճառում։ Այսօր այդ վայրերն ամայի են և բնութիւնն իր դրոշմը դրել է սքանչելի հնութիւնների վրայ. նրանք ենթակայ են քայքայման և փլուզման. ո՞վ պիտի պահպանի և առաջն առնի բնութեան աւերների։ Միջազգային մամուլում յաճախ նկատում ենք նկարագրող յուշագրութիւններ, ճամբու նօթեր, և մեր ազգային հպարտութիւնը շոյւում է կատարուած ներքողներով ու հիացիկ արտայայտութիւններով, և առաւել հրճւանքով ենք լեցւում, երբ ակնարկում են նաեւ թէ այդ սքանչելի կոթողներն ո՛ւմ գործն են և այնտեղ ո՛վքեր են ապրել և ո՛ւմ սեփականութիւնն են եղել։

Բայց գլխաւոր մտահոգութիւնը, որ բռնագրաւողից աւելի մերն է, նրանց պաշտպանութեան հարցն է։ Իւրաքանչիւր պետութիւն հիանում է իր հնութիւններով և այդ գործի համար յատուկ հաստատութիւններ ու բազմաթիւ հիմնարկութիւններ կան, եւ ահագին դրամներ են տրամադրում հնագիտական վայրերը պահելու համար։ Որեւէ երկրի այցելուների թիւը բազմացնելու գլխաւոր միջոցը հնագիտական վայրերի ձգողական ոյժն է։ Որքան գիտենք, հիմիկւայ պատասխանատու անձերն այնքան էլ մտահոգ չեն այդ վայրերում գոյութիւն ունեցող սքանչելի կառուցումների պահպանման համար։ Չգիտենք, պահակներ կա՞ն, թէ այդ պատահականութեան է թողնուած։ Կարծում ենք, Իւնեսքոն էլ, որ ահագին դրամներ է ծախսում հնագիտական արժէք ներկայացնող վայրերի վրայ, այդ ուղղութեամբ աշխատանք չի տանում։ Բնականօրէն, շահագրգռողն և հետաքրքրողն էլ չկայ։ Պատասխանատու պետութիւնն էլ այսքան տարիների ընթացքին ո՛չ միայն պատշաճ կարգադրութիւններ չարեց, այլ այդ ամբողջ վայրերն ամայի վիճա-

կում թողեց և խիստ արդելքներ դրեց այցելութիւնների նկատմամբ։

Մեզ համար նրանց պահպանութեան հարցը մտահոգութիւն է պատճառում, որովհետեւ եղակի կոթողներ են եւ նոր կառուցումները ինչքան էլ շքեղ լինեն, չեն կարող նրանց փոխարինել։ Նկատի ունենալով նման կառուցումները եւ կոթողները, առ այժմ նրանք էլ կորուստների մէջ են մտնում եւ այժմեան վիճակը ցաւ է պատճառում բոլորին։

Հիմնական կորուստի շարքին կարելի է նկատել նաեւ ձեռագիր մատեանները, որոնցից միայն շատ քչերը փրկուեցին, իսկ մնացեալների մասին որեւէ տեղեկութիւն չունենք։ Այրուեցի՞ն, փչացուեցի՞ն, թէ մնում են թագուն, մի օր այս կամ այն կողմից գտնուելու համար։ Ամէն պարագային, մեծ եկեղեցիներին կից մատենադարաններ կային, ուր խնամքով պահւում էին ձեռագիր մատեաններ, որոնց մէկ մասի ցուցակագրութիւնը կատարուել է և ձեռագրերի բովանդակութիւնը ծանօթ է մեզ, իսկ մէկ մասն անծանօթ վիճակում է մնացել։

Ձեռագիր մատեանների հետ պիտի աւելացնել նաեւ ոսկերչական այն նուրբ գործերը, որոնք եկեղեցու սեփականութիւնն էին կամ թէ մնում էին մասնաւոր հաստատութիւնների և տների մէջ, նրանք էլ կողոպտուեցին եւ անհետ կորան, պատճառելով մեծ կորուստ՝ հայ ժողովրդի ազգային ունեցուածքի վրայ։

Այսպէս, ուրեմն, Մեծ Եղեռնին նիւթական և բարոյական անհամար հարստութիւններ զոհ գնացին և մեզ համար ներկայացնում են որպէս անվերադարձ կորուստ։ Ո՞վ և ի՞նչպէս պիտի կարողանայ ստանալ՝ այս օրերի սնանկ պետութիւն ներկայացող երկրից հայ ժողովրդի կորցրած հողային և դրամական արդար իրաւունքները։

Տակաւին վերոյիշեալների վրայ կարելի է աւելացնել գուտ դրամական կորուստները, որոնք պատահեցին կողոպուտների ընթացքում և կամ այն բոլոր աւանդ գումարները, որոնք պահ էին տուած դրամատներին և պատկանում էին անհատ հայերի և կամ հաստատութիւնների։ Զգիտենք, թէ ի՞նչ ճակատագիր վիճակեց նրանց, բայց, վստահաբար, նրանք ևս համարուեցին կորուստ հայ ժողովրդի ունեցուածքի վրայ։

Արդ, ուրուագծային յիշատակութեամբ, ուրեմն, Մեծ Եղեռնին որպէս կորուստ ունեցանք մէկ միլիոն հայութիւն, տուն և այլ սեփականութիւններ, գործի, ունեցուածքի, աւանդ գումարների, կալուածների, մշակութային հաստատութիւնների և տակաւին բազմաթիւ այլ ունեցուածքների, որոնց դրամական փոխարժէքը գլխապտոյտ պատճառելու չափ անհաշուելի է։

Մանր կորուստները ժամանակի ընթացքին մոռացուում են, դրամական արժէք ունեցող այլ կորուստներն էլ թերեւս մոռացութեան տուեն, բայց հիմնական կորուստները մնում են և յիշւում դարերի ընթացքում։

Ամենից աւելի հիմնական կորուստ համարուեց հողային սեփականութիւնը, որովհետեւ այն բոլոր պապենական օջախներում, ուր բազմամբոխ ներկայութեամբ հայերն էին ապրում, պարպուեցին և համարուեցին «Հայկական Դատ» բնորոշումով ծանօթ հողային պահանջի խնդիրը։ Հակառակ բազմիցս խնդրոյ առարկայ դառնալուն և միջազգային դաշնագրերում նախատեսուած լինելուն, հայ ժողովրդին պատկանող հողերն ամբողջութեամբ պարպուեցին իրենց բուն իրաւատէրից, և մինչեւ այսօր էլ մնում են ամայի ու աւերակ վիճակում։

Մեծ Եղեռնի ընթացքին, հայ ժողովրդի ունեցած կորուստների մէջ թերեւս շատերն անհետ և անվերադարձ կորուստ համարուեն, բայց ինչ որ թերեւս բուն պատճառն էր նաեւ Եղեռնի, սպանդի, տեղահանութեան,

ցեղասպանութեան, մնալով հանդերձ որպէս կորուստ, տակաւին երկար ժամանակ պիտի շարունակի յիշատակուել, յաճախակի առիթներով արծարծուել, մինչև որ մի օր կարելի լինի իրաւազրկուած ազգերի վիճակով զբաղուող դիւանագիտական ներկայացուցիչների ուշադրութեանը յանձնել, և գէթ այս կերպով բազմաթիւ կորուստներից մէկը փրկել։

Ո՞վ գիտէ, գուցէ մի օր, գեղածիծաղ մի առաւօտ, չգիտենք մօտաւոր թէ հեռաւոր ապագայում, ամբողջ մարդկութեան ցնծութեամբ աւետենք, թէ հայ ժողովուրդը, շնորհիւ իր տոկունութեան, համբերութեան ու աշխատասիրութեան, կարողացաւ տէր կանգնել մոռացուելու վրայ եղող իր իրաւունքին։ Եւ եթէ մի օր արդարացիօրէն լուծուի հայ ժողովրդի հողային խնդիրը, հաւանօրէն ինքնաբերաբար մոռացուեն նաեւ միւս կորուստները, անչուշտ բացի մէկ միլիոն նահատակներից, որոնք յաւերժօրէն պիտի յիշատակուեն և մնան օրացոյցի մէջ, որպէս նոր օրերի նահատակներ։

Ահա, հպանցիկ ակնարկով ներկայացրինք այն, ինչ որ կորցրեց հայ ժողովուրդը Մեծ Եղեռնին։ Իսկ թէ ի՞նչ կատարուեց այս վերջին յիսուն տարիների ընթացքում, հայի և Թուրքի համար, այդ այլ պատմութիւն է։

ՀԱՅՏ. ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՐՈՒՍՏԸ ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻՆ

Առաջնորդք եղեն մեզ ուղիղ գնացիք ի տաւիղս արքայութեան երկնից. մեծապայծառ ջահիւ՝ հաւատով եւ սիրովն իւրեանց, ծագեցին զլոյս աստուածգիտութեան ի սիրտս մեր։

ԺԱՄԱԳԻՐՔ

ՀԱՅՑ· ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՐՈՒՍՏԸ ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻՆ

Ապրիլեան Եղեռնի ոգեկոչումով լեցուած այս օրերերին, երբ անդրադառնում ենք հայ ժողովրդի ունեցած կորուստների մասին, նիւթական, բարոյական և թւական մարզերում, ցաւով յիշատակում ենք նաև եկեղեցու կրած կորուստը, իր ամենալայն տարողութեամբ։

Հայ ժողովրդի ազգային և մշակութային կեանքում գլխաւոր դերակատար հանդիսացաւ նաև եկեղեցին, և իր ազգային լինելու հանգամանքը՝ իր մէջ բովանդակեց հայ ժողովրդի այլազան խաւերն ու հոսանքները և ճգնաժամային պահերին իր լայն մասնակցութիւնը բերեց ազատագրական շարժումներին կաթողիկոսների և պատրիարքների վերին հովանաւորութեամբ։

Եկեղեցին, իր սկզբնական շրջաններից մինչև այսօր, պահեց իր բարոյական հեղինակութիւնը, եղաւ մօտիկ թագաւորին, նախարարին, իշխանին, ժողովրդին, ժամանակի պահանջների և մտայնութեան համաձայն։ Միշտ էլ պահեց իր պատկառանքը և իր ներկայութեամբ հանդիսացաւ ոյժ և հեղինակութիւն առաւել և նուազ չափով գործօն մասնակցութեամբ, բոլոր ժամանակների ըն-

թացքում։ Եթէ երբե՛ք բաւարար ու գոհացուցիչ խղճմտութեամբ նկատի առնի եկեղեցու ունեցած ոյժը՝ ազգային և մշակութային կեանքում, այն ժամանակ մեր ունեցած յարգանքին, սիրոյն և պատկառանքին պիտի միանայ նաև մեր խորունկ հաւատքը հայ ժողովրդի և եկեղեցու անքակտելի միութեան և նրա մեծութեան, բարոյական ոյժին ու հեղինակութեան։

Աւելորդ կրկնողութիւն է այլևս խօսել եկեղեցու դերի և դիրքի մասին, մասնաւորաբար այս օրերին, երբ ամենայն լրջութեամբ գիտակցում ենք թէ մեր ազգային կեանքը իր վարչական այլազան բաժիններով հիւսւում է եկեղեցու մէջ, եկեղեցու շուրջ և եկեղեցու հետ։ Այստեղ պիտի չմոռանալ նաև այդ հսկայ հաստատութիւնը առոյգ և կանգուն պահող անհատներին, հոգևորական կամ աշխարհական, որոնք իրենց անձնազոհութեամբ միշտ էլ անսասան են պահում նրա հիմքը։

Վարչական մարզում աւելի դերակատար հանդիսացաւ եկեղեցին ԺԸ և ԺԹ դարերում, երբ աստիճանաբար առանձին ուշադրութեամբ օրինական հիմունք ստացաւ նրա կազմակերպութիւնը, ազգային և եկեղեցական գործերի կենտրոնացումով և վարչական ժողովներով։

Կաթողիկոսարան, պատրիարքարան և առաջնորդարան գլխաւոր կենտրոններն էին հայ ժողովրդի ներքին գործերի կառավարման և մասնաւորաբար հանդիսանում էին նաև ժողովրդի և պետութեան միջնորդ օղակը։

Օսմանեան կայսրութեան մէջ, շնորհիւ տրուած իրաւունքների, որոնք հեղինակութիւն էին ստանում կայսերական ֆերմաններով, եկեղեցին ներկայացրեց նաև հայ ժողովրդի և պետութեան միջև յարաբերող իրաւասու հաստատութիւնը։

Շնորհիւ այդ օրերի լայնախոհ մտայնութեան, ամենուրեք կազմակերպուեցին թեմերը և վարչական մեքենան միատեսակ հոլովոյթ և ընթացք ստացաւ։ Պետութեան կողմից ճանաչուած օրէնքն էր հիմքը ներքին ընտրութիւնների եւ վարչական ժողովների։

Տարիների ընթացքում, ամէն տեղ կառուցուեցին առաջնորդարաններ, եկեղեցիներ և կազմակերպուեցին թեմեր։ Իսկ ԺԹ դարում, շնորհիւ Օրմանեան և Դուրեան օրբազանների թափած ջանքերի, օրուայ պայմաններին համապատասխանող եկեղեցականներ, կուսակրօն կամ ամուսնացեալ, յատուկ շքեղութիւն տուեցին եկեղեցական կեանքին։ Ուստի այլևս եկեղեցականութեան գլխաւոր հիմքն էր։ Առաջնորդներ, քարոզիչներ և քահանաներ գործօն մասնակցութիւն ունէին կրօնական, ազգային և մշակութային կեանքում։ Արմաշի Դպրեվանքը կարճ ժամանակամիջոցում արդէն իսկ յիշեցնում էր հին շրջանների վանքերը, ուր ծաղկողներ, գրիչներ ու պատմիչներ կեանք էին տալիս ձեռագիր մատեաններին։ Պոլսոյ թաղային եկեղեցիներն արդէն իսկ օժտուել էին քարոզիչ վարդապետներով, իսկ գաւառները՝ առաջնորդներով։ Եկեղեցին վերազարթնումի մէջ էր, և ամենուրեք շնորհակալ նաւճումներ էին կատարուում։

Արևմտահայութիւնը, այդ ժամանակաշրջանում, այլազան գիւղերում և քաղաքներում 2000-ից աւելի եկեղեցիներ և վանքեր ունէր, բոլորն էլ համապատասխան եկեղեցականներով։ Եկեղեցին ծաղկման մէջ էր ապրում և գիտակից լուսաւորութեան մի նոր շրջան էր սկսել հայ ժողովրդի համար։

Ծաղկման այդ շրջանին յանկարծակի վերիվայրումի ենթարկուեց նաև եկեղեցին։ Եկեղեցու սրբազան իրերը կողոպտուեցին, շէնքերը գրաւուեցին, և երբ ժողովուրդը ամբողջութեամբ տարագրուեց, աւերուեցին և քար

ու քանդ եղան այն բոլոր աղօթավայրերը, ուր սերունդ-ներով ու սերունդներով ծունկի էր իջել հայ ժողովուրդը և իր արդար վաստակից բաժին հանել «Տիրոջ նըշխարի» համար։

Շէնքերի կորուստը, որոնց դրամական փոխարժէքն անպայման հսկայ գումարների է հասնում՝ նկատի ունենալով որ երկու հազարից աւելի եկեղեցիներ կային, մեզ համար համաբուեց անվերադարձ կորուստ, որովհետև շատերի հետքն իսկ չի մնացել այս օրերին։

Տարագրութեան ճանապարհին ժողովրդի հետ քըշուեցին նաև եկեղեցու բարձրաստիճան հոգևորականները, առաջնորդներն ու վարդապետները, քարոզիչներն ու քահանաները, և շատերը, տակաւին իրենց երիտասարդական թարմ ուժերի մէջ, խոշտանգուեցին և սպանուեցին։ Եաթաղանն իջնում էր նաև եկեղեցու սրտին, նրա զարկերակները դադարեցնելու համար։ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը իր պատմական վայրից, Սսից տարագրուում էր ալեհեր Հայրապետով եւ փոքրաթիւ միաբանութեամբ։ Վեհարանն ու մայր տաճարը շուտով վերածուում էր աւերակի եւ այդ կերպով հին-հին յիշատակներ անհետ ջնջուում էին եւ դառնում՝ յուշ եւ յիշատակ։ Ո՞վ գիտէ ինչպիսի դառնակսկիծ ապրումներ ունեցաւ հայոց ալեհեր Հայրապետը, երբ իրեն արմատախիլ էին անում մայր հողից։ Եկեղեցական իրերից շատ քչերն է, որ կարողացան իրենց հետ փոխադրել, իսկ մընացեալները, դարաւոր արխիւների հետ, կողոպտուեցին եւ հրոյ ճարակ դարձան։

Արմաշի Դպրեվանքն ամբողջութեամբ քանդուում էր, եւ այնտեղ սկսող կրօնական-մշակութային կեանքը թաղուում աւերակների տակ։ Իսկ այն սքանչելի սերունդը, Արմաշեան միաբանութիւնը, որ Պոլսում եւ գաւառներում տենդագին գործի էր լծուել, ամբողջու-

Պատմական կիսակցանկի մը վերջին դրվագները։ Նոյն վիճակը

թեամբ սպանուում էր, սուգի մատնելով եկեղեցին։ Քահանայից դասը, որ մինչև իսկ հեռաւոր գիւղերում հընչեցնում էր եկեղեցու զօղանջը, հայ գիւղացու աշխատանքին և երկրի բերքին Աստծոյ օրհնութիւնը հայցելու համար, գրեթէ մեծամասնութեամբ խոշտանգւում էր եւ սպանւում։

Այսպիսով, այն բոլոր անձինք նուիրեալները, որոնք եկեղեցու պայծառութեան և փարթամութեան համար իրենց աշխատանքն էին բերել, այն բոլոր մշակները, որոնք եկեղեցու տակաւ աղօտացող գահին և սեղանին ծիրանի էին հագցնում, ահա զոհւում էին որպէս կենդանի պատարագ եւ ողջակէզ։

Հետագային, երբ Ապրիլեան Եղեռնի մնացորդացը կայք հաստատեց այլազան երկրներում և գերագոյն զոհողութեամբ կարողացաւ մասամբ փարատել կատարուած կորուստները, եկեղեցին երկարօրէն չկարողացաւ լեցնել հսկայ բացը և տակաւին մինչև այսօր զգալի է տարէց սերնդի պակասը, մասնաւորաբար կուսակրօնների շարքում։

Տարագրւող ժողովուրդն էլ, ինքնակորոյս վիճակում, տկարացաւ ազգային-կրօնական սովորութիւնների մէջ, որոնք դարերի աւանդութեամբ յատուկ շքեղութիւն ունէին իր կրօնական կեանքում։ Ուխտակատար սրբավայրերը քար ու քանդ եղան, կամ մնացին իբրեւ յիշատակ յուշագրական մատեաններում։

Այսպիսով, ուրեմն, տարագրւող ժողովուրդը հարկադրաբար լքում էր երկու հազարից աւելի վանք և եկեղեցի, իրենց նրբաբեստ հաստատութիւններով, ոսկերչական արուեստի գեղեցկութիւնները արտացոլող եկեղեցական իրերով, սրբազան մատեաններով և ամենից աւելի կսկծալին՝ բազմաթիւ նահատակ եկեղեցականներով։

Եկեղեցական այնպիսի մի սերունդ էր առաջ ե-



ԱՀՈՒՐԻԼ 24-Ը

կել, որ ժողովուրդը հրճւագին հետեւում էր նրանց միջոցով կատարւող նւաճումներին։ Նրանք գիտակից իրենց կոչումին, հմուտ՝ եկեղեցական գիտելիքներին, օժտւած մտաւորական և վարչական կարողութիւններով, պանծացնում էին Հայց. եկեղեցու անունը։ Արմաշը կարծես անցեալից յանկարծակի յայտնւող Հաղպատի կամ Սանահինի վանքն էր իր հմուտ և եռամեծար կղերականներով։ Արմաշի երիտասարդ սերնդից հազիւ մի քանի հոգի ազատւեցին սպանդի ճիրաններից, մնացեալները օսմանեան կայսրութեան ոստիկանների կողմից առաջնորդւեցին անծանօթ վայրեր, և այնտեղ, ժողովրդի աչքից հեռու, քարերով կամ դաշոյններով սպանւեցին։ Հաւատաւոր քահանաները նոյն ճակատագրին ենթարկւեցին։ Հօտ եւ հովիւ միասին արտասւեցին ու ողբացին։ Կիլիկիոյ ծերունազարդ Հայրապետն այլեւս համարձակութիւն իսկ չունէր յետ դառնալու, որովհետեւ այնտեղ ամէն ինչ աւերակ էր եւ սուգի մէջ, իր եղբայրները խոշտանգւել էին եւ նահատակւել, նրանց սպանւած վայրն իսկ անծանօթ էր։ Աղօթք ու խունկ... բայց որտե՞ղ, ո՞վ շիրիմ ունեցաւ, որ նահատակ եկեղեցականներն ունենային։

Ապրիլեան Եղեռնին մեծագոյն կորուստն ունեցաւ եկեղեցին՝ հոգեւորականների սպանութեամբ, եւ տակաւին, մինչեւ այսօր, հակառակ թափւող ճիգերի, հնարաւոր չեղաւ նրանց կորուստը դարմանել։

Խունկ եւ աղօթք նրանց անշիրիմ, բայց անթառամ յիշատակին։

ՀԱՅ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՐՈՒՍՏԸ ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻՆ

Ճառագայթ փառաց...

ՀԱՅ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՐՈՒՍԸ ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻՆ

Ազգերի մեծութեան չափանիշը իրենց մշակոյթն է։ Մշակոյթն էլ գոյակերտւում է մարդկանցով։ Մարդիկ, որոնք իրենց պատրաստութեամբ, ուսումով և տաղանդով բաժանւում են սովորական մարդկանց խմբից, բարձրանում են ժողովրդի սովորական մակարդակից և կազմում են ներկայացուցչական տարրը՝ պատւաբեր նւաճումներ կատարողների։

Մտաւորականը հասնում է բազմաթիւ տարիների պատրաստութեամբ, ի գին մեծ զոհողութիւնների, և իր գործունէութեամբ սատարում ժողովրդի վերելքին։ Սրւեստի այլազան ճիւղերը իրենց յառաջադիմութիւնը պարտական են այն քաջառիկ անհատներին, որոնք որպէս արդիւնք իրենց տքնաջան աշխատանքների, մնայուն գործեր են տալիս և իրենք էլ արժանանում յաւիտենական յիշատակութեան։

Մտաւորական տարրը հասարակութեան բարձրագոյն և վերին խաւն է։ Կարելի է ասել մտաւորականը ժողովրդի ուղեղն է, իր մտածելու եւ գործելու հանգամանքով։ Գիտութիւնը, արւեստը եւ մշակոյթը մտաւոր-

բականների միջոցով են ճոխացնում իրենց հարստութիւնը։ Մտաւորականներն արուեստի այլազան մարզերում եւ կամ այլ ասպարէզներում իրենց մասնակցութիւնն են բերում եւ սատարում մշակոյթի ուռճացմանը եւ այդպիսով բարձրացնում իրենց պատկանած ազգի անունը։

Ժամանակին հասարակական կեանքում մտաւորականները գրաւում էին առաջին տեղը։ Նրանք էին գլխաւոր դերակատարներն ազգերի յարաբերական կեանքում։ Շնորհիւ իրենց ստեղծագործութիւնների՝ մեծ արուեստագէտները դառնում էին համամարդկային դէմքեր։ Գաւառներում, ուր դպրոցական ցանցը քիչ տարողութիւն ունէր, մտաւոր լուսաւորութիւնը նւազ չափով էր տարածւում և մշակութային նւաճումները թեթեւակի կերպով թափանցում, գրաճանաչը հանդիսանում էր մեծագոյն անձնաւորութիւնը եւ բոլորի կողմից արժանանում էր յարգանքի ու պատւի։ Մասնաւորաբար Արեւելքում այսպէս էր ընդհանուր կացութիւնը։

Ժողովրդի մտաւոր լուսաւորութիւնը կատարւում է մտաւորականների եւ մասնաւորաբար կրթական մշակների միջոցով, կարեւոր էլ չէ թէ նրանք թւով շատ լինեն, միշտ որակն է որ մեծ կշիռ է ունենում։ Պատմութեան ընթացքում դարաշրջաններ կան, հանգրւաններ կան, որոնք անձերի անուններով են յատկանշւում։ Նրանք բացառիկ կարողութեամբ անհատներ են, որ անջատւում են մարդկանց հաւասար դաշտից, կազմում են բարձրաբերձ լեռներ ու տեսնւում բոլորի կողմից, կամ այլ բացատրութեամբ՝ նրանք շողացող աստղեր են, որոնց ամպերն իսկ չեն կարող ծածկել մարդկանց աչքերից։

Մեր ազգային կեանքում եւս գլխաւոր դերակատարները հանդիսացել են մտաւորականները։ Ոսկեդարն էլ որ աննախընթաց երեւոյթ էր այդ շրջանի ընդհանուր ազգերի պատմութեան մէջ, իր յաջողութիւնը պարտա-

կան է փոքրաթիւ մտաւորականների խմբին։ Մի խումբ նւիրեալներ նոր դարաշրջան բացեցին մեր ամբողջ ազգի համար։ Ամբողջ Հայաստան աշխարհի մտաւոր լուսաւորութիւնը Մեսրոպեան խմբի շնորհիւ կատարւեց։ Ժողովրդական լայն խաւերի մէջ ուսումը տարածւեց անձնազոհ եւ նւիրեալ մարդկանց աշխատանքով։ Այնուհետեւ, դժւարին պայմաններում, մշակոյթը նւաճումներ արձանագրեց շնորհիւ անխոնջ մշակների, որոնց անունները յաւերժացել են հայոց դպրութեան մատեանում։

Իւրաքանչիւր ժամանակաշրջան տւել է իր դրոշմը պատմաբանի եւ գրողի աշխարհայեացքին եւ այսօր մեզ փոխանցւած գործերի միջոցով հեշտութեամբ կարողանում ենք ապրել բոլոր ժամանակաշրջանների հոգեվիճակը։ Ճիշտ է, որ ամբողջ հայ ժողովուրդը իր հաւաքական կեանքով մտաւոր լուսաւորութիւն չի ստացել երկար դարերի ընթացքում, բայց կատարւածը եթէ համեմատութեան մէջ դնենք դրացի ազգերի մշակոյթի հետ, պիտի նկատենք, որ եղածն էլ պատւաբեր նւաճում է։

Եթէ երբեք առաջինը չենք, վերջինն էլ չենք, առաջինների շարքումն ենք կանգնած. վկայ մեր մշակոյթը։

ԺԹ դարում հայոց գրական լեզուն իր վերջնական կազմաւորումն ստացաւ, իր արեւելահայ եւ արեւմտահայ ճիւղերով։ Դպրոցներ, գրքեր, թերթեր ու այլազան տեսակի հրատարակութիւններ սերտ կապ ստեղծեցին ժողովրդի լայն խաւերի եւ մշակոյթի միջեւ։ Եւրոպական ոստաններում իրենց կրթութիւնը ստացած մտաւորականներ, տոգորւած հայրենի մշակոյթով եւ լեցւած գործելու ախուռնով, լծւեցին գործի։ Մշակոյթի կենտրոններ դարձան Պոլիսը, Թիֆլիսը, Իզմիրը, Վասպուրականը եւ այլ շրջաններ, իրենց դպրոցներով ու վանքերով։

Պոլսում մասնաւորաբար հայ ժողովրդի արեւմտ-

տեան թեւը իրրեւ քանակ և որակ ստացաւ իր հայեցի կազմաւորումը։ Բազմաթիւ վայրերից Պոլիս փոխադրեցին և տարէց տարի կատարւած նւաճումները ստեղծեցին հայկական Պոլիսը, և այդպիսով նա դարձաւ մշակութային նախանձելի մի կենտրոն։ Աստիճանաբար կազմակերպւեցին նաեւ գաւառներն ու շրջանները, ուր մամուլը ևս իր փրկարար դերը կատարեց։ Դպրոցն ընդարձակեց իր ցանցը և յայն խաւերի գաւակներին ընդունեց իր մէջ։ Գրականագէտները ստեղծագործական և թարգմանչական աշխատանքներով նոր շունչ, նոր եռանդ, թափ ու թռիչք ներշնչեցին երիտասարդութեան. գրականութիւնն արագաթռիչ ոստումներ կատարեց և նորանոր նւաճումներն ուռճացրին հայոց մշակոյթը։ Գիրն ու գրականութիւնը մուտք գործեց ընտանիքների մէջ, մեծ յեղաշրջում կատարւեց հայկական կեանքում։ 1860-ական թւականներին հայ ժողովուրդը գարթօնքի շրջան էր ապրում։

Ընկերային և հասարակական կեանքն ևս նոր կազմաւորում և նոր թափ ստացաւ։ Հայ ժողովրդի վարչական կեանքը փոխւեց, ամիրայական քմահաճ կարգադրութիւնների փոխարէն, ժողովրդավարական հիմունքներով, սահմանադրական օրէնքներ մշակւեցին։ Սերտ գործակցութիւն ստեղծւեց ժողովրդի և ազգային իշխանութեան միջեւ և այս բոլորը կատարւեց շնորհիւ Եւրոպայից վերադարձող երիտասարդ մտաւորականների տքնաջան ու կորովի աշխատանքների և կրթական բազմաթիւ մշակների եռանդուն ջանքերի։ Դպրոցը, թատրոնը, մամուլը, դասախօսութիւնները և այլ ձեռնարկները նոր ձեւաւորում տւին ազգային-հասարակական կեանքին։ ԺԹ դարի վերջաւորութեան մտաւորականների խումբն արդէն իսկ մեծ նւաճումներ ձեռք բերեց։ Այսպէս, խաղաղ պայմաններում ուռճանում և զարգանում էր հայոց

մշակոյթը։ Հայ ժողովուրդը վերելքի մէջ էր։

Ի. դարում արեւմտահայութիւնը վայելում էր արդէն գրականութեան և արւեստի այլ մարզերում կատարւող նւաճումների արդիւնքը։ Տքնաջան աշխատանքներն ու մեծ զոհողութիւններն արդիւնաւորւեցին, այլևս հայ ժողովրդի մեծագոյն գանձը մօտիկ էր եւրոպական առումով նրբագոյն ճաշակների։ Գեղարւեստագէտ սերունդն իր դրոշմը դրել էր օր ըստ օրէ աճող գրականութեան վրայ։ Հրատարակութիւններն իրար էին յաջորդում։ Ուռճանում էր հայոց մշակոյթը և իր հետ բարձրացնում հայ ժողովրդի անունը։ Գաստիարակւում և կրթւում էին երիտասարդները, և իրենց ծառայութեամբ պատիւ բերում ազգին։ Գրականութիւնը, շնորհիւ տաղանդաւոր մշակների, համարեա թէ հասել էր իր գագաթնակէտին և իրաւամբ այդ շրջանը գրական քրննադատների կողմից բնորոշւում է արւեսաագէs սեռնդի շրջան։ Այնտեղ էին Կոմիտասը, Դանիէլ Վարուժանը, Սիամանթօն, Գրիգոր Զօհրապը, Զարդարեանը, Սնունին, Ինտրան, Ռ. Սեակը, և խումբը մեծ մտաւորականների։ Ինչքա՜ն լոյս, ինչքա՜ն եռանդ, ինչքա՜ն ստեղծագործութիւն կար այդ շրջանում։ Լոյսի աղբիւրը մօտ էր բոլորին և նրանք ըմբոխշնում էին կատարւած նւաճումները։ Երանելի վիճակ, երանելի օրեր, հայ մշակոյթի գարուն օրեր, ծաղկուն ոստաններ։

Բայց յանկարծակի խաւարն իջաւ բոլորի վրայ, մթագնեց հայոց պայծառ երկինքը, վերիվայրումների ենթարկւեց ամբողջ հայկական կեանքը։ Հայ մտաւորականները ժողովրդի հետ ապրեցին 1895-ի ջարդերը, որին հետեւեց 1915-ի Եղեռնը։

Բոլոր ցաւալի պատահարները իրենց արձագանգը գտան մտաւորականների ապրումների մէջ և այդ շրջանի ստեղծագործութիւններն ամբողջութեամբ դար-

ձան ողբի, լացի ու արցունքի տաղեր. ցաւ ու վիշտ էր երգում հայ երգիչը։ Ողբի ու կոծի մէջ հայոց քնարը դարձաւ միալար։ Սեւ խաւարը դարձաւ հային ընկեր, այլեւս բնութիւնը իր բազմահրաշ երեւոյթներով չէր ներշնչում բանաստեղծին։ Հայ ժողովուրդը հրկիզւում էր, ջարդւում էր. ողբասացներ էին դարձել բոլոր տաղերգուները։ Արցունք ու լաց էր երգում հայի սիրտը։ Դարաւոր ոսոխը դարձել էր հայ հոգիների ամենից տիրական սարսափը, զոհերի արիւնը միշտ թաց էր մնում հայ գրականագէտների երգերի մէջ։ Սկսել էր հայ ժողովրդի Գողգոթան և այնտեղ հիւսւում ու երգւում էին միայն տխուր երգեր։

Արեւմտահայութեան մշակութային կենտրոնները պարպւում են իրենց բովանդակութիւնից։ Առաջին իսկ առիթով ձերբակալւում են մտաւորականները և առաջնորդւում բանտ։ 1915-ի Ապրիլի 24-ին, տակաւին լոյսը չբացուած, տաճիկ ոստիկանները, տրուած հրահանգի և ցուցակի համաձայն, ձերբակալում են մտաւորականներին և աչքի ընկնող ազգային գործիչներին։

Պատճառաբանութիւն և հարցաքննութիւն չկար։ Շփոթի, լացի, սուգի օրն սկսել էր արդէն։ Բազմահարիւր ընտանիքներ իրար էին անցել և խուճապի ենթարկւել։ Կրթական մշակներ, մամուլի աշխատակիցներ, մտաւորականներ, ազգայիններ լցրել էին արդէն բանտերը։ Ապրիլի 24-ին չարաշուք օր էր սկսւում հայ ժողովրդի համար։ Լացն ու կոծը գալիս էր հայ տներից, ձերբակալւածներից լուր չկար, ազատ մնացողների վիճակն էլ անորոշ էր։ Ցանկարծակի տուն էին մտնում, կողոպտում էին տան իրեղէնները, ձերբակալւածներին տանում էին անծանօթ ուղիներ և այնտեղ սպանում։ Երիտասարդ հարսերին և աղջիկներին այլ ճակատագիր էր սպասում։ Երեխաներին, եթէ ողջ թողնէին, յանձնում էին ողբաս-

հաւաք օտար հաստատութիւնների։ Ո՞վ կարող էր դիմադրել, ո՞վ կարող էր ընդդիմանալ։ Սարսափի, վախի և սպանդի օրերն սկսել էին։

Այսպէս, մեր անմոռանալի ու տաղանդաւոր մտաւորականները տակաւին ստեղծագործելու աւիւնով լեցուած, ձերբա-

Նահատակ գրագէտների եւ ազգ. գործիչների մի հոյլ.

կալւում էին և աքսորւում։ Երկար տարիների պատրաստութեամբ հասարակական կեանքի մէջ արդէն իսկ մնայուն տեղ գրաւած և օր ըստ օրէ նուաճումներ արձանագրող բանաստեղծներն ու արձակագիրները յանկարծ-

օրէն շիջում էին։ Արիւնարբու թշնամու թաթը իջնում էր նրանց վրայ և նրանք դաղարում էին ստեղծագործելուց։ Ինչքա՜ն առոյգ ու կենսունակ և իրենց սքանչելի տեսիլներով ու ապրումներով մտաւորականներ անծանօթ վայրերում խոշտանգուեցին ու սպանուեցին։

Ապրիլի 24-ին լռեց «Հորովել, հո՜»ն, եղեգնեայ գրչով փառքեր երգող ու ցեղի սիրտը լսելի դարձնող գրիչը փշրուեց, «Հոգեվարքի և յոյսի Ջահեր» փոթորկող երգիչը չքացաւ, «Լուռ ցաւերը» յաւիտենական ցաւերի վերածուեցին, և պանդուխտի երգեր հիւսող տաղասացները դարձան պանդուխտ ու աքսորական։ Փշրուեցին և կըտրուեցին բոլոր գրիչները։ Հայոց գրականութիւնը որբացաւ, հայոց մշակոյթը ամայացաւ, հայոց երդիքները սուգ հագան։ Զորանալիք ձեռքերը չխնայեցին աննման տաղանդներին, փայլուն ստեղծագործողներին, և բոլորին բոլորին, ովքեր ներկայացնում էին հայ ժողովրդի լաւագոյն դասակարգը, մտաւորականների անդերազանցելի փաղանգը։

Հայոց երկինքը մթագնեց, խաւար պատեց լոյսեր բաշխող հայ դպրութեան օջախների վրայ, բեռնատար կառքերով, սայլերով ու հետիոտն, սւինների սարսափի տակ, մեր մշակոյթի ջահակիրները առաջնորդուեցին ամայի վայրեր, քարերով, սուրերով, բութ դանակներով խողխողուեցին ու նրանց համբուրելի ուղեղները փշրուեցին։ Անգութ ձեռքեր, յաւիտենական անէծքի արժանի ոճրագործներ, յօշոտեցին բոլորին։ Զոհուեցին և լռեցին անդերազանցելի երգիչները, ընկան նրանք հայրենիքի ազատութեան համար։ Հոսեց նրանց արիւնը հայոց մշակոյթի համար։ Նրանք ընկան ո՛չ թէ հայրենական մարտում, այլ գազանային գործերի համար բարբարոս մարդկանց ձեռքով։

Հաղորդելու համար նրանց սրբազան յիշատակով, սարսուռով ու դողացող մարմնով, յիշատակենք մի քանիսի անունները.— Դանիէլ Վարուժան, Սիամանթո, Գր-

ՆԱՀԱՏԱԿ ԳՐԱԳԷՏՆԵՐԻ ԵՒ ԱԶԳ. ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԻ ՀՈՅԼ.
Գր. Զօհրապ, Է. Ակնունի, Վարդգէս, Խաժակ, Սիամանթո, Դ. Վարուժան, Յ. Շահրիկեան, Ռ. Զարդարեան, Ռ. Սեւակ, Չեօկիւրեան, Օլանեան, Հրանդ, Գեղամ Բարսեղեան.

բիգոր Զօհրապ, Ակնունի, Գեղամ Բարսեղեան, Մելքոն Կիւրճեան, Վարդգէս, Ռուբէն Սևակ, Գ. Խաժակ, Ռ. Զարդարեան, Թլկատինցի, և տակաւին շատեր, մինչև երեք հարիւրի հասնող։ Հայ մտաւորականները առաջին զոհերը դարձան զազանային և ճիւաղային ծրագրի։ Աշխարհի վրայ կարծես միայն մեղաւոր ազգը հայն էր, որ պիտի քաւէր իր հայ ծնուած լինելու մեղքը։

Ապրիլի 24-ին շիջում և մարում էին լուսապայծառ դէմքերը հայ մտաւորականների։ Հայ կրթական հաստատութիւններում և եւրոպական ոստաններում լուսաւորուած հայոց ազգի երգիչները փշրուում էին անտաշ քարերով, բութ դանակներով։ Բանտ, աքսոր, սպանութիւն և յաւիտենական լռութիւն։ Լռութիւն և ամայութիւն հայ գրականութեան։ Կորուստ հայոց ծաղկող մշակոյթի։ Սուգ հայ ժողովրդի։

Այսօր, նրանք նստած հայ գրականութեան պանթէոնում, յաւերժօրէն լեցնում են իրենց ներկայութեամբ ուղեղները հայոց մատաղ սերնդի։ Գրականութեան միջոցով սրբազան հաղորդութիւն է կատարւում մեր և նրանց միջև։ Նրանք դարձել են յիշատակի խորաններ, ուր իրենց անուան հետ զետեղուել է նաև անմահութեամբ պսակուած գործը։

Անթառամ ծաղիկներ, անկորնչելի անուններ, փառքի ճառագայթներ։ Յաւիտենական լոյս իրենց յիշատակին։

ՉՄՈՌԱՆԱՆՔ

Եթէ մոռացայց զքեզ, Երուսաղէմ, մոռացցի զիս աջ իմ։ Կցեսցի լեզու իմ ի քիմքս իմ՝ թէ ոչ յիշեցից զքեզ, թէ ոչ նախ նուագեցից զքեզ, Երուսաղէմ, սկիզբն ուրախութեան իմոյ։

(ՍԱՂՄ. ՃԼԶ 6)

Յուր լիցին ձեզ կապեալքն, որպէս թէ դուք ընդ նոսա կապեալք իցէք, եւ չարչարեալքն, որպէս եւ դուք իսկ մարմնաւորք էք։

(ԵԲՐԱՅԵՑԻՍ ԺԳ 3)

ՁՄՈՌԱՆԱՆՔ

Հայոց պատմութեան գրքերում յաճախ հանդիպում ենք Հայաստան արշաւող բանակների աւերումներին և սպանութիւններին։ Յուզումով ենք լսում և կարդում հսկայական արշաւանքներին զոհ գնացած անզէն և անպաշտպան ժողովրդի սպանութեան և չարդերի մասին։ Սոսկումով ենք կարդում բռնապետների կատարած աւերմունքների և հազարաւոր անմեղների սպանութեան մասին։ Աւելի սրտաճմլիկ իրողութիւններ են պարզում օտարների տիրապետութեան ընթացքին հարկահաւաքների, ոստիկանների ու կառավարիչների կեղեքումներն ու ճնշումները և գազանային արարքները։

Պատմութեան դասագրքերից առաւել մեր պատմագէտներն են, որ աւելի մանրամասն և սրտառուչ տեղեկութիւններ են տալիս կատարուած աւերումների և ըսպանութիւնների մասին։ Մեր ամբողջ պատմութիւնն այլազան դէպքերի բերումով հիւսւել է մարտերի և արիւնահեղ ընդհարումների մէջ։ Դարեր շարունակ օտար բռնակալների արիւնոտ սուրը կախւած է եղել հայ ժողովրդի գլխին։ Դարերի ընթացքում զանազան այլազգի և այլադաւան թշնամիներ տարել են մեր արդար վաս-

տակի արդիւնքը, ոտնատրել են մեր ամենանուիրական սրբութիւնները, ձեռք են բարձրացրել մեր ազատութեան և անկախութեան վրայ, վիրաւորել են մեր ազգային արժանապատուութիւնը, արհամարհել են մեր լեզուն ու կրօնը, ոչնչացրել մեր հոգևոր, իմացական և նիւթական լաւագոյն յուշարձաններն ու կոթողները, խորապէս խոցել են մեր հոգին և բռնադատել մեր իրաւունքն ու պատիւը։

Օտար բռնակալների պատճառով է որ խաղաղասէր ու ստեղծագործ հայ ժողովրդի երկիրը պարբերաբար դարձել է պատերազմների թատերաբեմ, աւերւել և ամայացել են ծաղկուն քաղաքներն ու գիւղերը, և այս, շատերի կարծիքով, Հայաստանի աշխարհագրական դիրքին է վերագրւել։

Քարքարոտ Հայաստանը հայ մշակների աշխատանքով վերածւել է ճոխ ու փարթամ քաղաքների ու գիւղերի, վանքեր և այլ հաստատութիւններ ու շինարարութիւններ գեղեցկացրել են Հայաստանը։ Ցաճախակի աւերումները երբեք չեն կասեցրել հայ ժողովրդի աշխատանքի թափը։ Աւերւածը միշտ էլ վերաշինւել է երբ նպաստաւոր պայմաններ են ստեղծւել։

Այս ուղղութեամբ հետաքրքրական է Ժ դարի ազգագրագէտ Իբն Ալֆակիհ Համադանիի «Երկրների գիրք» գործի մէջ եղած մէկ ակնարկութիւնը, թէ՝ «Ես գտայ գրքերի մէջ..., որ Մեքքան աւերում են հաբէշները, Մեդինան՝ սովը, Բասրան՝ ջրհեղեղը, Քուֆը՝ գաղթը, Ջիբալը քար ու քանդ է լինում կայծակի հարուածներից ու երկրաշարժներից, Խորասանը՝ այլ և այլ պատուհասներից, Ռէյը բռնադատում են Դիլմացիք և Թափարստանցիները, իսկ ինչ վերաբերում է Հայաստանին և Ատրպատականին, ապա այդ երկու երկրները կործանւում են հեծելազօրի սմբակներից և մէկ էլ կայծակների ու

երկրաշարժի հարուածներից»։

Նոյն հեղինակը մէջբերում է նաև հետևեալ խօսակցութիւնը. «Սիրիացի Մաքհուլն ասաց.—Ամենից յաճախակի աւերմունքի ենթակայ երկիրը Հայաստանն է։ Նրանից հարցրին՝ ի՞նչն է դրա պատճառը. նա ասաց.— Հեծելազօրի սմբակները»։

Նոյնիմաստ միտք է արտայայտում նաև ԺԲ դարի հայ պատմիչ Մատթէոս Ուռհայեցին։ Պատմիչը նկարագրելով սելջուկեան բռնապետների Հայաստանում կատարած աւերածութիւններից մէկը, դառնացած բացագանչում է. «Սմբակք երիվարաց նոցա մաշեցին գլերինս և գբլուրս»։

Հայ ժողովրդի խաղաղասէր ու ստեղծագործ խառնուածքի ու պատմական ճակատագրի միջև եղած յիշեալ ուժեղ և ցայտուն հակադրութիւնը ծանրացրել է նրա կեանքը։ Բարեբախտաբար, այս բոլորով հանդերձ, ժողովուրդը երբեք չի յուսահատւել, տոկացել է և ապագայի համար վառ յոյսեր ու հեռանկարներ է հիւսել։ Ամէն անգամ պայքարով դիմադրել է իր երկիրը խուժող թշնամուն և ազատագրելով նրանից հայրենի հող, մեծ ջանասիրութեամբ, արիւն-քրտինք իրար խառնելով, վերականգնել է իր քանդւած բոյնն ու երկիրը։ Անդուլ աշխատանքով և ծանրածանր տքնութեամբ նոր ի նորոյ վերաշինել է իր աւերւած քաղաքներն ու գիւղերը, ակօսել խոպան մնացած դաշտերը, հրաշակերտել իր հոյակապ վանքերն ու տաճարները, զարդացրել իր գիրն ու գրականութիւնը, հնչեցրել իր աշխատանքի ու սիրոյ զմայլելի երգերը և աղօթքներով գոհունակութիւն է յայտնել Աստծուն իր վայելած բարիքների համար։

Որքան աւելի արիւնարբու և բարբարոս է եղել թշնամին, այնքան աւելի մեծ ու անսասան է եղել հայ ժողովրդի պայքարի ու կառուցելու կորովը։ Ցաճախ իր

խոփը վահան դարձրած և գրիչը սուր, վանքերը դարան շինած ու խաչքարերը դիրք, խաչն ու սուրը իրար միացրած, յամառօրէն դիմադրել է Թշնամուն։ Արիւնահեղ կռիւներով, անհաւասար ուժերով, բազմաթիւ մարտերում աշխատել է իր հայրենի սահմաններից հեռու վանել ոսոխներին։ Բազմաթիւ տարիների ընթացքում հետզհետէ բուժել է նրանց հասցրած ծանր ու խոր վէրքերը։ Բայց բուժելով, վերաշինելով, վերածաղկեցնելով երբեք չի մոռացել իր պատուհասիչներին, Թշնամիներին, նրանց կատարած աւերն ու աւարը, նրանց դաւադիր ու նենգ կերպարը, նրանց չար ու վատ կեցուածքը։ Պատմիչների և գրողների միջոցով դրոշմել է նրանց անունները, նրանց հետ իր յարաբերութիւնների ընթացքում աշխատել է միշտ զգոյշ լինել, թափել է արիւն, պատուհասել է անհատ ոսոխների, և այս բոլորը ի շահ հայ ժողովրդի և հայրենի երկրի ազատութեան և անկախութեան։

Բնականօրէն, սխալ կը լինէր ասել, թէ մեր ամբողջ պատմութիւնը ողբերգութիւնների շարան է և մեր պատմիչներն էլ ողբերգուներ են։ Ունեցել ենք նաև քարգաւաճ, խաղաղ և շինարարական շրջաններ։ Մենք այստեղ շեշտը առաւելաբար դնում ենք տխուր իրողութիւնների վրայ, առանց այդ յաւերժացնելու մտածումն ունենալու, ցանկանում ենք չմոռացուելիք դէպքերի ու Թշնամութիւնների մասին արձագանգել միայն։

Դպրոցում աշակերտը իր այլազան դասերի հետ սովորում է նաև հայոց պատմութիւն և այդ կերպով հոգեկան կապ է ստեղծւում անցեալի ու ներկայի միջև։ Տարիներ յետոյ՝ իր սովորածներից աղօտ պատկերներ, յիշողութիւններ և դէպքեր են մնում միայն։ Սպասելի չէր, որ ամէն ինչ մանրամասնութեամբ յիշէր և ամէն բոպէ կարողանար պատանեկան թարմ յիշողութեամբ պատմել։ Բայց, պարագաներն ու հանգամանքներն ինչ էլ որ լինեն, մի քանի անուններ, մի քանի կարևոր դէպքեր ուժեղ կերպով տպաւորւում և մնում են յիշողութեան մէջ, առանց մոռացութեան վտանգին ենթարկւելու. օրինակ, ո՞վ կարող է մոռանալ մեր աշխարհակալների՝ Արտաշէսի և Մեծն Տիգրանի անունները, Գրիգոր Լուսաւորչին, Մեսրոպ Մաշտոցին, Վարդանանց ճակատամարտը, և այլն։

Այսպէս, ուրեմն, մի քանի անուններ, դրւագներ, դէպքեր անջատւում են պատմութեան ամբողջութիւնից և յաճախակի առիթներով յիշատակութեան են արժանանում։ Նրանք յաւերժական անուններ և դէպքեր են և այդ իսկ պատճառով դառնում են յաւիտենական ներկայութիւն։ Նրանցով կարող ենք ե՛ւ հպարտանալ ե՛ւ պարծենալ ու միջազգային բեմերից ամբողջ մարդկութեան ուշադրութեան արժանի դառնալ։ Նրանք համամարդկային տարողութեամբ արժէք ունեցող անուններ են։

Չմոռացուելիք անուններ են նաև մեր արիւնռուշտ Թշնամիների անունները։

Չմոռացուելիք և յաւիտենապէս յիշատակուելիք դէպքերի շարքին է նաև Մեծ Եղեռնի թւականը։ Ո՞վ կարող է մոռանալ 1915 Ապրիլ 24-ը։ Ո՞վ կարող է մոռանալ մէկ միլիոն նահատակների, բազմահարիւր մտաւորականների սպանութիւնը, տեղահանութիւնը, աքսորը, ջարդը, երբ մանաւանդ բոլորը ժամանակակից պատմութիւն են տակաւին։

Ժամանակին, երբ Երուսաղէմի ժողովուրդը գերեվարւած էր Բաբելոն և այնտեղից վերադարձի ու հայրենի երկրի համար կարօտի երգեր և երգներ էր հիւսում, Իսրայէլի մեծ տեսանողը մարգարէաշունչ պատգամով ժողովրդին ուսուցանում էր. «Երուսաղէմ, Երուսաղէմ, եթէ մոռանամ քեզ, թող լեզուս քիմքիս փակչի»։ Ի՞նչպէս կարելի էր մոռանալ Երուսաղէմը, երբ այնտեղ էր անցել ժողովրդի ամբողջ պատմութիւնը։ Ի՞նչպէս կա-

րելի էր մոռանալ Երուսաղէմը դերեվարուած այդ վիճակում։ Ի՞նչպէս կարելի էր ուրանալ և մոռանալ հայրենիքը։ Բաբելոնն իր ամբողջ հարստութիւններով չէր կարողացել իսրայէլացիների սէրը գրաւել։ Նրանք անձկագին կարօտով նայում էին Աւետեաց Երկրի սահմաններին, աչքները միշտ սևեռած Երուսաղէմի հորիզոններին, երգում էին հայրենական տաղեր և արտասանում էին կարօտի մարգարէաշունչ խօսքեր. «Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, եթէ մոռանամ քեզ, թող լեզուս քիմքիս փակչի»... Հայրենաշունչ երգեր, պանդուխտի երգեր և կարօտի երգեր, հայրենասիրական զգացումները վառ պահելու համար։ Երգերի, տաղերի խորքը կազմում էր հայրենիքը չմոռանալու զգացումը։ Չմոռանալ անցեալը, չմոռանալ պապենական երկիրը, չմոռանալ հայրենիքը, չմոռանալ կրօնը։ Վա՜յ նրան, որ կը մոռանայ, որովհետև նա կը կորսուի ազգութիւնից, կը հեռանայ իր ժողովրդի պատմութիւնից և կը դառնայ այլափոխուած և ուծացած մարդ։

Նոյն մարգարէաշունչ ոգին կայ նաև մեր հայրենաբաղձ բանաստեղծների տաղերի մէջ։ Պանդուխտի երգերի նիւթը խեղճերի վիճակի նկարագրութիւնը չէ միայն, այնտեղ խորապէս զգալի է առաւելաբար տան կարօտը, հայրենի երկրի կարօտը։ Իսկ հայրենակարօտ երգերի հիմնական թեման՝ սարերի, ջրերի, օդի, զեփիւռի և այլ իրողութիւնների խորքում խորապէս զգալին հայրենասիրութիւնն է։ Հայրենի հողը, հայրենի երկիր և հայրենի լեռ շօշափելի իրեր նկատելուց աւելի բանաստեղծի հոգին փոթորկող հայրենիքի կարօտի զգացումներն են։

Բայց ինչի՞ համար են այդ երգերն ու տաղերը, ինչի՞ համար են հայրենասիրական երգերը, որոնք յաճախ բեմերից մեր հոգին թունդ են հանում և ծափերի արձագանգը մինչև իսկ երկինք են հասցնում։ Բանաս-

տեղծի հայրենասիրական զգացումին յագո՞ւրդ տալու համար և կամ հանդիսաւոր առիթներով երգելու և արտասանելո՞ւ համար միայն։ Այս բոլորի հետ հիմնական նպատակը հայրենասիրական զգացումի չմոռացելն է։ Չմոռանալ և յիշել հայրենիքը, չմոռանալ և յիշել նիւթական թեականները, չմոռանալ և յիշել հրաշքի համազօր դրւագները ու նուաճումները, չմոռանալ և յիշել հին, բայց կենսունակ գաղափարները, չմոռանալ և յիշել արդար և նիւթական պահանջները, որոնք մեր մեռելների հետապնդած սրբազան գաղափարներն եղան, չմոռանալ և յիշել անցեալը, որ մեզ շաղկապող և նոյն ազգի պատմութիւնը մեր մտքի մէջ կենդանի պահող միա՛կ նիւթական ազդակն է, չմոռանալ և յիշել հայրենի երկիրն իր քիւրեղացած մաքրամաքուր գաղափարի և զգացումի մէջ։



ՅՈՒՇԱՐՁԱՆ ԲԻՒՐԱՒՈՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ
(Խորհրդապատկեր)

Զմոռանալ և յիշել մանաւանդ տակաւին պատմութիւն չդարձած Մեծ Եղեռնը, որի տօնակատարութիւնը լաւագոյն առիթն է հոգու խորքում անտեսանելի, բայց իմանալի յուշարձաններ գոյակերտելու։ Զմոռանալ և լեցուել չմոռանալու առաքինութեամբ։

Միթէ մարգարէաշունչ նոյն պատգամը չէ՞ հայ ժողովրդի վշտի երգիչներից ամենից հարազատի և լաւագոյն ներկայացուցչի խօսքը, ուղղուած բոլոր վշտահար հայերին. «Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք, թող ողջ աշխարհ հային կարդայ նախատինք»...

Կատարուածը ո՛չ միայն չարիք էր, այլ էապէս աղէտ և ցեղասպանութիւն էր, որին երբեք չի ենթարկուել հայ ժողովուրդը իր պատմութեան ամբողջ ընթացքում։ Արշաւող բանակներ շատ են եկել ու անցել Հայաստանի վրայով, աւերումներ, կեղեքումներ, կողոպուտներ շատ են եղել Հայաստանում։ Մարդկային զոհեր, և այն էլ իզուր տեղը շատ է տուել հայ ժողովուրդը։ Պատերազմներ շատ է մղել հայոց բանակը։ Բայց այդ բոլորը անցել են արդէն, պատմութեան և դասագրքերի մաս են կազմում։ Ճիշտ է, սրտաճմլիկ և սարսռազդեցիկ դէպքեր շատ են պատահել, և սակայն, երբե՛ք ամբողջական և հաւաքական կոտորած չի պատահել։ Եղածների ամբողջական նկարագրութիւնը կարող ենք կարդալ պատմիչների մօտ. իսկ վերջին եղեռնը մասամբ հաւաքւել է յուշամատեաններում։ Վստահ ենք, թէ նա իր արժանի տեղն ունի իւրաքանչիւր հայի հոգու ամենախորունկ ծալքերում և այնտեղից երբեք դուրս չի գայ, չի մոռացուի, կը մնայ իբրև յաւիտենական և մշտնջենական ներկայութիւն։ Վա՜յ մեզ, եթէ մոռանանք, անէ՛ծք նրան, որ կը մոռանայ. նախատինք բոլոր հայորդիներին, եթէ մոռանան։

Քրիստոնէութեան տարածման առաջին շրջաններում նորադարձ քրիստոնեաները ո՛չ միայն հալածւում էին, այլ նաև վայրագօրէն չարչարւում, բանտերում անասելի զրկանքների էին ենթարկւում, կրկէսների մէջ կատաղած առիւծների առաջ էին հանւում և սպանւում։ Պօղոս առաքեալն իր խօսքը նորադարձ քրիստոնեաներին ուղղելով, նրանց ուշադրութեանն է յանձնում բանտարկուածների և չարչարուողների պարագան և յատկապէս շեշտում. «Զեզ յուշ լինեն չարչարուողները, որպէս թէ դուք ևս նրանց հետ չարչարւում էք»։ Քրիստոնեաները Քրիստոսով եղբայրացած էին, անհատական սեփականութիւն չկար, մէկը բոլորի համար էր, բոլորը մէկի համար։ Առօրեայ ապրուստը միասնաբար էին հոգում, և իրարու ուրախակից և ցաւակից էին, կարծես մէկ ընտանիքի անդամներ լինէին։

Առաքեալը փոխադարձ կապը աւելի ամուր հիմքերի վրայ դնելու համար՝ կենդանի և ուժեղ յարաբերութիւն էր ուզում հաստատել բանտարկուածների, չարչարուողների և ազատ քրիստոնեաների միջև և ասում էր. «Դուք ձեզ այնպէս համարեցէք, թէ նրանց փոխարէն դուք կարող էիք լինել»։ Քրիստոնէութեամբ եղբայրացածների համար բանտարկուածներն ու չարչարուողները չպիտի մոռացուէին և յաճախ պէտք է յիշատակուէին։

Առաքեալի խօսքը աւելի իմաստ և նշանակութիւն ունի մեզ համար, երբ մասնաւորաբար նկատի ունենանք յիսուն տարի առաջ կատարուածը։ Խօսքը, որ մի միջոց է մեր մտածումները փոխանցելու, վստահաբար պիտի չկարողանայ Եղեռնի ամբողջութիւնը տալ ուրիշին։ Գրիչը որ միջոց է մեր ապրումները բազմաթիւ մարդկանց փոխանցելու, չպիտի կարողանայ ճշգրիտ միջնորդն ու թարգմանը հանդիսանալ։ Եթէ կատարուածը ուրիշին փոխանցելու ակտի մէջ թերի պիտի մնան մեր ամբողջ աշխատանքները, սակայն անհրաժեշտ է, որ չմոռանալու գաղափարը ամենից աւելի տիրական և կենդանի

դառնայ մեր մտքի մէջ։

Ժամանակը մի այնպիսի երկայնաքար է, որի տակ ճզմւում և մոռացւում են բազմաթիւ դէպքեր, պատահարներ և զգայացունց լուրեր ու տեղեկութիւններ։

Ամէն ինչ հնանում ու մոռացւում է և իր տեղը տալիս է օրը օրին յայտնւող նորութիւններին։ Ի՞նչ է մնացել հսկայական կայսրութիւններից կամ ճոխ ու փարթամ հարստութիւններից, միլիոններով ու միլիոններով ապրող մարդկանցից։ Ի՞նչ է մնացել հսկայական արշաւանքներից. ոչի՞նչ. յիշատակ և պատմութիւն միայն։ Ո՞վ է յիշում ճիւաղային ու գազանային արարքները բռնակալների. պատմութի՛ւնը միայն, այն էլ դասարանում սովորելու և թւանշան ստանալու համար։ Այս մտածումն է, որ բռնակալներին ու ջարդարարներին անմարդկային արարքներ է կատարել տւել։ Սպանել, ջարդել, տիրել և իշխել։

Ժամանակը որ մի քիչ էլ թաւալի, նոր մարդիկ գան, նոր դէպքեր պատահեն, եղածը կը մոռացւի արդէն։

Բայց երբեմն այնպիսի աղէտներ, կորուստներ և պատահարներ կան, որոնք եթէ ուզենանք էլ մոռանալ, չե՛նք կարող։ Այդպիսի թւական է 1915-ը մեզ համար։ Ազգային ցաւի և սուգի թւական է։ Ազգային իրաւունքների կորուստի թւական է։ Ազգային հողերի բռնագրաւման թւական է և պիտի չմոռացւի այդ թւականը, մինչև որ կարողանանք մեր կորցրած բոլոր իրաւունքների տէրը դառնալ։ Այլ խօսքով, կարելի պիտի լինի ներել միայն այն ժամանակ, երբ կարողանանք ներելու վիճակին հասնել։

Ժամանակին կրօնական իշխանութիւնը եկեղեցու համար նահատակուողներին սուրբերի շարքն էր դասում, տօնացոյցի մէջ յատուկ օր էր նշանակում և կրօնական

շարականներում նրանց ներբողն էր հիւսում, որպէսզի նրանք չմոռացւեն և հաւատացեալների ու նահատակուողների միջև դէթ տարին մէկ օր կենդանի կապ ստեղծւի։ Այս օրերին կատարւող անւանակոչութեան տօնակատարութիւններն արձագանգն են այդ օրերի անունների յիշատակութեան։ Հաւաքական սուրբերի տօնակատարութիւնն առաւելագոյն չափի հասած յիշատակի յաւերժացման կատարումն է։ Վարդանանք արդէն իսկ ազգային չափանիշով դարձել են խորհուրդ։ Նեղ պայմաններում, ճնշումների օրերին, մեր ազգային գաղափարները նրանց տօնակատարութեամբ աւելի են բոցավառւել։ Դարերի ընթացքում նրանք չեն մոռացել և չեն էլ մոռացւի, որովհետև նոյնացել են հայ ժողովրդի հետ։ Բիւրաւոր նահատակներն ևս անցել են արդէն օրացոյցի մէջ, և իւրաքանչիւր տարի, Ապրիլի 24-ին, կրօնական արարողութեամբ և ժողովրդական սգահանդէսներով յիշատակւում են։

Նրանց յիշատակի հետ պիտի չմոռացւեն նաև այն բոլոր հարցերը, որոնք սերտօրէն կապ ունեն իրենց նահատակութեան հետ։

Չմոռանա՛նք նրանց։ Չմոռանանք մանաւանդ այն բոլոր իրաւունքները, որ արդարօրէն մերն են։ Չմոռանանք և վառ պահենք ազգային բոլոր պահանջները։ Մոռացումը կորուստ է և անցեալի պատմութիւն։ Մինչ յիշատակումը նախադուռն է իրաւունքների պաշտպանութեան և իրաւատէրի հանգամանքին։

Աւաղ է՝ ամէն ինչ կանցնի, ամէն ինչ կը հնանայ, ամէն ինչ կը մոռացւի, բացի յիշատակից։

Մեր Բիւրաւոր Նահատակները կենդանի և ապրող յիշատակներ են։

ՍՊԱՍՈՒՄ

Եւ հրեշտակ Տեառն ըստ ժամանակի իջանէր յաւազանն եւ յուզէր զջուրսն եւ որ նախ ի շարժումն ջուրցն իջանէր, բժշկէր՝ ոչ ունելով նշան հիւանդութեան իւրում։

(ՅՈՎՀ. Ե. 4)

ՍՊԱՍՈՒՄ

Երուսաղէմում գտնւում էր Փրոփատիկէի աւազանը, որի շուրջ հիւանդները հաւաքւած, նստում էին շարք-շարք. տարւայ մէջ մի անգամ հրեշտակը երկնքից իջնում էր, ջուրը խառնում և այն հիւանդը, որ արագ շարժւելով իջնում էր ջրի մէջ, բուժւում էր և հիւանդութեան նշանն իսկ չէր մնում իր վրայ։ Միւսները սպասում էին, որ ջուրը դարձեալ խառնւէր, առիթից օգտւէին և բուժւէին։ Հիւանդները երկար տարիներ նստած, սպասում էին այն յոյսով, որ մի օր էլ հերթը իրենց կը հասնի, և աւազանի միջից բոլորովին բուժւած դուրս կը գան։

Վերոյիշեալ պարզ դրւագի մէջ մեզ հետաքրքրողը Փրոփատիկէի աւազանի ջրի խառնւելը և այնտեղ երկար տարիներ նստած հիւանդների՝ յոյսով սպասումն է։ Եթէ երբեք փորձենք այս իրողութիւնը յարմարեցնել նաև մեր պատմութեան այլազան շրջաններին, մասնաւորաբար վերջին ժամանակների ազատագրական ճիգերին, տաճկահայ նահանգների բարենորոգումների հարցերին, սպասումներին, պիտի նկատենք, որ կարծես մենք էլ նստած ենք Փրոփատիկէի աւազանի շուրջ և անձկա-

նք սպասում ենք, թէ ե՞րբ պիտի ջուրը խառնի և աստուածային հրաշքով մենք էլ պիտի կարողանանք ջրի մէջ մտնել, բուժուել և հասնել մեր նպատակին։

Մեր պատմութեան ընթացքին զանազան տոհմեր իշխել են միահեծան և կամ այլ կերպով, և անցել. թագաւորական, նախարարական և իշխանական տներ որոշ շրջանում գործել են և իրենց գործով յաւերժացել։ Դրժբախտաբար, նրանց իշխանութիւնը երկար դարաշրջաններ չի տևել և միշտ էլ յարափոփոխ վիճակ է ստեղծուել։ Ներքին պառակտումներն ու դրսից խուժող հսկայական արշաւանքները միշտ էլ սպառնացել են հայ ժողովրդի ազատութեան և անկախութեան։ Մի ժամանակ Հայաստանը բաժանուել է երկու մասի, այլ ժամանակներում փոխն ի փոխ անցել է օտար իշխանութիւնների լծի տակ և այդ ժամանակուայ հայ ժողովրդի տառապանքը, անասելի չարչարանքները, ողբերգական վիճակը յուզիչ կերպով պատմիչների կողմից գրի է առնուել։ Ձեռագրերի յիշատակարաններում երբեմն ծաղկողի, պատմագրողի, ընդօրինակողի, պատուէր տուողի կողքին սարսռազդեցիկ արձանագրութիւններ ենք կարդում։ Բոլորն էլ դժբախտ դէպքերի արձանագրութիւններ են ժամանակակից ականատեսի ձեռքով վկայուած և մեզ փոխանցուած։

Անշուշտ, շահեկան պիտի լինէր մեր ամբողջ պատմութեան շրջանների ժամանակագրական ցուցակը կազմել, իմանալու համար թէ ինչքա՞ն ժամանակ անկախ և ինքնուրոյն իշխանութիւն ենք ունեցել և ինչքա՞ն ժամանակ օտարի լուծի տակ մնացել։ Բնականաբար, եզրակացութիւնը միարարիչ չպիտի լինի։ Վստահաբար, օտարների տիրապետութեան նժարն աւելի պիտի կշռի։ Բայց հակառակ այս իրողութեան, միշտ էլ սպասել ենք, ճգնել, աշխատել, մեր ներքին ուժերը զօրահաւաքի ենթարկել և յանկարծ նկատել այսինչ կամ այնինչ նախարարի իշխանութեան տարածումը և իրենով հայ ժողովրդի պետական կեանքի կազմաւորումը։

Յանկարծ, դարձեալ, նկատել ենք իշխանութեան շիջումը, որին նորէն յաջորդել է սպասում, շա՜տ երկար սպասում և յանկարծ մի թագաւորութեան կամ մի քանի թագաւորութիւնների հաստատումը, դարձեալ նրանց շիջումը և այս անգամ մելիքութիւնների, ամիրաների իշխանութիւնը։

Մեր ամբողջ պատմութիւնը մի այսպիսի շղթայ է, սև ու ճերմակ օղակները միշտ յաջորդել են իրար։ Սպասում և յաճախ շատ երկար սպասում՝ վերստին իշխանութեան տիրանալու համար։ Աւերումներ, կեղեքումներ, գաղթեր, և յետոյ ծաղկումի, խաղաղութեան և շինարարութեան շրջաններ։ Սեփական իշխանութեան ձգտումը, կամքի տոկունութիւնը, ստեղծագործելու կրակը և աւերուածը վերստին շինելու տենչը մղիչ ուժ են հանդիսացել հայ ժողովրդի համար, և այդպիսով ամէն տեսակի պայմանների ներքոյ հսկայական նուաճումներ են կատարուել։ Մեր պատմութեան հիւսուածքը Հայաստանում, Կիլիկիայում և կամ այլուր այսպէս է եղել։

Օտարների տիրապետութիւններից ձարբազատուելու համար սպասել, տոկալ և համբերել...

Եւ ո՞վ հրաշք, մեր մշակութային նուաճումները, արուեստի մարզում կատարուող պատուաբեր գործերը, այսպիսի նեղ և տառապալի օրերին են կատարուել և դարձել ամրակուռ շաղախ՝ հայ ժողովրդի ինքնուրոյնութեան, ազգապահպանման և գոյատևման համար։

Բազմաթիւ ազգեր, հսկայական պետութիւններ արդէն իսկ անհետացել են պատմութեան թատերաբեմից, բայց փոքրաթիւ հայ ժողովուրդը տոկացել է, ստեղծագործել և կարողացել է առաւել կամ նուազ չափով իր յոյսերի պսակումին հասնել։

Այսպէս, ուրեմն, օտարների կողմից խոցուած մեր հիւանդ մարմինը երկարօրէն սպասել է Փրոփատիկէի աւազանի շուրջ, առաջին իսկ պատեհութեամբ առիթից օգտուելու, խառնուող ջրի մէջ նետուելու և այնուհետև բոլորին ցոյց տալու համար իր առողջացած մարմինը։ Երբեմն, երբ նկատելի է թէ ջուրը չի խառնւում, ինքն է փորձել խառնել և յուզուող ջրի միջից դուրս գալ որպէս հաւաքականօրէն առողջ մարմին։

Կիլիկիայի թագաւորութեան անկումից յետոյ կատարուող բոլոր ազատագրական շարժումները, ինքնուրոյն իշխանութեան համար տարուող աշխատանքներն ու մղուող պայքարները որոշ արդիւնքի չհասան։ Բաւական երկար տևեց սպասումը։ Ցաճախակի կատարուող ազատագրական շարժումները յանգեցին շուտափոյթ շիջումի։ Վեց դարերի ընթացքում Փրոփատիկէի աւազանի շուրջ նստած սպասեցինք, որ ջուրը խառնի, բայց ի զուր, մեր յոյսերը չիրականացան. ջուրը չխառնուեց. փորձեցինք դառնալ աւազանի շուրջը, բայց դարձեալ մնացինք յուսահատ։ Գտնուեցին մարդիկ, որոնք դրօշակիրները հանդիսացան հիւանդ Հայաստանը իրենց ձեռքով աւազանի մէջ նետելու, բայց ջուրը չխառնուեց։ Փորձեցին իրենք խառնել, դարձեալ անօգուտ։ Դիմեցինք այլ մարդկանց, որ խառնեն, դարձեալ մնացինք նոյն վիճակում։ «Յոյս չկայ օտարից»։

Սպասման ժամանակաշրջանում պատահեցին զաղթեր, տեղափոխութիւններ և ձուլումներ։ Նրանց յաջորդեցին կեղեքումներ և զուլումներ։ Արևելեան և արևմտեան հայութեան վիճակը նոյնն էր, օտարի թաթի տակ ճնշում էր հայ ժողովուրդը, իր աշխատանքի արդիւնքը չէր վայելում, գալիս, հաւաքում և տանում էին, չկար կեանքի ապահովութիւն, ամենուրեք անորոշ վիճակ էր տիրում։ Եւ հայ ժողովուրդը, այս պայմաններում

նստած Փրոփատիկէի աւազանի շուրջ, սպասում էր թէ ե՞րբ պիտի խառնի ջուրը։ Ինքը պատրաստ էր առաջին իսկ առիթով նետուելու աւազանը և դուրս գալու ազատուած և ձերբազատուած ամէն տեսակի հիւանդութիւններից ու կաշկանդումներից։ Ջուրը չէր խառնւում և օրից օր աւելի էր վատթարանում հիւանդի վիճակը։ Կեղեքումներին, նեղութիւններին ու ճնշումներին յաջորդեցին ձերբակալութիւններ, աւելի ծանր ճնշումներ, սպանութիւններ և ջարդեր, Հիւանդը չդիմացաւ, աւազանը չէր խառնւում և իզուր էին անցնում այդ բոլոր ճիգերը, գոնէ աւելի հզօրների միջոցով հնարաւոր դարձնելու աւազանի ջրի խառնուելը։ Դժբախտաբար, աւազանը միշտ մնում էր լճացած վիճակում։ Որևիցէ փոփոխութիւն չէր նկատւում հայ ժողովրդի վիճակի մէջ։

Բոլորի աչքի առաջ մեր հիւանդ մարմնի վրայ ծանրանում էր օտարի մտրակը և նրանք ծանրախոհ ականատեսի լրջութեամբ դիտում էին պատահարը։

Աւազանի շուրջ նստած հիւանդը արտաքին խոստումներից և օժանդակութիւններից յուսահատ, մասնէց ինքն իրեն բուժել և առողջանալ. շարժման մէջ դրեց իր մարմնի անդամները, խոյացաւ վեր և մնաց ոտքի վրայ։ Ջուրը չէր խառնւում, բայց զգաց, թէ ինքը առանց նրան էլ կարող է ոտքի վրայ կանգնած մնալ և իր նպատակներին հասնել։ Ազատ և անկախ շարժուելու համար անհրաժեշտ էր իր ամբողջական և հաւաքական ուժերի հաւաքումը։ Նրա մարմնի վրայ կազմուեցին երիտասարդական աւիւնով լեցուած, հայ ժողովրդի ազատագրութեամբ տոգորուած և իրենց կեանքը առանց սակարկութեան հայրենիքի ազատութեան նուիրաբերող անձեր, խմբեր և կազմակերպութիւններ։ Մղուեց գործի, և Բաբը Ալիի, Բանք Օթոմանի, Խանասորի ու Սարդարաբադի նաւամարտերը արդիւնքն էին երիտասարդական

հաւաքական այդ ուժերի։ Կատարեցին հրաշքի համազօր նուաճումներ, հայկական դրօշը պարզուեց, հայը դո՛ւրս եկաւ Փրոփատիկէի աւազանի շուրջ նստած հիւանդի վիճակից և սկսեց պետական կեանք։ Հայ ժողովուրդը 1918 թ. ունեցաւ պետութիւն, ունեցաւ խորհրդարան, ունեցաւ նախագահ, ունեցաւ բանակ, ունեցաւ դրամ և դրոշմաթուղթ և ամենից կարևորը՝ հային պատկանող Հայաստան, և տակաւին մինչև այս օրերին շարունակւում

է հայ ժողովրդի պետական կեանքը։

Բայց թաթը դամոկլեան սրի պէս մնում էր կախ՝ ոտքի կանգնած մարմնի գլխին, անասելի չարչարանքները շարունակւում էին, մեր դարաւոր թշնամին ուզում էր հայ ժողովրդին ամբողջութեամբ բնաջնջել, ոչնչացնել և ջարդել բոլորին, բնաջնջել հայի անունն իսկ, և պահել միայն մէկ հոգի, այն էլ թանգարանի համար։

Գազանային ու ճիւաղային ձևով տեղի էին ունենում աւերումները, սպանութիւնները և ջարդերը։ Ընպանուողների թիւն անցաւ մէկ միլիոնից։ Մնացեալները տեղահան եղան և փոխադրուեցին անապատները, որբանոցները լեցուեցին, այդ տեղերից այլ վայրեր տարուելու համար։ Այս բոլորը հեքիաթ չէ, չափազանցուած պատմութիւն չէ, այլ մօտակայ անցեալում կատարուած ամենադաժան իրողութիւնն է, որ մարդկային պատմութիւնը տեսած լինի։ Է՛յ մարդկային դիւանագիտութիւն և պետական առնտուր։ Կարծես լոել էր մարդկային խիղճը և ցաւակից եղբայր չէր ճարւում։ Անպաշտպան և անզէն հայ ժողովուրդը յանձնուած տաճիկ սինաւորների հսկողութեան, քշւում էր անծանօթ ուղիներով, անօթի, ծարաւ։ Կարաւաններն իրար էին յաջորդում։ Դէպի կառափնարան, դէպի անապատ, դէպի Դէր Զօր, դէպի Եփրատի ափերը։ Կարաւանների շարքին էին խառնել արուեստագէտներին, մտաւորականներին, քաղաքներից ու գիւղերից հաւաքուած բազմութիւններին։ Տանում էին դէպի անծանօթ և անմարդաբնակ վայրեր։ Այսպէս, ճակատագրի խաղին յանձնուած, թուրք ոստիկանների սինների տակ, քշւում էին հայերը, տեղահան էին լինում իրենց պապենական դարաւոր տներից, տեղերից, առանց իմանալու թէ պիտի վերադառնա՞ն, որտե՞ղ են գնում և արդեօք ո՞ղջ պիտի մնան։ Թշւառ ու անտէր ժողովուրդն սպասում էր հրաշքի, սպասում էր աստուածային պատուհասի, չէ՞ որ ինքը այդպիսի նեղ պարագաներում դարերով ապաւինել էր իր Աստծուն, սպասում էր մանաւանդ, որ ջուրը խառնւի, ջուրը յուզւի և իր վիճակն էլ պարզւի, բայց անօգուտ։ Միակ չոր իրականութիւնն այն էր, որ ինքը տեղահան էր լինում և ամէն տեղ ջալդէր

էին կատարում։ Տխուր պատմությունը ծանոթ է բոլորին, կարիք չկայ մանրամասնությունների մեջ մտնելու։ Տխուր իրականություն, սրտաճմլիկ տեսարան։ Մեկ միլիոն նահատակներ և ողջ մնացածների ցրում աշխարհի բիւր երկրներում։

Այս օրերին, երբ յետադարձ ակնարկ ենք նետում անցեալի վրայ և փորձում ենք մեր տկար ուժերով երեւան հանել 1915—18 թ. պատահած աղէտը, դողահար մարմնով, մնում ենք շւարած, թէ ինչպէ՞ս կարելի է նկարագրել այդ օրերի դժբախտ ու գազանային դէպքերը։

Մենք լուսանկարչական մեքենաներ չենք և մեր զգացական աշխարհը թոյլ չի տալիս որ կարողանանք հանդարտ մտքով նկարագրել պատահածը։ Շարժանկարի դերակատարներ էլ չենք, որ դիմակաւոր ձևով ուրիշի կերպարանքի մէջ մտնենք և պարզապէս մեր դերը խաղանք։ Մեր մեռելների արիւնը տակաւին պղպջում է մեր աչքերի առաջ։ Մենք և նրանք նոյնացած ենք նպատակների իրագործման ճանապարհի վրայ։

Անցել են արդէն յիսուն տարիներ և ամենուրեք վերածաղկել է հայ ժողովրդի կեանքը։ Պատւաքեր նւաճումներ են կատարւել՝ սկսած մայր հայրենիքից մինչև հեռաւոր փոքրաթիւ հայ գաղութները։ Ուրախալի երեւոյթները, պատւաքեր նւաճումները, շինարարութիւնները և մշակութային աշխատանքները գոհունակութեամբ են լեցնում բոլորիս սրտերը։ Բայց տակաւին, հակառակ այս ուրախալի երևոյթներին, սպասողական վիճակը դեռևս շարունակւում է կարծես։

Սպասում ենք հրաշքի, սպասում ենք մի ինչ որ նոր բանի, սպասում ենք զգայացունց լուրերի, սպասում ենք, մեր երազների իրականացման։ Նոր դժւարութիւնների առաջ, նոր կեանքի մէջ, սպասում ենք դերբնական

Հայ պատանեկան ցոկիտրեսմեն 1914—18 թ.

ուժերի յայտնութեան։ Նոր հարցեր, նոր դժուարութիւններ սպառնում են մեր հոգեկան գոյութեանը։ Իւրաքանչիւր գաղութ, կատարուող հսկայական յառաջադիմութեան և կազմակերպուած վիճակի հետ, ներքին հարցեր և անորոշ վիճակ ունի, և յաճախ տխուր հայեացքով է նայում ապագայի վրայ։ Ցիսուն տարի կարողացել է դիմանալ, շինել, կառուցել և ստացածը պահել։ Ցիսուն տարի իր ծննդավայրի կարօտը հոգում յարմարել է նոր պայմաններին և դարձել քաղաքացի։ Ցիսուն տարիների ընթացքում երկու սերունդ է եկել և նրանք ամբողջութեամբ նոր վայրերի և միջավայրերի գաւակ են արդէն։ Ծննդավայրի կարօտ չունեն, պապենական տան կարօտ չունեն։ Նոր տուն, նոր միջավայր, նոր ծննդավայր։ Ցիսուն տարիներ յետոյ ինչքա՞ն հայութիւն պիտի մնայ իր ապրումներով, հետաքրքրութիւններով և զգացումներով։

Յուզումի վտանգն սպառնում է բազմաթիւ վայրերում կայք հաստատած հայութեան, այնտեղ խաղաղ ու հանդարտ նստած Փրոփատիկէի աւազանի շուրջ, սպասում են, թէ ե՞րբ պիտի խառնուի ջուրը, ի՞նչ հրաշք պիտի կատարուի և ի՞նչ գոյավիճակ պիտի ստանայ գաղութի ապագան։ Ոմանց համար ամէն ճիգ ու ջանք աւելորդ է արդէն, նոր պայմաններում արդէն իսկ հայութիւնը այնտեղ պիտի վերջանայ, ուստի՝ աւելորդ են կարկատանի ձևով կատարուող աշխատանքները։ Տան լեզուն, ընտանիքի լեզուն երբ հայերէն չէ, բնականօրէն աւելորդ պիտի համարել բոլոր տեսակի աշխատանքները։ Բայց հակառակ այս իրականութեան, Փրոփատիկէի աւազանի շուրջ նստած հիւանդների նման, նրանք էլ սպասում են թէ ե՞րբ ջուրը պիտի խառնուի, և հրաշքով իրենք էլ բուժուեն և առողջանան։

Կազմակերպուած գաղութներից ոմանք երբ հասել

են արդէն վարչական լաւագոյն վիճակի, դպրոցները, եկեղեցիները, մամուլը, ազգային և մշակութային կեանքը միշտ եռ ու զեռի մէջ է արդէն և միշտ էլ աշխատանք են տանում հայեցի շունչը պահելու համար, այս անգամ ներքին պառակտումներ, ներքին ճակատներ, ներքին անհասկացողութիւններ, զանազան տեսակի տագնապներ պատճառ են դառնում ուժերի ցրտման, անհամերաշխութեան և զուր են վատնուում մեր նիւթական և իմացական կարողութիւնները։ Պայքար, ներքին ճակատ, բաժանում, անհանդուրժող կեցուածք, նոր պայմանների մէջ, նոր կացութեան առաջ անտարբեր և անորոշ գոյավիճակ են ստեղծում և մարդ ակամայ երբ անդրադառնում է թէ ինչո՞ւ նման դէպքեր, անհանդուրժող կեցուածքներ և այն էլ հասկացող խաւերի կողմից պատճառ են լինում այս գոյավիճակին և ի՞նչ է արդեօք ելքը, որպէսզի հրնարաւոր լինի ազգային գերագոյն շահերի շուրջ համախմբել բոլորին։ Եւ եթէ չի կարողանում գտնել ճամբան և մնում է անորոշ կացութեան մէջ, դարձեալ սպասողական վիճակ է տիրում։ Սպասում է Փրոփատիկէի աւազանի շուրջը, թէ ե՞րբ պիտի խառնուի ջուրը և ինքը մէջը նետուի այլազան ցաւերից բուժուելու համար։

Այսպէս, ուրեմն, սպասողական վիճակ է տիրում ամէն տեղ։ Սպասում ենք ինչի՞, ի՞նչ բանի։ Չգիտենք։ Բայց միշտ սպասում ենք աւելի լաւ օրերի և ժամանակների համար։ Սպասում ենք հակառակ այն իրողութեան, որ գիտենք թէ Ս. Գրիգոր Լուսաւորիչը եկել և գոյակերտել է Հայց. Եկեղեցին։ Մեսրոպեան խումբը եկել և տուել է մեր ոսկեդարը։ Նարեկացին եկել և տուել է մեր աղօթքը։ Մշակոյթի գործիչները եկել են և ուռճացրել հայոց մշակոյթը։ Արուեստագէտները եկել են և իրենց նուաճումներով բարձրացրել հայոց արուեստը։ Դպրութեան մշակներն ուսուցանել են և սերունդներ են

դաստիարակել։ Բոլոր մարզերում և ասպարէզներում մարդիկ եկել են և իրենց լուման թողել հայոց գանձարանում։ Գանձարանի հարստութիւնը մե՛րն է հիմա։ Մեզ մնում է պահել, ուռճացնել և փոխանցել գալիք սերունդին, որպէսզի չկտրւի շղթան։

Բայց մենք արդարօրէն սպասում ենք առաւելաբար Մեծ Եղեռնի առիթով կորցրած մեր իրաւունքների վերստացման, մեր պապենական հողերի վերստացման, մուրհակը մեր ձեռքին երկար սպասել ենք և տակաւին պիտի սպասենք, մինչեւ որ արդարացիօրէն լուծում ըստանայ հայկական դատը։

Սպասում ենք, նստած Փրոփատիկէի աւազանի շուրջ, որպէսզի ջուրը յուզի, խառնի և մենք էլ նետւենք ջրի մէջ, դուրս գալու այս անգամ ողջ և առողջ, իրաւատէրի հանգամանքում եւ լծւենք շինարար աշխատանքի։

Շատերն են սպասել աւազանի եզերքին, ուրիշների օժանդակութեամբ նետւել ջրի մէջ եւ բուժւել, եւ այսօր նրանք դատ-դատաստան չունեն։ Հերթը մերն է. չգիտենք թէ տակաւին ինչքա՞ն պիտի սպասենք եւ ո՞վ պիտի օգնի մեզ, որպէսզի կարողանանք լրիւ եւ ամբողջական տէրը լինելու մեր կորցրած իրաւունքների։

Սպասենք եւ տեսնենք։ Թող Աստուած օգնական լինի բոլոր սպասողներին։

ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Երթալով երթային եւ լային ոյք բարձրեալ տանէին զսերմանիս իւրեանց, գալով եկեսցեն եւ ցնծասցեն, ոյք առեալ բերիցեն զորայս իւրեանց։

ՍԱՂ. ՃԻԵ 6

ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Ժամանակին, երբ պանդխտութեան էին գնում, նոր հոբիզոնների տակ, նոր միջավայրում երազում էին նաև վերադարձի մասին։ Պանդուխտը թողնում էր տուն ու ընտանիք, դժւարին պայմաններում իր ամենօրեայ հացը շահում և բազմաթիւ զրկանքների ենթարկւելով՝ մի փոքր բաժին էլ խնայողութիւն անում, որպէսզի վերադարձին ցնծութեամբ յանձնի իւրայիններին։ Պանդխտութեան գնացողը, վերադարձի յոյսը սրտում, աշխատանքի էր լծւում։ Ընտանեկան պարագաների կարօտը ձգողական ոյժ ունէր նրա սրտում և անվերջ երազում էր հարազատ շրջանակի մասին։ Տունը քաղցր էր և պանդուխտը տան ջերմութեամբ լեցւած, տարիների աշխատանքի արդիւնքով բեռնաւորւած, տուն էր գալիս և վերջ դնում պանդխտութեան։

Ժամանակին, գաւառներից և այլ շրջաններից Պոլիս և կամ այլուր և մինչև իսկ շատ հեռաւոր վայրեր պանդխտութեան էին գնում բազմաթիւ հայեր, հացի և ընտանիքի հոգսի համար։ Գնում էին լացով, կսկիծով, իրենց հետ տանում էին ընտանեկան յիշատակներ և յաճախակի առիթներով մտածում էին բերկրալի վերադարձի մասին։ Իւրաքանչիւր պանդուխտ սպասող ունէր, լա-

ցող և մտածող ունէր, և անվերջ մտորում էր վերադարձի մասին։ Տան կարօտը ամէն րոպէ յուզումով էր լեցնում իր հոգին. օտար ու խորթ շրջանակները չէին կարող երջանկութեամբ լեցնել իր կսկծացող սիրտը։ Մայրեր, հարսներ, զաւակներ հեռուներից կանչում էին նրան։ Երջանիկ էր այն պանդուխտը, որ կարողանում էր իր աշխատանքի արդիւնքով բաւարարել բոլոր սպասողներին։ Այդ օրերին հիւսուած պանդուխտի երգերը, տակաւին, մինչև այսօր, յուզումով են լեցնում մեր սրտերը։

Պանդխտութիւնը գաւառներում շատացաւ, երբ թրքական կեղեքումներն ու ճնշումներն ահռելի վնասներ պատճառեցին անպաշտպան հային։ Շարան-շարան գնում էին պանդխտութեան, հացի համար, կեանքի ապահովութեան համար։ Բայց պանդխտութեան գնացողը վերադարձի յոյսեր էլ ունէր, մէկ աչքը իր ետևն էր թողնում, և անդադար, մտովին փոխադրւում էր տուն, այնտեղ ստանալու համար հոգեկան բաւարարութիւն։ Պանդխտութիւնն անդամահատում էր ընտանիքին և մարդկանց սիրտը կիսով ճեղքում։

Ճնշումները, կողոպուտները և կեղեքումներն սկսեցին շատանալ, անապահով վիճակ էր տիրում արևմտահայոց կեանքում։ Հակառակ ստորագրուած դաշնագրերի և կատարուած խոստումների, աւելի սաստիկ ճնշումներ էին կատարւում։ Բարեկարգումների խոստումը վերածւեց չարագործութիւնների, սպանութիւնների և սպանդի։

Շատերը թողնում և հեռանում էին, բայց ամէն տեղ նոյն սարսափը և նոյն արհաւիրքն էր տիրում։ Որոշւել էր արդէն հայերի բնաջնջումը և տարագրութիւնը։ Յանկարծակի ձերբակալութիւններ էին կատարւում և անծանօթ ու անմարդաբնակ վայրերում սպանում էին բոլորին։ Երիտասարդներն ահ ու սարսափի

մէջ թագնւում էին՝ իրենց կեանքը փրկելու համար, բայց ամէն տեղ որոնում և գտնում էին նրանց տաճիկ ոստիկանները, կարաւաններով տանում և վերջ դնում նրանց կեանքին։ Ամենուրեք սարսափի մէջ էր հայ ժողովուրդը, մղձաւանջային պահն սկսել էր. աքսոր, տարագրութիւն և սպանութիւն։

Կողոպուտներին, կեղեքումներին և սպանութիւն-

Մի ահաւոր տեսարան Մեծ Եղեռնի սպանդից.

ներին յաջորդեցին աքսորը և տարագրութիւնը։ Ամէն մարդ պէտք է թողնէր իր տունը, ամբողջ ունեցւածքը և հետևէր տարագրութեան ճանապարհին։ Մտնում էին տուն և այնտեղ գտնւողներին դուրս էին հանում։ Դիմադրողին սպանում էին և սայլերով տանում, թափում փոսերի մէջ։

Տարագրութեան կարաւանը սկսել էր արդէն։ Անօթի, ծարաւ, բգիկ-բգիկ եղած հագուստներով գնում էին հայերը։ Աւելի ճիշտը տաճիկ ոստիկանները քշում էին

հայերին, մտրակելով բոլորին։ Սրտաճմլիկ տեսարանները ո՛չ մի ազդեցութիւն չունէին բարբարոս ցեղի գազանացած ոստիկանների վրայ. անօթութիւնը և ծարաւը, մեռնող որբուկի ու մամիկի լացը ոչ մի գութ չէր ներշնչում։ Ընդհակառակն, նրանք աւելի էին զայրանում և լացող մանկան խլում էին մօր գրկից և դէն շպրտում։ Կենդանիների սմբակից գոյացած փոքրիկ փոսերում լճացած կեղտոտ ջրով իր ծարաւը յագեցնելու համար գետին ծռուող մամիկին հարուածում էին, որպէսզի այնտեղ մնայ և ծարաւից չորանայ։ Ոտաբոբիկ, կարաւանին հետեւող խեղճ կանայք և մանուկներն անասելի չարչարանքների էին ենթարկւում. ո՞ւմ հոգն էր, թէ նրանց կրունկներն արիւնոտւում էին և ուռած ոտքերով կարելի չէր օրեր և օրեր քայլել։ Ո՞ւմ հոգն էր, թէ նրանք ուժասպառ էին դարձել և արդէն իսկ կեանքի և մահուան միջև վերջին բոպէներն էին ապրում։ Պէ՛տք էր քայլել, պէ՛տք էր շարժւել կարաւանների հետ։ Բայց դէպի ո՞ւր։

Այսպէս, անվերջ, գիւղերից, քաղաքներից տարագրւում էին հայերը, և կենդանի մնացողները քշւում էին դէպի անծանօթ ուղիներ։ Դաշտի վայրի խոտերն իսկ զլացւում էին նրանց և բնութեան պարգեւած ջուրն իսկ իրաւունք չունէին խմելու։ Պիտի քայլէին մահուան գբնով։ Գնում էին լացով և մինչև երկինք բարձրացող ճիչերով։ Դեր Զօրը վերջին կայանն էր նրանց. այնտեղ, հսկայ անապատում, փոսերի մէջ, ողջ-ողջ թաղում էին հայերին։ Անսիրտ և անգութ ոստիկաններն աննկարագրելի արարքներով սպանում էին բոլորին։

Աքսորի և տարագրութեան ճանապարհին հետեւող հայերի շրթներին վերադարձի երգեր չկային, լայնատարած լռութիւն, տխրութիւն և մահուան սպասումկար։ Այլևս կորսւած էր ամէն ինչ, տուն-տեղ, ստացւածք և հարստութիւն արդէն իսկ դարձել էին տաճիկների սեփականութիւնը։ Հայրենական տուն, ընտանեկան օջախ՝ հին պատմութիւն էր, ցրւում և տարագրւում էին նրանք։ Եփրատի ափերին, որպէս վերջին կայան, լեցրել էին աքսորւածներին, որոնց ողջ-ողջ գետն էին թափում և կամ գլուխը մարմնից անջատելով, հազար-հազարների դիակը յանձում էին ջրի յորձանքներին. օրերով արիւն էր հոսում Եփրատը։ Աւազ և ջուր հայերի արեամբ էին ներկւում։

Կարաւաններին հետեւում էին որբահաւաք անձեր և դժւարին պայմաններում հաւաքում հայորբուկներին։ Որբանոցները լեցւել էին արդէն, և որպէս վերջին մարդասիրական վերջին փորձ, աշխատում էին այլ երկրներ ուղարկել անհայր և անմայր երեխաներին։ Բազմաթիւ ազնւասիրտ օտարականներ սիրով որբ էին հաւաքում և պատսպարում։ Ամբողջ արևմտահայութիւնը դարձել էր մամիկների և որբերի հաւաքականութիւն։ Գթացող չկար, օգնող չկար։ Դիւանագիտական առևտուր էր կատարւում և բոլորի աչքի առաջ բնաջնջւում էր մի ամբողջ ժողովուրդ։

Տարագրութեան ճանապարհին մահուան սարսափն էր տիրում։ Մտրակի հարուածները, սւինների հարուածները սովորական դէպքեր էին դարձել։ Անպաշտպան ժողովուրդը սրախողխող էր լինում և սպանւում։ Այսպիսի ջարդ ու եղեռն չէր տեսել ամբողջ մարդկային պատմութիւնը։ Յուսահատ, հաշտւած մահուան գաղափարի հետ, նախընտրում էին բոպէ առաջ մեռնել և ազատւել անասելի չարչարանքներից։ Երիտասարդ կոյսերին տմարդի ձեւով չարչարում, խոշտանգում և սպանում էին, երեխաներին ծառերից էին կախում և սպանում։ Նրանց թիւը հասել էր արդէն մէկ միլիոնի։ Զորանալիք և խաւար դառնալիք այս աշխարհում կարծես միայն հայն էր մեղաւոր։

Պանդուխտը գոնէ վերադարձի յոյսեր ունէր իր հոգում, տարագրուողն ու աքսորուողը ոչ միայն չէր մըտածում վերադարձի մասին, այլ և անապահով վիճակում հերթի էր սպասում, թէ ե՞րբ իր արիւնն էլ պիտի խառնըւի անապատի աւազին և կամ Եփրատի ջրերին։

Մեծ Եղեռնը (խորհրդապատկեր)

Տարագրութեան ճանապարհը շարունակւում էր տակաւին երկրի սահմաններից էլ այն կողմ։ Մէկ միլիոն զոհերից յետոյ ողջ մնացողներին ցրում էին օտար աշխարհներ։ Այս անգամ նաւերով փոխադրում էին նրանց, և տանում, տեղաւորում նոր հորիզոնների տակ։ Դարձեալ քշւում էին հայերը։ Վերադարձի ո՛չ մի խօսք, ո՛չ մի յոյս։ Հիւրընկալ երկրները, ազդւած տեղի ունեցող պատահարներից, ընդունում և տեղ էին տալիս գաղթականներին։ Որբ ու անտէր ժողովուրդը տարագրութեան նոր ճանապարհի վրայ նոր երազներ էր հիւսում։ Ողբալի կացութեան մէջ, ապաւինած իր ոյժին, իր բազկին, նոր կայքեր էր հաստատում։ Տարագրուածների համար աշխատանքի նոր շրջան էր սկսւում։

Այլևս պարպւած էին երբեմնի հայաբնակ վայրերը։ Բազմաթիւ քաղաքներն ու գիւղերը դարձել էին աւերակ, փարթամ տները գրաււած էին և ընչաքաղց մարդիկ նստել էին հայի սրբազան օջախների վրայ։ Անապատներում կուտակւել էին անմեղ զոհերի գանկերը։ Ողջ մնացողները յանձնւած ճակատագրի խաղերին, փոխադրըւում էին՝ արցունքը աչքերին։ Լացում և ողբում էր հայ սիրտը։ Տարագրութիւններ, փոխադրութիւններ իրար էին յաջորդում։

Նոր հորիզոնների տակ, նոր երկրներում, նրանք տեսնում էին այլ մարդկանց ծիծաղները, խաղաղ ու անդորը կեանքը և ողբում իրենց խղճալի վիճակը։ Ամէն ինչ կորցրել էին, բացի յոյսից։ Եկել էին, իրենց հետ բերելով միայն բազկի ուժը, սեփական աշխատանքով նորը կերտելու կամքը։ Ճանապարհին, կարծես սաղմոսերգուն իրենց հետ իր տաղն էր երգում.

Նրանք գնում էին լալով
Եւ իրենց հետ տանում էին սերմեր,
Նրանք պիտի վերադառնան ցնծալով
Եւ իրենց հետ պիտի բերեն որաներ...

Լացով էր գնում ամբողջ գաղթական ժողովուրդը, հայրենիքի հողից խլւած, տարտղնւում էր հայ ժողովուրդը։ Պապենական հողը վերջնականապէս բռնագրաււած էր, և իրենք դարձել էին նոր կայքերի բնակիչ։ Ինչ որ դարերի ընթացքին կառուցւած էր որպէս Աստծոյ տուն, մշակոյթի տուն, նիւթական և բարոյական ամէն տեսակի հարստութիւններ, դանձեր, մնացել էին իրենց հայրենի-

քում։ Բնաջնջումի ահռելի գաղափարը գազանային ձևով իրագործել էր արդէն և սպանել ժողովրդի մեծագոյն տոկոսին։ Շէն ու բարգաւաճ քաղաքներն ու գիւղերը ամայացել էին և կատաղող բռնութեան ու տարագրութեան հետևանքով շիջել, քայքայել և մահացել էր ազգային կեանք բնորոշումով հասկացուած մեր հաւաքական կեանքը։

Աղէտը, եղեռնը և տարագրութիւնը լուութեան և մահուան սարսափ էին տարածել կենդանի մնացողների մէջ։ Երբ անորոշ ուղիներով փոխադրում էին նրանց, բոլորը մահուան տեսիլք ունէին, որովհետև տարագրութեան ընթացքին տեսել էին իրենց հարազատների կոտորածը և արցունքոտ աչքերով, յուսահատ և սարսափահար, ականատես էին եղել ամայի վայրերում հազարների հրկիզումին, ողջ-ողջ թաղմանը, կամ տեսել էին աւազների վրայ բերուած հազարաւոր դիակներ։ Զէ՞ որ նրանք Եփրատի եզերքին մահուան դուռն էին հասել և այնտեղ տեսել, թէ ինչպէս ջրերը ներկւում էին իրենց եղբայրների և քոյրերի արեամբ։ Զէ՞ որ նրանք սարսափի ու մահուան ճամբով քշել էին և այլևս յուսահատ, հանդարտութեամբ և հեզութեամբ մահուան էին սպասել։ Եւ հիմա, երէկի սարսափը իրենց հոգում, նրանք փոխադրւում էին այլ վայրեր։ Իրենց հետ տանում էին նահատակների կենդանի սերմերը։ Գնում էին լացով, կամքի և հաւատքի սերմերը իրենց հոգում։ Գնում էին արցունքով, իրենց հետ տանելով վերածաղկումի և վերակենդանացման սերմերը, եւ վստահ էին իրենց ոյժին, աշխատանքին եւ յաղթանակին։ Եւ բոլոր նրանք, որ գնացին արտասւելով, իրենց հետ կեանքի ու կենդանութեան սերմեր շալակած, այսօր արդէն տէ՛ր են որանների, արդարօրէն սպասում են վերադարձի, դարձեալ շէնացնելու համար իրենց աւերուած եւ քանդուած երկիրը։

Դարերի ընթացքում քանի-քանի անգամ տեղափոխութիւններ, գաղթեր և նոր հորիզոններ ճանաչեց հայ ժողովուրդը։ Այս քանիերո՞րդ անգամն է, որ հեռանում էր պապենական երկրից, հօրենական օջախից և իր ետևը թողնում ամբողջ մի աշխարհ, հայ ժողովրդի քրտինքով ու արիւնով շաղախուած։ Տարիների աշխատանքով շինում էր, ճոխացնում էր և յետոյ հարկադրւում էր լքել և այլ վայրեր գաղթել ու այնտեղ սկսել նոյն աշխատանքը։ Կեղեքումին ու ճնշումին հետևում էր բռնագաղթը։ Տարագրութեան ճանապարհին գոհւում և տառապում էր հայ ժողովուրդը։ Բայց կարծես, ամէն անգամ, շնորհիւ իր անընկճելի կամքի, լացով գնում էր, ուրախութեամբ նորը կառուցում և միշտ այն յոյսն ունէր, որ վրէժի փոխարէն պիտի կարողանայ ցնծալով վերադառնալ և իր հետ բերել որաներ։

Բայց 1915-ի Եղեռնին հետեւող տարագրութիւնն աննախընթաց երևոյթ էր մեր ամբողջ պատմութեան ընթացքին։ Նախկին գաղթերն ու տարագրութիւնները ինչքան էլ տառապալի և կսկծալի լինէին, այս աղէտը, սակայն, ամբողջութեամբ արեան ճանապարհ էր։ Մահուան ճանապարհ էր։ Զգիտենք թէ գնացողները բացի արցունքից և լացից իրենց հետ ի՞նչ էին տանում։ Սերմեր ունէի՞ն արդեօք, արդեօք կարողացե՞լ էին եաթաղանից ընտանեկան յիշատակներ վերցնել, թէ ամէն ինչ մոխրացած և աւերուած էր։ Վստահ ենք, թէ իրենց հետ տանում էին հայութեան սերմերը, կամքի և յոյսի սերմերը։ Արտասւելով գնացին և ամէն տեղ ահեցրին հայութեան ամենից հարազատ սերմերը, կառուցեցին նո՛ր, կերտեցին աւելի՛ փառահեղը, ցանեցին ու մեծացրին, և հիմա հրճւանքով դիտում են յիսուն տարւայ արդիւնքը։ Արդեօք, պիտի վերադառնա՞ն՝ որաներ շալակած։

Վստահ ենք, թէ տառապանքի ճանապարհով տար-

ւած սերմերը՝ որպէս ցաւի սերմեր, որպէս հայութեան ամենից առաքինի եւ գգայուն սերմերը, որպէս կամքի ու յոյսի սերմերը, մէկ խօսքով Ապրիլի 24-ը բարացուցող եւ քնորոշող սերմերը, տեւաբար պիտի մնան եւ նրանց միջոցով պիտի աճեն ու բարգաւաճեն ազգային ու մշակութային ամէն տեսակի գործերը։ Եւ այդ սերմերը ծնունդ պիտի տան որաներին, որոնք, վստահաբար, պիտի

լինեն դափնեպսակները նւաճումից նւաճում գնացող հայ ժողովրդի սքանչելի գաւակներին։

Այլեւս մահւան թափօրի տեղ յաղթական շքերթ կայ, լացի տեղ՝ ուրախութիւն, տարագրութեան եւ տառապանքի տեղ՝ նւաճում եւ ուրախութիւն։

Ցնծութեամբ եւ ուրախութեամբ քայլենք մինչեւ մեր յոյսերի իրականացումը։

ՀԱՏՈՒՑՈՒՄ

Օրհնեալ է փայտն՝ որով լինի արդարութիւն։

(ԻՄԱՍՏ. ԺԴ. 7)

ՀԱՏՈՒՑՈՒՄ

Ընդհանրացած և տարածված ըմբռնում է, որ երբ որեւիցէ անձնաւորութիւն վնաս պատճառի մէկ ուրիշի և մի օր էլ նրա հետ հաշւեյարդարի նստի, պիտի մտածի գոնէ նւազագոյն չափով հատուցանել կատարւած անարդարութիւնը։ Տարածւած իրողութիւն է նաեւ, որ երբ իրաւունքի խնդիր կայ և փոխադարձ գիջում չի կայանում, կողմերից ուժեղն է, որ դառնում է իրաւատէր։ Այլ բացատրութեամբ, իրաւունքը յափշտակւում է տկարի ձեռքից։ Անհատական և հաւաքական կեանքում ա՛յս է իրականութիւնը։

Սակայն, ազգերի յարաբերական կեանքում բոլորովին տարբեր է հատուցումի պարագան։ Պատմութիւնից գիտենք, թէ ընդարձակածաւալ կայսրութիւններն ու իշխանութիւնները հիմնւում են ուժեղ աշխարհակալների շնորհիւ։ Իշխանութեան գլուխը գտնւող անձը արշաւում է իր բանակներով, պատերազմ է տեղի ունենում և դրանից յետոյ յաղթող կողմը դառնում է նւաճւած երկրի տէրը, այնտեղ նշանակում է մի կառավարիչ, թողնում է մնայուն բանակ, և այսպիսով պարտւած կողմը դառնում է հպատակ, հարկատու և ենթակայ յաղթող

կողմին։ Այսպէս շարունակւում է երկրի գոյավիճակը, մինչեւ որ պարտւած կողմը կարողանայ իր ուժերը հաւաքել, ապստամբել և իր ազատութիւնը ձեռք բերելով, ազատ ու անկախ իշխանութիւն հռչակել։

Պատմութիւնից գիտենք նաեւ, որ դարերի ընթացքում որքան մեծ փոփոխութիւնների ենթարկւեց աշխարհի քարտէզը։ Որքա՜ն իշխաններ եկան, հսկայական կայսրութիւններ հաստատեցին և հետագային նւաճւած ազգերը դարձեալ կարողացան իրենց իրաւունքներին տէր կանգնելով՝ ազգային ինքնուրոյն պետութիւն հաստատել։

Վերջին շրջանի պատմութիւնից և անց ու դարձերից գիտենք նաեւ, թէ մեծ պետութիւնները զաղութային իշխանութիւններ հիմնեցին և բազմաթիւ երկրներ նրանց հովանաւորութեան ներքոյ մնացին տարիներ շարունակ, զաղութային վիճակում։ Մի պայծառ օր էլ իրաւունք տւեցին, ազատութիւն տւեցին, որ այդ երկրների բնակիչները դուրս գան ենթակայ վիճակից, ունենան իրենց անկախ պետութիւնը, բանակը, դրօշը և իրենք էլ ուրիշ պետութիւնների պէս դիւանագիտական և կամ այլ յարաբերութիւններ ստեղծեն իրենց հարեւանների հետ։ Բոլորին ծանօթ է, որ վերջին տարիներում բազմաթիւ ազգեր ազատագրւեցին գերեվարեալ վիճակից եւ կազմեցին առանձին պետութիւններ։ Եւ այս երեւոյթը շարունակւում է եւ մենք լսում ենք նորանոր պետութիւնների կազմութեան մասին։

Մեր խօսքը մասնաւորելով Օսմանեան կայսրութեան շուրջ, պատմութիւնից գիտենք, թէ երբ նա թուլութեան եւ տկարութեան նշաններ ցոյց տւեց, գերեվարւած ազգերը մեծ պետութիւնների օժանդակութեամբ տիրացան իրենց սեփական երկրի իշխանութեանը եւ կազմեցին անկախ պետութիւններ։ Այսպէս եղաւ պարա-

գան Բալկանեան ազգերի, յոյների և այլոց համար։ Նրանք գերազոյն զոհողութիւններով ձերբազատւեցին թրքական տիրապետութիւնից եւ հիմնեցին ազատ ու անկախ պետութիւններ։ Այդ շրջանին սկսւեց նաեւ Արեւելեան հարցը, որի մէջ մասնաւորաբար մեզ համար նշանակութիւն ստացաւ Հայկական Դատը եւ մինչեւ այսօր էլ, անշուշտ ո՛չ նախկին շրջանների ուժգնութեամբ, շարունակւում է, իր արդար լուծումն ստանալու համար։

Այդ շրջաններում, ի հետեւումն կատարւած հետապնդումների եւ աշխատանքների, ստորագրւեցին դաշնագրեր, յօդւածներ նախատեսւեցին հայ ժողովրդի կեանքի ապահովութեան, հայկական բարենորոգումների եւ մինչեւ իսկ ներքին ինքնավարութեան մասին։ «Երկաթէ շերեփ» ունեցողը դուրս էր գալիս ստրուկի, հպատակի վիճակից եւ դառնում էր ինքնիշխան։ Դժբախտաբար, այդ օրերին, երբ մեծ յոյսեր էինք կապել մեծ ազգերի դիւանագիտական ներկայացուցիչներին, տեղի ունեցան 1895 թւի Ջարդերը եւ 1915 թւի Եղեռնը։ Այն բոլոր քաղաքները, որոնց մեծամասնութիւնն էին կազմում հայերը, նախատեսւած եւ պատրաստւած ծրագրի համաձայն, անմարդկային ճնշումների ենթարկւեցին եւ տեղի ունեցան Ջարդեր ու տեղահանութիւններ։ Տաճիկ իշխանութեան միակ նպատակն էր հայ ազգը բնաջնջել, եւ մէկ անգամ ընդմիշտ փակել հայկական հարցը։

Արհաւիրքի այդ օրերին հիմնւեց նաեւ հայկական պետութիւն։ Հայաստանն ազատ ու անկախ հռչակւեց, բայց ոչ անշուշտ իր պատմական հողերի ամբողջական տարածութեան վրայ։ Այնուհետեւ Հայաստանը դարձաւ խորհրդային պետութիւն։ Ուիլսնեան ծրագրով նախատեսւած Հայաստանի տարածութիւնը մնաց երազ ու տեսիլ եւ այդ ուղղութեամբ կատարւած աշխատանքները որոշ արդիւնքի չհասան։ Մայր հայրենիքից մինչեւ հե-

ռաւոր գաղութների փոքրաթիւ հայութիւնն անձկանօք սպասում է մայր երկրից պոկուած և ուրիշ հողամասերի միացուած հողերի վերամիացման, իր զերազոյն ուրախութիւնն ու երջանկութիւնն ապրելու համար։ Թափուած արիւնը, մղուած մարտերը, կատարուած նահատակութիւնները և մասնաւորաբար մէկ միլիոն անմեղ զոհերը իրենց արդիւնաւորումը կարող են ստանալ այն ժամանակ, երբ իրագործուեն նրանց ապրումն ու տեսիլը։ Եւ վստահաբար, այդ էլ պիտի լինի արդարագոյն հատուցումը։



Կորող յաղթանակի (խորհրդապատկեր).

Յիսնամեակի այս օրերին ամենից աւելի տաք շնչով, եռանդով ու ջերմութեամբ խօսում ենք կատարուելիք հատուցման մասին։ Խօսում ու գրում ենք, թրթռացնելով մեր ազգային ապրումների ամենից աւելի նրբագոյն թելերը, սպասում ենք վարդահեղեղ արշալոյսին, գարնանային վառ ապրումներ և երջանիկ պահեր ունենալու համար։ Երկար տարիներ ազատագրական շարժումներով հետապնդել ենք զերազոյն նպատակ, վազել ենք տեսիլի ետեւից, ընթացել ենք երազների ճանապարհով և այսօր էլ նոյն իղձերով տոգորուած, պահանջում ենք իրաւո՛ւնք և հատուցո՛ւմ։

Բայց ի՞նչ է այս օրերի չոր իրականութիւնը։

Հայաստանը մայր կորիզն է հայութեան, և այնտեղ հաստատուած է խորհրդային պետութիւն։ Թրքահայաստանի այն վայրերը, որոնք պատմականօրէն մեր սեփականութիւնն են եղել, պարպուած են հայութիւնից, համարեա թէ աւերուած են բոլոր քաղաքները, տիրող իշխանութիւնն անխնամ վիճակում է թողել պատմական յուշարձաններն ու կոթողները և մասնաւորաբար վանքերն ու եկեղեցիները։ Արտասահմանում ծնուած ու մեծացած ներկայ հայ սերունդը գաղափար էլ չունի իր պապերի ծընընդավայրի մասին և երբե՛ք այն ապրումն ու զգացումը չունի, ինչ որ ունեն իր ծնողները, երբ Կիլիկիայի և կամ այլ վայրերի մասին է խօսւում։

Երբեմնի տարագիր և գաղթական հայերը արտասահմանի բազմաթիւ երկրներում ցրւելով, նախ և առաջ այդ երկրների քաղաքացին են դարձել, դարձել են կրօնական փոքրամասնութիւններ, կրօնական համայնքներ և այդ կերպով էլ կազմակերպել են իրենց ազգային-մշակութային կեանքը։ Սակայն, ամէն տեղ հայեցի շունչով լեցուած, հայրենասիրութեան սրբազան զգացումով հաղորդուած, իրաւատէրի հանգամանքում, միշտ պատնէշի վրայ հատուցում են պահանջում։

Կարելիութեան սահմաններում արդարացիօրէն հետապնդում ենք մեր դատը։ Հետապնդում ենք, երբ մեր գրպանում ունենք մեր պատկանած երկրի քաղաքացիական թուղթը, և բոլորի սրտում հայութեան շունչն ու

հոգին, անշէջ կրակը մեր սրբազան գաղափարների։ Այդ շունչի, կրակի և հոգու համար բազմահազար նահատակներ ենք տուել, և մէկ միլիոն նահատակներն էլ նոյն սրբազան գաղափարի զոհերն են։

Տակաւին, որպէս հողային հատուցման խնդիր, ունենք նաեւ «ներքին սահմանների ընդարձակում» բանաձեւի տակ ներկայացող դատը։ Այսինքն, այն վայրերը, որոնք մերն էին և այժմ անցել են խորհրդային այլ պետութիւնների հողային սահմանների մէջ և ուր հայերը մեծամասնութիւն են կազմում։

Առհասարակ, վերոյիշեալ չոր իրականութիւնների ու պայմանների մէջ ենք հետապնդում մեր դատը, ըստ պասելով արդարութեան արեգակի բերկրալի ճառագայթներին։

Այս օրերին, մասնաւորաբար, ակնդէտ սպասում ենք, թէ ի՞նչ կերպարանք պիտի ստանայ հայկական դատը, ի՞նչպէս պիտի ձեւաւորուի հատուցման խնդիրը։ Ժամանակին Արիմեան Հայրիկը թղթէ շերեփի փոխարէն երկաթեայ շերեփ էր առաջարկում, որն այս օրերին այլեւս հին օրերի ուժգնութիւնն ու տարողութիւնը չունի...

Տակաւին չմոռանանք, որ դիւանագիտական կեանքն էլ ինչպիսի՞ փոփոխութիւններ կրեց և մեր հարցին տեղեակ անձերը դարձան յիշատակներ։ Դեռ չենք անդրադառնում մեր ներքին կեանքի, միահամուռ ճիգերով աշխատելու, բանաձեւելու և պատշաճ ձեւով դիմումներ կատարելու մասին։

Ժամանակին միջազգային կեանքում գոյութիւն ունէր նաև հայ ազգը։ Երբ Արեւելեան հարցն էր արծարծուում, դիւանագիտական ներկայացուցիչները խօսում և վիճում էին նաեւ հայկական հարցի և բարենոգումների մասին։ Տենդոտ աշխատանք էր տարուում եւ

հայկական պատուիրակութիւնները յուշագրերով միշտ արթուն վիճակի մէջ էին պահում հայկական դատը։ Այժմ, միջազգային իրադարձութիւնների մէջ համարեա թէ գոյութիւն չունի հայկական դատը, կարծես մեծ պետութիւնների կողմից անտեսուած է այն։ Նուրբ գոյավիճակ է տիրում և հարցը բարդ կողմերով է ներկայանում։ Բէյրութի «Լօրիան» թերթի խմբագիրը շատ իրաւամբ նկատի ունենալով այս օրերին կատարուող շարժումը, հետեւեալ ընորոշումը տուեց.

«Հայկական հարցն ուզում է արթնանալ»։

Այս օրերի քաղաքական ներկայացուցիչները եւ մանաւանդ դիւանագիտական ներկայացուցիչները Միացեալ Ազգերի Կազմակերպութեան մէջ, չգիտենք թէ ինչքան գաղափար ունեն հայկական հարցի մասին։ Ցարատեւ եւ յարաճուն աշխատանքներ, մամուլի և հրատարակութեանց միջոցով կենդանի և արթուն կապ չստեղծեցին մեր եւ նրանց միջեւ։ Ցանախակի առիթներով կարելի չեղաւ վերարծարծել հայկական հարցը։ Տարուող աշխատանքներն էլ դժուարութիւնների բախեցին, և այսպիսով, աստիճանաբար, իր բովանդակութիւնից և ուժգնութիւնից զգալիօրէն պարպուեց, և ինչո՞ւ չէ, նաեւ քննեց հայկական խնդիրը։

Այժմ շատերի համար նշանակութիւն էլ չունի փոքրաթիւ հայ ժողովրդի վիճակն ու հարցը և հոծ թուով բարեմիտների համար հեքիաթի կերպարանք ունի կատարուած եղեռնը, մէկ միլիոն հայերի նահատակութիւնը։

Հայ մամուլում, բաւական ժամանակ է, որ արծարծուում է հայկական խնդիրը և բազմաթիւ յօդուածներ, ուսումնասիրութիւններ իրար են հրմշտկում։ Ամէն հայ այն յոյսն ունի, թէ մի օր բոլոր կոչերն ու առաջարկները կը բիւրեղանան, և պատասխանատու անձինք, հայութեան պահանջների համաձայն, պատշաճ ձեւով կը

կատարեն իրենց վստահած աշխատանքը։ Կարծիք յայտնելը բոլորի իրաւունքն է, բայց աշխատել և դիմումներ անելը ձեռնհաս և այդ գործի համար պաշտօնի կոչուած մարդկանց գործն է։ Բանաստեղծութիւնները, յօդուածները և ուսումնասիրութիւնները այն առաւելութիւնն ունեն, որ գէթ արթուն վիճակում են պահում հայ զանգուածին ի սփիւռս աշխարհի և յաճախակի առիթներով յիշեցնում են մեր իրաւունքը։ Ինչքա՜ն մխիթարական եւ շատ աւելի գործնական պիտի լինէր եթէ օտար մամուլում եւս յարմարագոյն առիթներով արծարծէր հայկական խնդիրը և միջազգային իրաւարարութեան մէջ արթուն վիճակում մնար։

Երբ խօսում ենք հատուցման մասին և իմանում ենք թէ ո՛ւմից ենք հատուցում պահանջում, արդարացիօրէն մտորում ենք նաեւ, թէ արդեօք նա՛ ի՞նչ է մտածում։ Մենք խօսում ենք մեր առնելիքի և ստանալիքի մասին, բայց ի՞նչ է ասում նա՝ իր տալիքի մասին։ Արհաւիրքի օրերին նա իր հարցը փակեց ջարդելով և տարագրելով։ Այնուհետեւ, երբ որ խօսեց հայկական ջարդերի մասին, նա այդ վերագրեց հայ ժողովրդի ապստամբութեան, թէ հայերը յաճախակի ապստամբութիւններով անհանդարտ վիճակ էին ստեղծել և այդ պատճառով էլ տեղի ունեցան նաեւ սպանութիւններ։ Չգիտենք նաեւ, թէ մինչեւ այսօր ուղղակի հաշուեյարդարի նստեցի՞նք մեր պարտատէրի հետ, պահանջողի դերի մէջ մտա՞նք, թէ միջնորդ դերակատարի դիմեցինք միայն։

Հետեւաբար, մեր պարտատէրը ո՛չ միայն հատուցանելու մասին չի մտածում, այլ եղածների մեղքն էլ բարդում է հայ ժողովրդի վրայ։ Կատարուածի համար ո՛չ միայն չեն ցաւում, այլ մոռացութեան տալուց յետոյ մինչեւ իսկ աշխատում են ուրանալ։ Գիտենք, որ երբ պատահական այցելուներ հիանում են Անիի և կամ պատմական այլ վայրերի ճարտարապետական յուշարձանների ու կոթողների վրայ, ինչպիսի՛ յուշագրութիւններ են գրում, և մանաւանդ ինչպիսի՛ պատասխաններ են լսում տեղացի ժողովրդի կողմից, երբ հարցնում են, թէ ո՞վքեր են շինել և ապրել այնտեղ։

Բայց ամենից սարսափելին և ամենից թարմագոյնը, որին արձագանգ հանդիսացան վերջերս բոլոր հայ օրաթերթերը, ՄԱԿում պատահած Կիպրոսի արտաքին գործոց նախարարի պոռթկումն էր և հայկական ջարդերի արծարծումի առթիւ իր հակառակորդի կատարած ուրացումն էր։ Կիպրոսի ներկայացուցիչը յիշեցնում է հայ ժողովրդի նկատմամբ կատարուած ցեղասպանութիւնը, իսկ իր հակառակորդը գարտուղի ճանապարհով փորձում է խուսափել և յայտնել թէ նման ջարդեր գոյութիւն չեն ունեցել։

Երբ մեր ներքին կեանքում մեզ համար վերարծարծում ենք հայկական խնդիրը և հատուցում ենք պահանջում, մեր դիմաց միջազգային կեանքում մեր հողը բռնագրաւողը իր աշխատանքով կարողանում է հողերի պահանջը յետ մղել տալ և կամ կատարուած ջարդերը վերագրել որպէս հետեւանք տեղի ունեցած ապստամբութիւնների։

Ահաւասիկ, այսպիսի դառն իրականութիւնների առաջ կանգնած, խօսում և գրում և մանաւանդ աշխատում ենք հատուցման մասին։

Յաւալի պատահարների ուրացումն է կատարւում, և մենք մեր իրաւունքը պաշտպանելու համար տկար ենք գտնւում։ Մեր բախտից էլ, պայմաններն ի նպաստ մեզ չեն ներկայանում և տարիներից ի վեր՝ կանգնել, մնացել ենք նոյն տեղում։

Մեր ուժերը ճիգաւորւում են, մեր աշխատանքները բարդանում, յանձնախմբերը շատանում և նոյն

նպատակին հասնելու համար ճանապարհները տարբերուում են։

Բայց ինչ էլ լինեն պայմանները, ինչ կացութիւն էլ տիրի, առանց իսկ նկատի ունենալու տարիների թաւալումը, ազգովին հատուցում ենք պահանջում։

Հատուցում բռնագրաւուած հողերի համար, հատուցում մէկ միլիոն նահատակների համար, հատուցում յափշտակուած հարստութիւնների համար, հատուցում կատարուած աւերածութիւնների համար։ Մէկ խօսքով՝ հատուցում կատարուած անլուր ցեղասպանութեան համար։

Մեր նպատակի համար ծով արիւն ենք թափել, սպասել ենք երկար տարիներ, և այսօր, տակաւին, մեր աչքի առաջ եռում և պղպջում է մեր նահատակների արիւնը։ Զոհուածների արիւնը պիտի շարունակի պղպջալ մինչեւ այն ժամանակ, երբ ամբողջական բաւարարութիւն և հատուցում ստանանք։

Նման վիճակի հասնելու համար անհրաժեշտ է իրաւազրկուած վիճակից դուրս գալ, բարձրանալ, հսկայանալ և Արարատի բարձունքից համայն մարդկութեան առաջ գոչել, կանչել, աղաղակել՝ ներեցինք քեզ, ո՛վ ցեղ բարբարոս։

Նախ հատուցում, յետոյ ներում։ Օրհնեալ է այն ճանապարհը, որով կը լինի արդարութիւն։



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	էջ
1.—Երկու խօսք	7
2.—Ապրիլեան ճգար	11
3.—Ուրուագծային պատմութիւն	17
4.—Ապրիլ 24	29
5.—Վասն հայրենեաց եւ վասն կրօնի ազատութեան	39
6.—Հայ ժողովրդի կոռուսը Ապրիլեան Եղեռնին	49
7.—Հայց. Եկեղեցու կոռուսը Ապրիլեան Եղեռնին	59
8.—Հայ մտաւորականութեան կոռուսը Ապրիլեան Եղեռնին	69
9.—Զմոռանանք	81
10.—Սպասում	95
11.—Տարագրութիւն	109
12.—Հատուցում	121

ՆՈՑՆ ՀԵՂԻՆԱԿԻՑ

ԽՕՍՔ ԺՈՂՈՎՐԴԻՆ, 1961, Թեհրան. (սպառված)

ԱԻԵՏԱՐԱՆԻ ՇՈՒՆՋՈՎ, 1962, Թեհրան. (սպառված)

ՀԱԻԱՏՔԻ ՀԱՐՑԸ ԱՐԴԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ, 1963, Թեհրան. (սպառված)